Թ՛ եւ չեմ արժան այդքան լընուլ գեր գան-
ձուք .
Սակայն դողաւ միայն վերկին մահացուք :
Դու լոկ մընաս ինձ յայսմհեան ինչ համայն ,
Իզձ , յոյս եւ կեանք , անմահութիւն դու
միայն ,
Ըզքեզ առնում եւ քեզ զիս տամ զամենայն :
Ե՛կ Յիսուս , ե՛կ , իտաւապեալ սիրտս հանգիր .
Ե՛կ , փարատեա զմահու մըթարքս եւ սճիր .
Ե՛կ հուսկ անգամ , եւ յաւիտեան միացիր :

Է.

Օձեր խղով զգրուի իմ. բաժանի քո սրպես
անասյակ արբեցոյց զիս :

Գոհանամ, Տէր, եւ օրհնեմ զբաւթ քո անձառ,
Որ սըրբեալ զկեանս յաւազանիդ ջուր սոյ-
ճառ,

Եւ յաւելէր զիւզդ անուշակ ինձ յօճառ.

Ընդ թըշնամիս հոգւոյ աալ մարտ անսայթաք,
Ընդ զօրութիւն դժոխոց, ընդ իզձ երկրահակ
Եւ ընդ անձին հրապոյրս երկնից հակառակ :

Եւ արդ ի հուակ ի սպառերազմ ահաւոր,
Յորում հանուրք խըմբին սոտիք հին եւ նոր,
Դարձեալ սընդես նսովին զանգամս մեղսակոր :

Ձէթս օրհնութեան՝ զոր ընդունիմս հաւատով՝
Սըրբեսցէ զչարս՝ զոր զբայութեանցըս գրըր-
գով

Գործեցի՝ նդդեմքս, եւ զյանցուածըս յորով
Օժուճնըս սուրբ ու անասական քո բաժակ՝
Չինեալ հանցեն զիս առ ոստին այն բանակ,

Որ ի նանիր սպասէ հոգւոյս յորս անյադ :

Ը.

Ողորմութիւն քո, Տէր, զնետ իմ կկեացի
զամենայն առաքս կկեաց իմաց :

Արդ ողջոյն ձեզ ամենայն հեաք մահացու,
Չոր թօթափեմ յանձնէ յօրհատըս սահու,
Ողջոյն քեզ վայր սրանդըխաութեան երկնաջու.

Ողջոյն ձեզ, հարք, եղբարք, սրդիք հարազապ,
Որոց հարկ Տեառն է կալ յինէն տարանջապ,
Չիսաղօթիւք յուղարկեցէք միշտ սպարասապ :

Շընորհս ինդրէ հոգիս այս՝ սչ արասուս,
Եւ թ՝ արասուէք՝ իբր արասուէաց ինքն
Յիսուս,

Տալ յարութիւն ի մեղանաց ու ի մահուս :
Հրաժարիմ, սուրբ եկեղեցի, արդ յերկրիս՝
Հանդերձեալ հուսոյ հանդիպել քեզ յանտիս

Ընդ փեսայիդ՝ յանասրականն հարսանիս.
Ուր հրաւիրեն ողորմութիւնք Տեառն անեղջ,
Տառապանացըս գործելով աստէն վերջ,

Օրհնել յամայր կեանս ի սըրբոցն ըզնա մէջ :

Թ.

Յոյց ինձ անասարճ յոր զկացից. զի առ
քեզ, Տէր, ամբարձի զաչս իմ :

Եւ արդ հատեալ իմ, Տէր, ի բնաւ աշխարհէս
Բուգէիւ ըով միով մինչ դեռ կապեալ եւս,
Ու ահա մըխիմ ի հանդերձեալն ասպարէս,

Յուշոյս շուարեալ ի մէջ կենաց եւ մահուս՝
 Ի հասանել խաւարին յէլըս շննոյս,
 Ըղձանապարհ գնալոյ ինձ ցոյց տէր Յիսուս:
 Ի դագարել ըղբայութեանցս եւ սըրտի:
 Յորժամ չառնու չազգի յերկրէ ինչ աստի,
 Պընդեա զմըտացըս հուսկ շարժուած վտա-
 րանդի:

Որ աւատիկ յեանն բարձեալ քեզ զաչկունս
 Առ որ ստեղծ իչք ես իւր մաղթէ ի լուսութիւնս,
 Յոյց զոր առ քեզն հանէ շաւիղ ի բարձունս:

Ժ.

Փրկիւս զիս ի բշխանաց խնոց, Տէր, զի զրկոյ
 ապառեկ ինձ արարի:

Քանզեւ ահա խուռըն հոգւոյս թշնամիք
 Իբրեւ անհաշա օրհասական գոռ մարտիկք՝
 Ձյեան շարժեն ինձ ընդդէմ զէն բըռնածիք:
 Չամենայն հէնս յարուցանէ սասանայ:

Դժժուք ի ճիգն յեանն կտրուստ ըսպառնայ,
 Եւ արհաւիրք գուրջն անվերջ զինչ չըզթայ:

Այնքան խիզախք եւ քինալիցք շուրջ գեւան,
 Մինչեւ կորզել ի քոյ ձեռաց իսկ յողան,
 Ի մի հարուած կրկնել ըզլէրս անգարման:

Տէր, որ զՊետրէ ի ջուրց ահեղ որկորուստ
 Յընկըլուզանէն եւ թափեցեր յանկարծուստ,
 Փրկեա՛ եւ զիս յայսբան ալեաց անփախուստ:

Ձե շքեղ ծանեայ ի կեանս իմ, Տէր, ապառէն,
 Մինչ յայլ յայլմէ լեալ միտքս յիշեալ արդ-
 չըբառէն,
 Դու Տէր, հայեաց յիս յանմուաց քո գիտէն:

ԺԱ.

Ոստ ինձ ստեղ զկամս քո, զի դու ես
 Աստուած իմ:

Ի սեամ սահուն եւ խուս երկուցն անդ կենաց
 Կալով հոգւոյս յերեր ի յոյս ու ի կասկած,
 Ըղքեզ միայն ունի կենաց կէտ, Աստուած:
 Տաքնապ մահու, զոր հեղէր յազգս Ադամայ,
 Թէպէտ գիւրեալ մահուամբ Փրկչիդ իմ կա-
 մայ:

Այլ աակաւին յօրէնք բնութեանս բըռնանայ:
 Տէր, զարհուրեալ զըզուրկ ի դառն ըմպակէդ,
 Թէպէտ ինքնին դառնացուցի զայնըր խէթ:
 Թէ բառնալոյ զայն յինէն չէ հնար, օգնեա՛
 դէթ:

Յիշեա զտաքնապ քո, զարեան քերան օրհասին,
 Ըզհոգս եւ զահ՛ որ ընդ քեզ իմ վասն անցին,
 Եւ զոր ընդ քեզ գոչեմս արդ զմեծ Եղիցին:
 Եղիցն կամք քո, Տէր կենաց եւ մահու, [հուս,
 Կամքդ այդ ըցցին յիս յերկրաւորս հուսկ պա-
 Ա՛հ, մեռանիմ... Յիսուս, ընկալ զհոգիս գու:

ԺԹ.

Հոգի քո սուրբ եւ բարի առաջնորդացե ինձ
ի յերկիր ուղիդ :

Եւ Հոգիդ սուրբ եւ բարի, նոյն հոգեւոր՝
Որ նորածնեալ յաւազանին զիս սըրբէր
Եւ եօթնարփին Հնորհօք ըզմեղս իմ քաւէր,
Կերպարանօք այսրէն իջեալ հեղազին՝
Ի առանեւք քան խապանն հեղեղին,
Նիւ Հաշտութեան ինձ բերցէ յելս ըստ մարմին.
Հոգի քո սուրբ՝ հոգւոյս ոչ միշտ սուրբ ելլո՛ւ՝
Առաջնորդեալ հանցէ յուղիղ յերկիր քոյ
Ի գունդաբունդ գժոխոց այսոց ի միջոյ.
Որ բարեխօսն է հեծութեանց միշտ անմուռն՝
Եւ մինչ հատեալ սպասի յինէն օգոյս շունչ,
Կացցէ եւ յայնժամ չթողուլ զիս անաէրունչ :

ԺԳ.

Վասն անուան քո, Տէր, կեցուցես զիս.
արդարաբնամբ քով նսեցես ի ներքինիս
զանձն իմ :

Եւ մինչ գըտնց զիս հոգի սոսկ յերկիր նոր,
Վայր անձանթ, միայնակ յատեան ահաւոր,
Եւ յանդիման մեղքս ինձ կացցեն բերբաւոր,

Երեւեսցի արդարութիւնն անպատրուակ,
Եւ ծանեայց, Տէր, ըզքեզ եւ զիս բովանդակ,
Եւ ապաքան դատեցայց զանձն իմ ինքնեակ,
Եւ չիշխեցից հայել ի դէմն քո, Աստուած,
Ո՛հ, յիշեա զնաչգ եւ զսէր, եւ դու յիս աչս
ած :

Հայեանց յօգիւ՛ եւ տես զանունդ անմուռաց :
Վասն անուան քո, Տէր դըթած մարդասէր,
Որ առաջին եւ վերջին յուչ կենացս եր,
Քանզի կարես՝ քաւեա, եւ զմեղս մի յիշեր :
Թէ պարտիցի նձ ինչ ոք՝ թողում էս կամաւ,
Եւ դու՛սա խոստմանդ՝ պարտուցս առ քեզ
Թո՛ղ անբաւ,
Մի արգէւոր զհօգիս ի բանա մեղսաբաւ :

ԺԴ.

Ողորմութեամբ քով սատակեցես
զրչեամիս իմ :

Ողորմութեամբդ՝ որով միայն արգ ժուժամ,
Որով սընդիւր հաւառքս երկբայ ժամէ ժամ,
Աւանց որոյ՝ գժօխք էր ինձ կեանքս յամերամ,
Ողորմութեամբ՝ որով զերծայ յոստիաց՝
Ընդ արհաւիրս անցեալ մահու եւ դիւաց,
Նոզին թափեա զհօգիս ու ի հուսկ վըսանդաց :
Ոչ մարմին աստ, ոչ հրապոյրք, չիք ոք սատան :
Արդարութիւն ըլի ու անաչառ դատաստան :

Այլ էս ի յոյս ու ի սէր քո կամ ապաստան :
 Չոր քան զամէն սիրես՝ ըզնոյն յիշեմ՝ գո՛ւթ :
 Աղէ Աստուած գըթած , յիշան զայն եւ դուզ :
 Շատ է հոգւոյս ցայս վայր ի քէն կալ գաղուծ :
 Արջայութեան բաց են քո գրուելք յարաժամ :
 Ահր քո ջընջեաց զարգարութեան ըն պատգամ
 Աստուած , բաժին իմ յաւիտեան , աւ քեզ
 դամ :
 Արի Աստուած իմ , աեսեալ զիս ի հեռուս ,
 Խընդան ի դիւս որդւոյդ երբեմն ի կորուստ ,
 Չպարանոցաւ հոգւոյս անկ գիւրկս հարուստ ,
 Պըճնեա ի զգեստ՝ զոր կաղմեցերդ յաւիտեանց ,
 Չաստուածութեանդ կընկք արդ հար յիս
 անանց :
 Կոչեա զորդիսդ երէց , ինքնին ի պար անց :
 Եկայք սըրբոց ժողովք , լինել խրատս ի Տէր ,
 Չի կորըստեանց ու ի մահունց զիս թափիաց
 սէր ,
 Ուրախ ընցուք եւ խընդացուք ի բոսս մեր .
 Չի անց դընաց ի մէնջ էրկիրն ըստուերած ,
 Յարեան Փրկչին ըււացեալ եղեաք անարած ,
 Աստուած ընդ մեզ յայամ հետէ , մէք յԱս-
 տուած :

1842

ԱՂՈԹՔ ՄԱՆԱՍԷԻ

Յաւիտենից ամենակալ Տէր Աստուած
 Աբրահամու , Իսահակայ , Յակոբայ
 Եւ համօրէն արդար նոցին զաւակաց ,
 Հայեաց գըթով ի մեղուցեալս քո ծառայ :
 Որ արարեր ըզտարր երկնից ըուսաւոր ,
 Եւ կաղմեցեր զէրկիր գոյիւք բիւրաւոր ,
 Ամենակալ Տէր
 Չմեղս իմ մի յիշեր :
 Դու՝ որ ծովու յար ծըփէլոյ՝ արկեր սանձ ,
 Ի խորս ալուց փշրէլ զալիս խորխտապանձ ,
 Եւ զահաւոր անուանդ հարեալ ըզկընկք՝
 Չաւազ տըկար բուռն յորձանացն եգեր նիգ .
 Ամենակալ Տէր ,
 Չմեղս իմ մի յիշեր :
 Յոյր երեսաց ահի ու աջոյդ յաղթական՝
 Տարերք ամէն ի գող հարեալ եւ սոսկան ,
 Ամենակալ Տէր ,
 Չմեղս իմ մի յիշեր :
 Որ էսգ անչափ վայելչութեամբ սքանչելեաց
 Եւ ահաւոր ի բարկութեան սպառնալեաց՝
 Չոր թօթափես յանցուցելոցն ի գըլուսի ,
 Բայց զարգարովք հեղուս ըզդուծ թաքաղցրա-
 բուս ,
 Ամենակալ Տէր
 Չմեղս իմ մի յիշեր :

Դու Տէր բարձրեալ, երկայնայմիտ եւ գըլած,

Որ շըղջանաս ընդ եղերունս մահացուաց

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Որ ոչ եգեր հարցն առաջնոց եւ ամբիծ՝

Զմեղաւորաց ասպառանդս թախիծ:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Այլ ինձ եգեր մեղուցեղոյ չարաչար:

Որոյ մեղաց խիճք ծովու չեն հաւասար:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Բեռինք մեղաց որ ըզգըխտովս դեղագէզ

Զակն ընդ երկնից յառեւ չնրերն ասպարէզ:

Զողորմութեան ինձ ընթեռնուլ ըզքարտէզ:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Քանզի կամաւ չար ի չարիս հիւսեցի:

Ըզգըթութիւնդ՝ յարգարց ցատուսն ինձ ամի:

Լճքի զպաշտօնդ դարձուցի քեզ ըզթիկունս:

Կանգնեալ գրօշեալս ըզխուռն եւ խեռ մուլ:

Ամենակալ Տէր [Թիւնս:
Զմեղս իմ մի յիշեր:

Այլ արդ բեկեալ սըրտիւ, գիտօք եւ հոգւով

Յերկիր խնարհ զանձն իմ հեղուամ ամթով:

Ի քաղցրութեանդ ասպարհեալ անձառ ծով:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Մեղայ աէր, մեղայ քեզ բիւրս եւ հաղար:

Խոստովանիմ ինձէն զչարեացս դուամար:

Յայդ եւ ցերեկ կալեալ յաչացս նըջմար:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Ո՛հ, ի խորոց սըրտիս առ քեզ, Տէր, դառնամ:

Թող ինձ Տէր, թող կուրացեղոյս մինչ յայս
ժամ

Եւ մի՛ ստ չարեաց իմնց կշռես: բարեխնամ:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Մի ցասնուցու յաւերժութիւն քո անմահ:

Մի զիս մտաներ յարգարութեան քուամ ի պահ:

Մի յանկախձան քեզ հեանս առնես դատապարտ:

Ո՛հ, Տէր, մի տար ինձ միզալոնս տարապարտ

Ըզքառնութեան բաժակ ոգւոց յուսահատ:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Զի դու Աստուած՝ աշխարողոց ես Աստուած:

Ողորմութեամբ պատես ըզիրտըս ցաւած:

Յիս տեր, չիցեմ թէպէտ արժան քոց շնորհաց:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Դարձ առ իս, Տէր, դարձ յանձն իմ, դարձ եւ

կեցո:

Զի սարըջացեալ բուռն հարկանեմ զոտից քո:

Զողորմութիւն կարգամ մինչ յելլս հոգւոյ:

Ամենակալ Տէր
Զմեղս իմ մի յիշեր:

Օրհնեցեց, Տէր, ըզքեզ ընդ սուրբքո զուարթ
Թուես,

Խուենիս ընդ նու ազացըն մատուցեալ անուշունս.
Եւ հնչեցցեն տիեզերք փառս Ի բարձունս:

1843

ԽԵՉԱԿ ՍՐՏԻ

Ի լոցավայր գաշախս արնկեալ սարագիր,
Յա հեղաշունչ հոգմաց կըքեալ ընդ երկիր,
Շըրջաբերեալ զեմով բընով զաղփաղփունս ॥
Ծընդեալ ծըփիմ՝ ես սերս արկար եւ նըկունս.
Յատակս օտար արմատակն լղիս կամի ॥
Հիւսիսայնոյն մասնեալ հոգմոյ չարկամի.
Հիւժեալ ծըփին ճասպուկ ճըղերս ըզծայրիւ,
Ձինչ լալական դուստնի վարսք դիսախուիւ.
Եւ Ի յայտոց օդոյս լինիմ ելէկոծ
Քան զեղենեայ տաշածն Ի մեծ ծովուն ծոց.
Կապեալ Եւրեայ զգողգողուն զիմ հովանի,
Թողու ծանակ առ բընութիւն հսլանի:
Ո՛հ, ո՞տարտամ սըրտիս արնկոյ միայնոյս
Նեցուկ կըթոտ կողին. ուստի՞ սըմա յոյս:—
Ահա զմեջակըն քառաթեւ գիտեմ էս.
Սեաւ նա համակ, այլ երեսօք յուսատես:
Երթ, Գըթուութիւն, էրթ առ ըղնաչգ ինձ նե-
ցուկ,
Բէր գիր յանութ, տուր առ կըթոտըս բազուկ.
Բունս առ բընոմիս այն անվըկանդ զօրեսցի,
Կոչկոճ՝ ճակատս Ի լըծակ անդր ամբարձցի:
Կամ սըրտահար հոգմ՝ վըտանդիս փախչ՝ Ի բաց,
Կամ ընդ խաչիս ես տտամանիմ անկասկած.
Մինչեւ ծագէ խաղողութեան տիւ յամպոց,
Եւ գագարեն տարերք կըրից հոգմակոծ:

Ի ԽԱՉԻ

Մ Ի Ա Յ Ն Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Աստուածակք վըշտաց բաղմաց ելին ընդ առաջ.
 Զարհուրեալ խուճապէի մոռացեալ ըզխաջ.
 Գիմեցի յայս, գիմեցի յայն, եւ չըկայր հուն,
 Տարածեալ կալեալ էր ըզհէաս անթ մահուն.
 Գարձայ ի վեր եւ ի վայր, եւն' անդ կառեալ
 կայր.
 Թարչէր թաքուսն իմ. փախուսան ի փա-
 խուսա գանայր.
 Ամենուստ խեթկեալ եւ տագնապեալ ցուօք
 խիստ,
 Արկի 'գոգսըն քառաթեւս եւ գըտի զհան-
 քիսա:
 Աստուածակք վըշտաց, կալէք արդ զամէն շաւիղ,
 Եգիտ սիրտ իմ ըզմիտի ճանապարհն սւղիղ:
 Ահ, ի քիրիս անդ ցաւաքին քըտի զցաւոյս զեղ'
 Նա ինձ յայսմ հեռէ կենաց, նա ինձ մահու
 տեղ:

ԵՐԿՈՒ ՎԱՇՏԲԵՆ ԵՐԿԵՍՍԻՈՒՄԲԻՔ

Արբայութեան երկնից բացեալ են գըրուիք.
 Ի ձայն նուազաց հրաւէր կարգան զւար-
 թունք'
 Յաջմէ կացեալ եւ յահէկէ սեմոցն այն,
 Ընդ որ չիք ելք, այլ մուտք եւ կայք յաւի-
 տեան:
 Մի դասն անդու ճընչեցուցեալ սէր անձառ'
 Կոչէ զարգարս յուրախուծութիւն անըստառ.
 Միւսոցն' հարեալ ըզըրրատառու ժամն ի յոյս'
 Մեղաւորաց աղչէ յորդոր եւ խրախոյս:
 Մի դասն երդէ. Սիրո՛ւք, սէր ձեր մընայ ձեզ.
 Եւ կարկառէ շուշանափայլ ըզբէ հէզ.
 Միւսըն նուագէ. Ապաշխարո՛ւք, առէք կեանս.
 Եւ քըքմացան մտաուցանէ պատմուճանս:
 Այմեղուծիւն՝ զինչ լուսակիրն աղանեակ'
 Կայ սրտաբըլուս հոգեացըն միշտ անբըճեակ.
 Ապաշխարող գընդին՝ Գուծ ինքն առաջնորդ.
 Ոչ անարասոր՝ երթայ զուղին երկնահարդ:
 Ո՛հ, նախանձիմ՝ ես ընդ արգարս սըբբասուն,
 Վրիպեալ գօրոյ կաճառակից աջ դասուն,
 Որք զզուէր դրօշ պարզեալ շարժեն զընծալից,
 Եւ թեւս առեալ սրանան ի թիւս վերելից:
 Ապաշխարողք պարզեն զյուսոյ ծիածան
 Որ յարտասուս մեղաաջնիջ հար զիւր նըշան,
 Ըզխաջն եպեալ յանուծ նեցուկ աննըկուն՝

Հեախ ոտիւք, այլ երազէն եռանդուն:
 Սաւաննի գրօջ Սիրոյնի սեամ լուսաճեմ. [ղէմ.
 Ու արդարք երգէն, « Հասաքի գրունս քո՛ Սա
 Ահա հանգիստ զոր ընարեցաքս յանձկութեան
 Եւ ի սըմն բնակեսցուք մէք յաւիտեան »:
 Ես ընդ Յուսոյն զինուորեալ լայն ընդ վաշտոււ,
 Ու ահա ժաման եղեալ մըտից կենսաառու,
 Գողեմ, զարտօսր իմ ջընջելով սիրակաթ,
 « Ուր յաղթուածիւնքս մահ, գըժսիք՝ ուրքո
 խոցի »:

1852

ԵՐԱՆՈՒԹԻՒՆԻ ԲՐԻՍՏՈՍԻ

Երանի՛ աղքատքն հոգւով,
 Յաղցից կենաց Թափուրք գուրվ:
 Նոցա արեւալ արբայուածիւն,
 Յաւերժական ժառանգութիւն:
 Երանի՛ սըգաւորաց՝
 Ընդ կիրս մարգկան եւ հոյլ չարեաց,
 Ընդ հուսոյ նոքա մտիթարեացին
 Յանձառ հըրձոււանս՝ փոխան Թախծին:
 Երանի՛ սըրտից հեղոց,
 Եւ անհըպարտ խոնարհ հոգւոց,
 Նոքա յերկրի վեճս անհամբոյր
 Ժառանգեսցեն բաժին ընդոյր:
 Երանի՛ ոյք քաղցեալ կան
 Եւ ծարաւիք արդարութեան,
 Ոյք մարմնաւոր չառնուռն ճաշակ,
 Երկինք հարցեն նոցին ըզյայր:
 Երանի՛ ողորմածաց,
 Որք ըստ կարի տան ձեռն եղբարց,
 Նոքա գըտցեն ողորմութիւն
 Յաճեազատ ու արդար աջոյն:
 Երանի՛ սըրտիւք սըրբոց,
 Չորս ոչ վառեաց ակտիցըն բոց,
 Նոքա տեսցեն զԱստուածն անտես
 Բազմեալ յանբիծ հոգեացն հանդէս:

Երանի հաշտարարաց,
Որոց իցէ հայր ինքն Աստուած.
Զի զհօւր սիրոյ զոր արկ յերկիր՝
Սփռեն ի սիրտըս կարեկիր:

Երանի հալածեւոց,
Վասնն պատշաճ ու արգար գործոց.
Աբբայու թեան երկնից բազմոյթ
Ժողովեսցէ զնոսին անբոյթ:

Երանի ձեզ, ս՛վ մարդիկ,
Թէ հալածեալ եւ նախատիք,
Եւ զըրպարտեալ ի բանըս սուս՝
Հանդուրժիցէք յիմ ըսպասուէք:

Յընծացէք և ուրախ լերուք
Զի վարձ բաղում յերկինս առնուք:
Բազում վըշտօք մըտցէ արգար
Յանկիչո կենացն յաւերժ դադար:

1853

ՀՈԳԻՍ ՅՈԺԱՐ Է

ՐԱՅՅ ՄԱՐՄԻՆՍ ՏԿԱՐ

Ահաւասիկ եմ, ս՛վ Տէր,
Ահաւասիկ եմ, ս՛վ սէր.
Առ է՛նչ կոչես ըզսիրտս այս
Ըզքս սպասեալս եւ ծառայս: —
Ի վիշտ, ի խաչ եւ ի ցաւ,
Որովք երկնից հուն բացաւ: —
Ահա հոգիս իմ յօժար.
Բայց, ս՛հ, մարմինս է տըկար:

Ընդ ճանապարհ յոր գընաս՝
Տէր, կամիմ գալ անբամբաս.
Թէպէտ եւ նեղ եւ անձուկ
Սըրտի ձողկաս եւ փըղձուկ.
Լըսեմ կոչոյդ, Ե՛կ զիմ հետ.
Եւ զանգիտեմ ետ ընդ ետ.
Քանզի հոգիս է յօժար.

Բայց, ս՛հ, մարմինըս տըկար:
Աւնում ըզուձ քո քաղցրիկ
Եւ ըզբեւնեակ փոքրոգիկ,
Եւ զոր բառնալ ինձ ընդ ուս
Խրատես ըստէս, տէր Յիսուս,
Ըզխաչ՝ որով երթաս դու,
Եւ սիրտս ընդ այն թինդ առնու.
Քանզի հոգիս է յօժար,

Բայց, ո՛հ, մարմինըս տրկար :
 Ասես, ի գիւտ ապառնուոյն
 Կորուսանել զանձն համբուն.
 Թողու՛՛լ զհեշտից առաքատս,
 Յարե՛նակցաց կալ յուրատս.
 Քեցել յանձնէ զսիրեկնս,
 Եւ կալ մեկնակ յաշխարհնս,
 Եւ իմ հոգին յոյդ յօժար,
 Բայց, ո՛հ, մարմինս է տրկար :
 Ի տերունիդ մըխեալ ուղ՛
 Եւ գըտանիմ յար տըրմուղ :
 Յոյս զեւ վարե միշտ յառաջ,
 Երկիւղ՝ սօխըս գանդաջ,
 Հեռուսա գիտեմ հաշտ զինչ ջուր,
 Եւ ի մօտեըս՝ բարկ հուր :
 Քանզի հոգին է յօժար
 Բայց, ո՛հ, մարմինըս տըկար :
 Տաս, եւ ցանկամ եւ գիմեմ,
 Ու ի տեսանեըն՝ հառաչեմ :
 Ի տըւողէդ յորդորիմ,
 Եւ ի տըրից խոտորիմ :
 Եւ ի փարեըն իմ ըզքեւ՝
 Հետեմ լըծոյ քում թեթեւ,
 Բանզի հոգին է յօժար,
 Բայց, ո՛հ, մարմինըս տըկար :
 Ահա եւ միշտ նոր եւ ցաւ
 Այժմիկ հանդէպ կառուցաւ,
 Որպէս անհարթ մի կոչկու
 Յորձէ լինի սիրտ խոժու.
 Եւ ես կամիմ տալ այնմ ուս

Ու առ քեզ գիմել միշտ Յիսուս :
 Հոգին յօժար է յօժար,
 Բայց, ո՛հ, մարմինըս տըկար :
 Կենցաղավար սքա 'նկերը
 Մին յերկիր հակ, միւսն յեթերը :
 Նեղի բնութիւն յերթաըն իւր,
 Կէսն ընդ ուղիղ, կէսն ընդ թիւր :
 Մին առ աճէն գիմագրաւ,
 Միւսն յամենէ սարանու բնաւ :
 Քանզի հոգին է յօժար :
 Բայց, ո՛հ, մարմինըս տըկար :
 Ահա մըտանդքս առաջի
 Կան իմ եդետլ առ խաչի :
 Բառնալ զտշխարհս ինձ առ քեւ՝
 Տէր իմ, թըւի յոյժ թեթեւ :
 Այլ ի բնութիւն կըրթեալ յիմ,
 Դարձեալ գողամ եւ կասիմ :
 Քանզի հոգին է յօժար,
 Բայց, ո՛հ, մարմինըս տըկար :
 Այլ ի ցաւոցս աստարէս՝
 Տէր, դու զ՛ամբօղ քո պընդես,
 Դու ինքն երթաս քայլաքաջ,
 Բարձեալ խաչիւ քո զիմ խաչ,
 Դառնաս, հայիս ու անես ձայն...
 Պատրաստ եմ քեւ՝ առ համոյն :
 Ահա հոգին է յօժար,
 Ահա մարմին անտըկար :

ՄԻՆԱՐ

Գթացաւ ի նա (Յիսուս) եւ ասէ...

ՄԻՆԱՐ:

ՂՈՒԿ.

Զի՞ ես խռովեալ, սիրա դու մուլար.

Ա՛հա Յիսուս. մի՛ լար, մի՛ լար:

Առ իմէ՞ ի ցաւս համահ

Ըղմէ՞ արտուենդդ այդ եւ բողոք.

Մեթէ չիցէ՞ վերաց կամահ,

Մեթէ չիցէ՞ քեզ ունկն սղոք.

Զի՞ ես խռովեալ, սիրա դու մուլար.

Ա՛հա Յիսուս. մի՛ լար, մի՛ լար:

Հասարակաց են վիշաք ու աղէտ,

Թէսպէս ի կերպըս բազմադէմ.

Տատասկախիտ արժաւ մեղ կէտ,

Հարկ է յարիւն դալ յոտին ձեմ:

Ո՞վ որ անվիշտ ի կենցաղում

Թէ եւ միոյ առուր կենօք.

Յանէծս ու ՚ի ցաւ ծընելում

Ոչ է վայել ապրել ան հոր:

Ոչ ի սփոփանըս վաղանցիկ

Կարգեցաւ քեզ սիրա ի ծոցերդ,

Այլ գործարան արամաղդէցիկ,

Բառնալ ըզկեանըս սահաւթի:

Իցեն հէշաք սուղ եւ վիշաք բաղում,

Բնութիւն սըկար եւ ցաւք հըզօր,

Գեղք յամրաբոյժ, վէրք ապառոււմ.

Այլ ոչ յերկար կեաս ասամոր:

Հովիտ մահուս սա Եւ ցաւոց,

Եւ քաւարան հընոյ անտին.

Մինչեւ անցեալ ընդ երկանց ծոց

Ոչ որ մըտցէ ի զուարճն Ադին:

Արդարութիւն կըշուեաց քեզ զայդ.

Այլ գըթութիւն թեթեւ արար.

Նա քաղցրացոյց քեզ զակամոյդ.

Խառնեալ ըզկամս իւր բարերար:

Զի՞ ես խռովեալ, սիրա դու մուլար.

Ա՛հա Յիսուս, մի՛ լար, մի՛ լար:

Նա շքո ետես կիրս ու էարկ գութ.

Յերկնից բարձանց վազեալ ի սէր՝ եմոււ

Եմոււ ընդ քո ի սպասեւ հարկ,

Եւ ժողովեաց յինքն ըզքո վեր:

Առեալ զբաժանի իւր երկնալիր՝

Ելից ըզցաւդ եւ զարտասուս,

Եւ զողալով՝ այլ բըռնալիր՝

Կալեալ էարբ ըզքո մըրուրս:

Արդ ըզբամիդ զայդ եւ կայլակ՝

Մատըռուակեալ ի քո Փրկէդ,

Յոր եւ սիրոյն խառն է ճաշակ,

Ոչ ըմպիցես դու անզանդէտ:

Բաջալերեանց, մերձ է Յիսուս.

Ըզդայ զցաւս, է քեզ կարեկից.

Ինքնին սըրբէ շքո արտասուս

Եւ սէր կաթէ ի քո թախիծ.

Մի այլ խռովիս, սիրա իմ մուլար,

Ա՛հա Յիսուս, մի՛ լար, մի՛ լար:

ԵՂԻՅԻՆ ԿԱՄՔ ՔՈ

Եղիցին կամքքո, Աստուած,
 Աստուած իմ, կամքքո եղիցին,
 Յորչափ սըրտիս իցէ զգացուած՝
 Կամքքո ի նմա կատարեսցին:
 Թէ չնորհ կեանս ինձ յերկար,
 Թէ հրամայես մահ առօրին,
 Թէ գիւր առնես ինձ Թէ զըժուար,
 Յամենայնի կամքքո լիցին,
 Թէ քաղցրիկ յիս ակնարկես
 Եւ Թէ շըջես զերեսդ ի բաց,
 Ինեմ զի սպառ ջառնես անտես,
 Միշտ եղիցին կամքքո, Աստուած:
 Այլ էս սիրա եմ փոքրոգի,
 Անձն խռովեալ, մարմին արկար,
 Եւ հանապաղ ի վառանդի,
 Իեզ խոստովան եղեց խոնարհ,
 Ձի զքս կամա եւեթ կամիմ,
 Այլ Թողուլ զինս՝ ածէ ինձ զէզը.
 Ձոր տամբս քեզ ինձ պահ ունիմ,
 Թեթեւ Թըւին խնդք, ցաւքս՝ անլերը,
 Վասըն քո կըրել ցանկամ,
 Այլ ի կըրեցըն դալ՝ սարանում,
 Պատրաստ ի կոչ, ի գործ տարտամ,
 Կարծեմ զիմ խաչն յոյժ սպառում:

Աւագիկ, Տէր, վիշաք սըրտիս,
 Ձորոց գիտես ըզչափ եւ Թիւ.
 Դոյշն են ինչ սաքին առ իմ սարախս,
 Եւ տակաւին սոսկամ ահիւ:
 Տրամուծեան պատին ամբոխք
 Եւ ծանրագոյն ցաւք յաջորդին.
 Փոխեն զիրար վիշաք անփոփոխք,
 Սակայն, ո՛վ տէր, կամք քո լիցին:
 Յորժամ զուրկ ի դըրդալեաց,
 Իցէ Թափուր սիրտս ի յուսոյ,
 Եւ բարձցի դիւր ըսփոփանաց,
 Տէր, եղիցին եւ անդ կամք քո:
 Ի նուազել հիւժոյ սըրտիս
 Մինչ այցելուք իւր չերեւին,
 Եւ վերք բացցեն ըզհին ըսպիս,
 Աստուած դըժած, կամք քո լիցին:
 Ինչոն են կիրք, ծանր է այս ժամ.
 Դառն է բոժակս, խաչս ահագին.
 Դիմեմ գողմամբ, սիրով բառնամ...
 Տէր, զինչ կամիս՝ կամք քո լիցին:

ՍԻՐԵՑԻՅ ԶՔԵԶ

ՏԵՐ ԶՕՐՈՒԹԻՒՆ ԻՄ

Սերեցնց ըզքեզ, Աստուած,
 Ըզքեզ Աստուած իմ, սերեցնց:
 Ար չեւ իմ լեւալ՝ արարեր այց,
 Քեզ մինչեւ եմս՝ այց արարից:
 Սերեցնց ըզքեզ խայտայտ,
 Ար զիս սիրեալ էւ սիրեալ միշտ:
 Եւ յիշեցնց ըզքեզ անձառ՝
 Յուրախութեան իմ եւ ի վիշտ:
 Սերեցնց ըզքեզ, իմ Տէր,
 Վստեալ ի հուրդ ամենակեզ:
 Յորչափ ըզքայ սիրաս այս ըզսէր՝
 Ճենձերեսցի անդուլ ի քեզ:
 Հաստատեալ է սիրտս ի սէր,
 Խընդրէ զհաստիջն իւր եւ զհանգիստ:
 Թէ մուսացի երեք սա զսէր,
 Լոյս իւր խաւար, կեանքն իցէ խիստ:
 Զինչ յերկրի կայ իմ բաժին՝
 Զերծ յաղիակն իւր ապառուս:
 Կամ զինչ յերկինս իմ յոյս յեանն՝
 Թէ ոչ, Աստուած, սէրդ անպատում:
 Եւ ահա չաչ աստուածութեան
 Սէր միայն կեանք եւ ժամանակ,
 Յաւիտեանից ի յաւիտեան
 Սիրով բաւեա միեզինակ.

Թաթաւեալ սըրսկիս սիրով,
 Եւ անէակք դան յերեւոյթ.
 Հայիս ակորժ աչացդ հըրով,
 Երնչէն ասրերք կարծրաբընոյթ.
 Արձակես ի քէն այեր,
 Հոգւով ընու ձուլածն երկրի.
 Սըփուես ի սիրա ըզսուրբ քո սէր,
 Եւ մարդ՝ հաստչին հաւասարի:
 Արարած էւ էս եմ խուն,
 Այլ իմանամ զԱստուածդ համբուն.
 Փոքու սըրսիւս՝ յալիս անհուն
 Թեւեմ ըբուչիմ ի սէրն ի բուն:
 Զառնայն էս քեւ ունիմ,
 Եւ զըզձալիս՝ ի քէն յուսամ.
 Եւ զսր չանկան իսկ ի սիրա իմ
 Դու խոստանաս յանուտ պատգամ:
 Առաջի քո զիս եգեր,
 Եւ հանապազ խոկաս յոգիս.
 Աչք քո անդուլ հեղուն յիս սէր.
 Աստուած, կապեալ էս դու նոք սըրտիս:
 Ա՛յ կապանք հրաշահիւսակ,
 Զսր ոչ աճեւ կարեն ըբուռնք,
 Ոչ լուծանել սուր եւ կըրակ,
 Ոչ դէմ ունել քոս զօրութիւնք:
 Բաւական էս ինձ դու, Տէր,
 Ոչ այլ խընդրեմ ոչ այլ ցանկամ.
 Ի քէն եւ անդր ոչ կամիմ սէր,
 Քեւ եւ ըզքեւ փարեալ միշտ կամ:
 Սիրեւք մի էւս իցեն.
 Մի է եւեթ իմ սիրելին.

Սիրաք մաքուրք շուրջ ըզմեօք կայեն ,
 Այլ մի զխորան քո , Տէր , կալցին :
 Զամենայն կամիմ յԱստուած ,
 Աստուած , ըզքեզ քան զամենայն .
 Թէպէտ կեցից թէպէտ մեռայց ,
 Եւ սիրեցից ըզքեզ միայն :

ՅՈՐԴՈՐԱԿ

Տ Ի Ր Ա Ն Ո Ւ Է Ր Ա Ն Ձ Ի Ն

Աստուծոյ եմ ես ձօնեալ . Աստուած բաժին իմ
 յաւիտեան .
 Բարիք կենցաղականք՝ հրապոյրք սնտաիք եւ
 հեաք կորստեան :
 Գին քրտանց արքայութիւն՝ պահանջէ ջան եւ
 ժոյժ անհատ .
 Դուռն անձուկ , ուղին նեղու , այլ էլքն անխեթ ,
 յանգոյր , աղաա :
 Երթ , անձն իմ , երթ ընդ ճանապարհ՝ զոր կո
 խեաց ինքն Յիսուս հեղիկ .
 Զօրք երկնից լուսաշաւիղ քեզ ահա հարգք զուզ
 ընթացիկք .
 Էնն՝ Աստուած՝ միշտ քաջալեր առաքինեաց եւ օ
 ժընդակ .
 Ընդ քեզ Քրիստոս , քո հայր , քո վարդապետ , քո
 օրինակ .
 Թագ կենաց հիւսեալ անսուս համբերողաց մին
 չև ի սպաս :
 Ժամանակս երթոյ երսդ ի յաւիտեանս անդր
 անոտանա :
 Ի բաց յինէն աշխարհայինք , որ ուրացայ զաշ
 խարհ ողջոյն .
 Լըքի զտուն եզճնողս , ձեռս ամբարձիւ երկինք
 իմ բոյն .

Խորհրդակից աստուածայնոց եւ ճմարտին
 եղէ հասու,
 Թայրածածան կենօք լաղէլ ընդ որոգայթ մըլըր
 եալ մահու:
 Կեննք եմ Յիսուս, լէր կենակից յամայր կենօք
 քեզ նուիրելոյս:
 Հաղ ընդ հաղ ի սայթաքէլ սրտիս, յերկրայս մըլ
 տաց՝ լէր լոյս:
 Զայն որ զհէա քո զիս ձգեաց՝ արա հոգւոյս միշտ
 լըսելի:
 Կամար լուսոյդ՝ ջահեցէ յեղր իմոց կենաց,
 ծով բազմալի:
 Ճրագ պայծառ՝ կանոնքն անվրէպք՝ կաղզուրեւս,
 ցեն զտա իմ՝ կըթոտ:
 Մարիամ՝ մայր Տեառն եւ իմ՝ ապաստանի ծոց
 ինձ գըթոտ:
 Յոյս իմ Յիսուս, աւաջնորդեան, եւ ընթացայց
 միշտ զուգահէտ,
 Կուիրական աչք ի բարձունս, ձեռն ըզմաձալ՝
 որ զկենացահէտ՝
 Եսելի շուշանափայլ ընդ կուսական՝ հորդեցէ
 դաշտ,
 Ուսեալ ի քէն զաղքաուութեան եւ հըլութեան
 ձրգէլ լուծ հաշտ:
 Զարակիր կենաց բեռինք՝ դովաւ լիցին ինձ փոքր
 ողի,
 Պարաւանդեալ ՚ի սամեաէս խաչեք՝ լանջացըս
 փառք արդի:
 Զան ի ջան տուր երտդէլ յորրստօրեայն ինձ ի
 ճրգունս՝

Ռահայնուն յարշարութեան կիտի՝ նդ փուչ
 եւ ծաղկունս:
 Սիրալաց սրտիւ, հրավառ հոգւով, ըրբօք եր-
 կնադիտակ:
 Վաղվաղէլ իսայտալ ի չու՝ յԵրուսաղէմ՝ լուսա-
 քաղաք:
 Տուր եւ առ, Տէր, զոր կամիս, մի՛ զքեզ միայն
 բառնար յինէն:
 Բամից քոց սիրելեաց՝ հասս ղձառայս՝ որ քեզ
 սպասէն:
 Յնծալ հրճուել անձառ տեսլեանքք յեա՝ մըրցե-
 լոյ՝ նդ կենաց տարերս,
 Խ իսեւ ըզցող արտասուացս ընդ քոյանիւթ
 պսակացք ընդ յեռս:
 Փառաւորել զՀայրդ հաստիւ, զՈրդիդ փրկիւ,
 զՀոգիդ ինամիս,
 Քոյննակրօն կարգաւս՝ առ քեզ հասաներն՝ սէր
 անկարօտ:

... ցրան ՚նոյ չտ արք . Երժանտոս, ի ցրան ՚նոյ
: ցրանալ սոյք ոց սոյքոնք ի անձնալ

ՀՈՊԻ ԵՒ ՍԻՐՏ

ՀԱՄԱՉԱՅՆԻ Ի ԳՈՂԳՈՒԹՍ


... անձնալ սոյք ոց սոյքոնք ի անձնալ

- Հ. Անձըն ցաւած, յով գարձցիս հոգւոյդ Ի վերո՞
- Ս. Ի վեր :
- Հ. Ե՛կ սիրա իմ, Է՛կ Ի Գողգոթ, կալ մեա ԿԱՄ.
- Ս. ԿԱՄ :
- Հ. Ե՛կ երթիցուք առ Յիսուս լըսել պատգամ.
- Ս. ԳԱՄ :
- Հ. Որ Ի խաչին վասն իմ զսիրա իւր աղեկեջ.
- Ս. Եկեջ :
- Հ. Եւ գթա՛հայեաց յառեալ յիս անտուտաՍԷՐ
- Ս. ՍԷՐ :
- Հ. Իցէ՞ ինչ շատ տալ ըզսէր որ կայ յոգւ ՈՋ.
- Ս. ՈՋ :
- Հ. Եթէ ձօնեալ զանձն իմ՝ տա՞ց ՈՂՋԱՄԻՒՆՆԱՅ.
- Ս. ՈՂՋ ԱՄԻՒՆՆԱՅ :
- Հ. Եւ առ սիրան իւր՝ որ առ իմըս տաՍԱՆԻ.
- Ս. ՏԱՆԻ :
- Հ. Օ՛ն հանգիցուք Ի պարզուած այդըմ՝ ԺԱՅՏԻ.
- Ս. ՄՅՏԻ :
- Հ. Քանզի Յիսուս զիս հանդոյն բարե ԿԱՄԻ,
- Ս. ԿԱՄԻ :
- Հ. Ձի զմեղսառիթ մէրս անդէն փեռե ԿԵՑԻՑ,
- Ս. ԿԵՑԻՑ :

- Հ. Եւ թողից զանձն Ի դըրկացն իւր պարսիսն Կ՛
- Ս. ԱԻՍԻԿ :
- Հ. Դեղ թաղճանաց եւ զլճման գտից պատրԱՍՏ.
- Ս. ԱՍՏ :
- Հ. Եւ արասցէ ինձ Յիսուս յորժամ մեռԱՅՑ,
- Ս. ԱՅՑ :
- Հ. Հանգա, ո՛վ սիրա ըզփրկէին մեռցուք ըզմ՝ Ա՛Հ.
- Ս. Ա՛Հ :
- Հ. Եւ ընդ նըմին կեցցուք կեանս երանԱԻՏ.
- Ս. ՅԱԻՏ :
- Հ. Աւասիկ էմ, Տէր, զնա՛րդ ԳՈ ԿԱՄԻ ՍԷՐ,
- Ս. ԳՈ ԿԱՄ Ի ՍԷՐ :

1844

Հարկաւոր է հարկաւոր



ՏՆՕՐԻՆԱԿԱՆՔ



Ի ԳԻՇՆԵՐԻ ԾՆՆՆՏԵԱՆ ՏԵԱՌՆ

Ո՛հ Տէր, ընդէր տըւաւ ինձ՝

Սիրտ՝ ասկէ ըստ քան պըղինձ՝

Որ ճօճէրով յօդս ի թունդ՝

Հնչէ զանձաւ քո Վընունդ՝

Քաղցրածաւալ ի ղօղանջ՝

Սիրոյ հասեալ սուրբ ճաճանջ,

Ըզպար զուարթնոց ի յերկնից՝

Յերկրէ կոչէ զսիրտս անբիծ

Սու տենչալին այն մըսուր,

Քո՛ եւ հողւոց խանձարուր .

Մինչ էս ծառայս ու խտաղբուժ

Ի քուն շըրջե՛մ զաչս անժուժ :

Մի մեղս ինձ՝ հէղդ իմ Աստուած ,

Մի գրէր զայս կիրս ամօթխած .

Երգմնեցուցեալ զբէղ յողիդ ,

Յաչքդ աղու , յայտ գեռափթիթ ,

Յանմեղ ձեռացըդ կարկառ .

ԳՅԱՄԿԱՅԻՅՈՒՅՑ

Հոգեխօսիկդ ի բարբառ ,
 Եւ մանաւանդ յարտասուս
 Յայսմ հետէ յիմ միակ յոյս :
 Գիտես , Տէր , իղձ ոչ նընջէ ,
 Վըկայ պըղինձն որ հնչէ .
 Այլ մոռացօնք Թէ ունի ,
 Թէ քուն յինէն զիս տանի ,
 Դու ինձ այցել մ'առնէր զանց ,
 Որ վասն իմ դատք ի բարձանց .
 Զօնեմ Փրկչիդ եկելոյ
 Զերախայրիս իմ հոգւոյ ,
 Զհաւատս , ըզոյս եւ ըզսէր ,
 Կիսամասնեայ խուն նըւէր .
 Զոր եւ խոնարհ արգագիւր՝
 Սիրտ ի վէր աչք ի յերկիր
 Երկրպագեալ՝ ոտիցդ հուպ
 Դընեմ սըրտիւ ալէճուփ :
 Եւ դու իմ յոյս աներկբայ ,
 Մայր կենաց , առ զյոս յընծայ .
 Մատո որդւոյդ համբուսրիւ
 Մինչեւ ծագէ զուարթըն տիւ ,
 Որ Յիսուսիս լին վկայ
 Թէ սպասեակ սիրան արթուն կայ :

1845

ՊՍԵՐԲՂ ՀՈՎՈՒՍՅ

Ի ԾՆՆԴԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ



Հովիի ԵՆՐ

Խաղաղական լուռ գիշեր ,
 Որ ընդ աչաց սիրտս ի վեր
 Զըգես ի վայր հրաշագործ ,
 Վայր Աստուծոյ հարց մերոց .
 Ոսկեակ աստեղք քո մաքուր
 Թէպէտ անշունչք Թէպէտ լուռ ,
 Կամարաձեւ յերկնից լար
 Զինչ մեղ հընչեն անդագար .
 Եւ զինչ հէզիկ ամպավար
 Քաղցրածաւալ ցօղոյս շար
 Ի Թերթ ծաղկանց մեղրահօս .
 Բայց զԱստուծոյ մերոյ շնորհս :
 Զո՛վ այլ երգէ ի մայրի
 Երաժշտակ գիշերի
 Թէ ոչ ըղբեղ՝ Աստուած մեր ,
 Որ ըզհանուրս քեւ լըցեր .
 Եւ զո՞յր անուն՝ խորք խորոց
 Այս հեղեղաց փրփրեղոց
 Գանչէն բըլըոց եւ հովտաց
 Ի կարկաջանս սահանաց :

Ըղբեղ օրհնէ Տէր համայն,
Ըղբեղ օրհնեմք միածայն
Եւ մէք հովիւքս խոնարհ,
Ըղբեղ, Աստուած բարերար:

ՈՄՆ Ի ՀՈՎԻՏՅ

Սեաւ գիշերոյ վարագոյր
Յանկարծ փոխի յոսկեթոյր,
Յայն ինչ լուսնին երկնաջու
Գիւլ յԱհեբմնի գալ բարձու,
Զինչ այս փայլումն ընդ այեր,
Գերքան ըզաւր լուսաբեր:

ՍՅԼ ՀՈՎԻՒ

Սհա զուարթուն երկնային
Դիտեմ յալիս օդային,
Շուշանափայլ ի թեւս իւր
Յեռեալ աստեղս ոսկեթոյր,
Եւ Ենգադդեան վարդենիս
Ի ճակատուն հոսոյսիս: ...
Այ, մեանիմք, ո՛հ հրեշտակ,
Զինչ մեզ յերկնից հրովարտակ:

ՀՐԵՇՏՍԿ

Խաղաղութիւնն ձեզ, հովիւք,
Մի զանգիտէք, մի խռովէք,
Բերեալ գամ ձեզ աւետիս

Մէ՛ծ քան զամէն աւետիս,
Զի տեր՝ Աստուածն յաւետեանց՝
Տէր՝ արարեալ զերկնիւք զանց,
Յիւրոց փառաց տարագէմ՝
Պանդըխտի յարկ ձեր նըսեմ:
Որում ձեր հարք սպասեին
Հաս Մեսիայն կուսածին,
Յանբան հօտից ի մարիդ,
Գըսջիք զԱստուած ճշմարիտ,
Իբրեւ մանուկ աղիկիար
Եկեալ ընդ յարգ եւ ընդ խար:

ՀՈՎԻՒ

Ս՛ա՛, քանի՛ երաբունք
Թափին յերկնից սուրբ զուարթունք,
Լուսափետուր սաւառնին
Թեւապարեալք առ մարին,
Ո՛հ, քանի՛ քաղցր եղանակ,
Յոր հընչին վայրքս հասարակ:

ԶՈՒՍԻԹՈՒՆԲ

Փառք ի բարձունս Աստուծոյ
Յերկնից յերկիր բնակելոյ,
Փառք Ամմահին ի բարձունս՝
Որ ի խոնարհ արկ զաչկունս,
Յերկիր համայն հաշտութիւն
Սփռեսցի՝ նգ լոյս արեւունս,
Եւ հաճութեան ի մարդիկ

Որ սարադրեաց ըղտիեղերս լայնալիր,
 Մինչ ի վըհեն հանէր զերկին եւ զերկիր,
 Որ զայս լուսին կախեաց լապտեր մըթու-
 թեանց.
 Դու այն էս տէր, որ ի ֆորեր վըհարանձ,
 Բոցատերէն ի թուփն իջէր դոշնադիր,
 Որ յատեղաց քար ի Յաղէի տեղայիր,
 Որ վէմն ի ջուրց կառուցեր, ջուրս ի քարանց.
 Դու այն էս տէր՝ որ ի բաղուկ շանթակէզ
 Ի փող հըրց կտուր օրէնս Յանովայ,
 Դու՛ որ հատեր եւ ըղխալինքս կտուր մեզ:
 Այս, Աստուած ըզքէզ անէն բերք հրաջեայ,
 Գիրկսիրալիր բաղիացդ Աստուած սակ զքէզ
 Եւ սիրա՛ ձրգող սըրտիցս՝ Աստուած ինքն է
 դա:

ՀՈՎԻԻ

Ձինչ զիմահալ ահեղ ձեռինն Աստուծոյ
 Պատգամ ի ձէնջ խնդրեմ երկինքս, գողէք
 դուք:
 Աստուած՝ հանուրց եւսեր յաղթող Աստու-
 ծոյ,
 Եկայք հովիւք՝ ըզտէր փըրկչին երգեսցուք:
 Վասն սիրոյ էջ ի ծոցոյն հայրենի,
 Ի մուր հօտից զօրեալ ի խորձ ողորմուկ,
 Փափուկ կրանն ի շունչ դրաստուց ջերանի.
 Եկայք հովիւք ըզտէր փըրկչին երգեսցուք:
 Յորոյ յաջաց շանթ հատանէր ի զամբար՝
 Եթ շեթ ծորին մարդարտաախ արատուք,
 Սիրամահացու ի՛նդ այսանըզայ խիսակ քար.
 Եկայք հովիւք, ըզտէր փըրկչին երգեսցուք:

ՀՈՎԻԻ ԾԵՐ

Այսօր ընուն սրտգամք անսլաց.
 Խաղաղութիւն այժմիկ հընէեաց.
 Մըկունդ ու ասպար զէնք ոխակալ
 Սուր եւ նիղակ արկցին ի հալ.
 Երկաթ քինուն կըսի մանգաղ,
 Ելանէ մարդ ի հունձ խաղաղ.
 Չի բոցաշունչ ստլարմբակ
 Ոչ այլ լըսէ խաղմի նըւադ,
 Եղին ճըգանց բաժանակից
 Համբուրէ զսէզ յեզըր խաղից:
 Ի մարդ յուռթի անկեալ ընդ ջոկ
 Գառն եւ առիւծ քըծնին ամօք.
 Գայլ ընդ մօբույ համբոյր ընկեր
 Ի մի ճարակ խայտայ ի բլեր.
 Եւ օձ ճապուկ ի մէջ ծաղկանց
 Առանց մեղաց բանայ իւր անց.
 Ի ծակ իժից մանուկ մատաղ
 Մտան արկանէ դիմօք ծիծաղ:
 Համայն հաստուածք ընկերահաշտ
 Օրհնեն զհաստիչըն սիրասպաշտ.
 Որ նորողէն ըզբընութիւն
 Երնէալ հանուրց խաղաղութիւն:
 Ընդ մեզ Աստուած, տուք ձայն զըւարթ
 Բոլորեցէք շուշանս ընդ վարդ,
 Հովուականացս ամէք դրասանդ,
 Չի այս էն մուրք յուրեթականք.
 Սէրն երկխաւոր աստ է բաղմած.
 Իմա՛ երկինք, զի՛նդ մեզ Աստուած:

ՍՅԼ ՀՈՎԻԻ

Աստուած ասէ աչքն ըզնա
 Որ յարտասուեաց լըճանայ,
 Եւ ի բըբէն նաղենի
 Սիրտ իմ ի խօր հարկանի.
 Աստուած ասէ եւ ժըպիտ՝
 Որ ի շըրթանցըն փըթիթ,
 Յորմէ լուռ իմն աւեախս
 Ասէ փրկել զիմ հոգես.
 Աստուած ասեն եւ բաղուկբ
 Որ աղանեաց պէս փափուկբ
 Թըրթըռալով կարկառին
 Գիրկս արկանեւ չըւախին.
 Աստուած ասէ եւ սուրբ ծոց
 Որ տարածեալ ցուրտ հոզմոց
 Ոչինչ թըւի զբաւ մորմոք՝
 Ներքին սիրոյն ի բորբոք.
 Աստուած համայն ինչ ըզբէզ
 Ասա քարոզէ սիրակէզ.
 Ես զԱստուծոյդ իմ խոնարհ՝
 Համբուրեմ սուրբ գարշապար:

ՄԻԻՍ ԵՒՍ ՀՈՎԻԻ

Ո՛չ աջդ այդ ցըրուեաց
 Ըղբոյլս աստեղաց
 Ընդ անհուն եթեր
 Սփոփել ըզգիշեր:

Ո՛չ դա զծիրանի
 Արկանէ երկնի՝
 Յորժամ յարեւելս
 Տիւ գործէ վերելս,
 Ո՛չ ձեռքդ այդ ետուն
 Հոյլ հօտից գզաթուն,
 Եւ հասակ յաղթկու
 Մայրից Լիրանու:
 Ո՛չ դա զազգ մարդկան
 Պըճնէ գեղազան.
 Զիցէ՞ դա նեցուկ
 Աըքայից եւ շուք:
 Զի՞ զփառս ընդհանուր
 Հարեալ առաթուր՝
 Ի փարախս անհարթ
 Ի խուրս հանգչի արդ,
 Մեծ գըրեալ յարկ զայս
 Քան զարբենին կայս:
 Ո՛հ, քան զամէն վայր
 Ընտրէ զսիրտ խոնարհ:

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒԷՆ

Ինձ լաւ իցէ ըիւր անգամ
 Ընդ աղբ դալ յայս սուրբ մըսուր,
 Քան յօրանալ հեշտակամ
 Յարբունական փառքս զուր.
 Եւ առաւել մեծ գըրեմ
 Երկըրպադու քեզ լինել,
 Մանկիկդ Աստուած հեղաձեմ,
 Քան աշխարհաց սանձ դընեւ:

ՀՈՎԻԵՍԿ

Ես մանկիկ անաւագ,
 Յարուցեալ ե խոր այգ,
 Ճեմ աւից ե մարմանդ,
 Ի բո սէր ջերմեռանդ.
 Յայդածնին ե զով շուշ,
 Հիւտեցեց նորքեզ փունջ,
 Իմ խարտեաչ գիտաւօք,
 Վայելուչ երանգօք,
 Ըղծաղիունս դեղեցեկ,
 Վարդ, շուշան եւ յամիկ,
 Եւ արկեց երփներագ,
 Ըղմըսրաւ քով դրասանդ:
 Թէ ելեց զհետ դառանց,
 Վազվաղել ե լերանց,
 Մէ այլ ենչ յեմ օղբինդ,
 Լըւիջք դուք երկինդ,
 Բայց զհաստջն ձեր հանդէս
 Որ հիւացս եկն ե տես:
 Ըղքեզ, տէր իմ Յիսուս,
 Երգեցեց մեծայոյս
 Չամենայն ես աւուրս
 Ի հովիտս եւ բլուրս.
 Եւ աղբերք եւ ծոր ծորք
 Եւ քարայրք եւ վիճք խորք
 Եւ լերինք վիմահանք
 Հնչեացեն զարձադանք
 Տէր, զանուան քո սրբոյ

Յաւաւօտ ե երեկոյ:
 Ի հըրճուանս եւ ե վիշտ
 Երգեցեց ըղբեզ միշտ:

ՀՈՎԻԵ ԾԵՐ

Հանդըրուանիս աստ ե ծայր
 Ես ծերունիս պահապան
 Կանգնեալ ե սեամ սըրբաւայր,
 Կարգամ հրաւեր հանրահան.
 Ո՛վ տաժանեալ դուք անցորդք,
 Ի մըսուր այսըր մատիք,
 Մի աւետեացս անհաղորդք
 Եւ ե կենաց զըրկիջք,
 Եկայք ամօք ծանրակիր
 Ծերունիք դուք, աւ տէր ձեր,
 Նորափետուր լուսակիր
 Նոր նորոգել յանմահ սեր:
 Ի նոյն եւ դուք պատանիք
 Չեան ըղանջօք մատերուք,
 Ստ ե սէր սուրբ վառետջք
 Մերժեալ ըղկիրս վաղանցուկ.
 Մատիք եւ դուք մանկըտեակք
 Երկիր պագէք աւ մըսրաւ,
 Իբր հեղաձայն աղաւնեակք
 Աւետելով, Տէր ծընաւ:
 ՊԱՐՆ
 Ծընաւ մեզ տէր, տէր Յիսուս,
 Ծընաւ Աստուածն յաւիտեանց.

Չոն բերցուք սիրաբար մաքուրս,
 Խոնարհ հոգիս հեղ անձանց.
 Ընդ հրեշտակաց երգեսցուք՝
 Ըղջաշառութեանն աւետիս,
 Եւ ըզՅիսուս օրհնեսցուք
 Չեկեալ փրկողն աշխարհիս:
 Օրհնեալ էկեալ Մեսիա
 Որ ի կուսէ ծընաւ աստ,
 Եբաց որդւոցս Ադամայ
 Չեղեմականն առադաստ:
 Մանուկ ծընաւ մեղ Ստուռած,
 Երկինք՝ ըզնա օրհնեցէք,
 Որդի աղւաւ մեղ Ստուռած,
 Աշխարհք՝ ըզնա օրհնեցէք:
 Օրհնեալ էկեալ Մեսիա
 Որ ի կուսէն ծընար աստ,
 Բացեր որդւոցս Ադամայ
 Չեղեմականն առադաստ:

1840—1843

Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՂՆ

Ա.

Տըխրատեսակ դիւերոյ Թագ եւ մահիկ
 Ոսկեալտուն վարսամ, զի՞ կաս բացխըփիկ.
 Իբրեւ զհրեշտակն անբուն խնամով Յակովբայ
 Յաշտէ հրաճօճ հրակեալ ի ծիրս աստեղեայ.
 Նոր արեւու դու փայլածու լուսահեր,
 Նոր արքայի դու սուրհանդակ խընդաբեր.
 Յաստեղաղարդն հովիւս գընաս ուհահորդ,
 Արեւելից մոգուցըս մեզ առաջնորդ:
 Ըզմէ՞ նդ ամսով լուսատեսիլըդ ծածկիս
 Հուսի ի սարիսպս Իսրայելի յանուանիս:

Բ.

Չի՞ տադնայիս Սիրիլի դուստըր Սաղէմ,
 Ըզմեր կաղմած՝ վրիժո՛ց կարծես զէն դըժխեմ:
 Տեսանողիդ ձայնի դու լեր դիւրանասց,
 Մերկեա ղԹախի՞ծդ այդ, սլարդեա՞ղքօղ սըգաւ.
 [Ղգեաց .
 Խաղաղութիւն յաշտարակացդ հընչեսցի,
 Յաստեղդ ի լուլ՝ ահ եւ կասկած հերքեսցի:
 Մէք ի լերանց հեռաւորաց ու ի ծովէն՝
 Ի լուր փողոյդ՝ ածաք ըզզարդ եւ ըզզէն .
 Ոչ ի դուսպար եւ ի հարուած կայուտակ՝
 Յարկն դունեւ ըզՅորդանու հաշտ կուտակ:

Այլ ըզսուսերս ի հուր կրակէ գերանդեակ,
 Ըղբոս բազուկ մարդէ ի գործ յագարակ:
 Բարձր ի գլորուս պանծա՝ Սրն եւ բերկրեաց.
 Ահա դիմեալ առ քեզ իշխանք աշխարհաց՝
 Խոսան արտեց քոց մաճակալք կացցեն ժիր.
 Ի Կարմեղայ մարմանդ բանակս հարեալ ցիր,
 Արածեսցուք մէք հօտս ի խաղ սուրբ առուսաց
 Ձեզէքն առեալ փոխան ոսկեակ մականաց:

Գ

Բաբէ ընկերք, զինչ այս մասնանք Հերովդեայ,
 Ձինչ անժղպիտս այս դղըրդուսն ի Յուդայ.
 Արքայ փրկիչ էկեալ նոցին այցելու,
 Եւ չըկայ թէ ոք ի նըւագ պարերգու.
 Դաւիթ գոչէ իւրոյ շինին՝ թէ Արքայ
 Քեզ յիմ տանէ սիրայորդոր էկեալ դայ.
 Առէք, մանկունք, զիմ բախեցէք տասնաղի,
 Որդէք հընձոց, տուք թինդս ի կող Կարմեղի:
 Ըզմէ նընջէք արևուտ հօլխօք Եփրատայ,
 Նընջեցուցեալ զուրախարարս զաւետացեայ.
 Մի թէ ի զո՛ւր Յովսափատայն յասպարեղ՝
 Բարբառք սեսչաց՝ հողմոյ ետուն ըզբարտեղ:
 Այլ քա՛ւ ի մէնջ ընդ քօ նըչանն՝ Անմահ տեր,
 Իբր ընդ կեղծիս թերահաւատ կալ յերեր.
 Ահա նա՛նդ հէտ խոնարհելոյ արեւուն
 Սրացեալ գիմէ հուր քարչելով զիւր արտուն.
 Եւ ճախր առեալ ի հովուապանս անդ մօտի
 Հանդարտելով սրսէս նաւ հուսոյ հանդրասի:

ճղատանցս պահպանելով ի յուր յի սոյ
 Եղաց րոնք ի յիմն զայս յիմն յիմն
 մօն ովկայս յիմն յիմն յիմն յիմն
 մօ Կրակեալ յայեր վարդափն՝
 Յուցանէ զմուս սուրբ այրին.
 Ժայտք եւ լէրինք, ձորք եւ դաշտ
 Եւ հայրենին անապատ,
 Եւ Հերովդեայ սէփ դագարք
 Մըփեալ ծովու են տիպարք.
 Նաւահանգիստ այս մըսուր
 Ուր լիկ հընչէ հով մաքուր.
 Եւ վարսամս այս լուսարձակ
 Լապտերակիր աշատարակ:
 Եկայք ձրգեմք ըզխարիսի
 Իբրեւ ճարտար նաւուղիւ.
 Հանել ըզբերս մեր արդոյ
 Մեզ կոչողին Աստուծոյ:
 Ո՛վ ծերունիդ հիւղդեաց,
 Եւ դու կուսան ամօթ լեւծ,
 Ձեր սրգեկիդ՝ մեր փրկչին՝
 Արքայքս՝ համբոյր տամք ոսին:

Ե

Մի զիս ընկերք, մի այլ կոչէք զիս արքայ,
 Ձե ես զիմ քայս, մական եւ ձորձ բեհեզեայ՝
 Թագաւորաց թագաւորիս նըւեր տամ,
 Եւ ջերմն համբոյր առ դարչապարն անթառամ:
 Յորմէ սարսեն երկիր, անդունդք եւ էթեր
 Մանկան ի ձեւ կայ ի մըսրի հըզօր տեր.

Ես զև՛ գողող ի ծիղ ջախջախ սընասարծ՛
 Բազմիմ՛ ի քահ, մինչ տէր՛ ղերկնից եթող բարձ:
 Տէր, քրաւական սըրտիս ընկալ զոսկիս ձօն
 Եւ հաստատեա զիս ի հաւատըս քո զգօն:

9

Ընկալ ի մէջ Տէր, ըզքոյն իսկ ըզաուրս,
 Զանուշահոտ կնկդրուկոյս խուն և զըմուռս,
 Զոր Աստուծոյդ մարդացելը վասըն մեր
 Մատուցանեմք՝ ժըտեալ ըզոյս քո եւ սեր.
 Զոր եւ երթամք՝ ըզհետ աստեղս լուսասփիւռ.
 Քարողէ՛լ փեղեղաց ընդհանուր:

1841

ՅԱՍՏՂՆ ԱՐԵՒԵԼԻՑ

Յէրբ ընդ մըթարս եւ ընդ մուլթ
 Խարխափես, սիրա յարեւմուտս.
 Յէրբ ալէկոծ անկայուն
 Զոգիս ի խոջ եւ ի խուլթ:
 Պարզեա զաչացդ արգելբի՛ժ,
 Յէրբ կաս կարկամ ու երկրասիլ:
 Դէտ ահն ի վեր յարեւելս՝
 Տես ըզլարսամ գեղանիլ:

Ոչ ասող է նա լուսալիր
 Ոչ զըւարթուն յարաթիւ.
 Այլ կայծ հըրոյն աստուածեան
 Զոր կենարարն արկ յերկիր.
 Անգէզ անմուտ անըսուէր
 Ճեմեալ ճօճի նա յայեր.
 Նորոց կենաց նոր արեւ
 Զոր քեզ ընդ իւր ծագէ Տէր:

Ոչ մաշէ, լի է յուսով.
 Ոչ պաղի, վառ է սերով.
 Նա փրկականն է Հաւատք
 Ղեակ կենցաղոյս համածով:
 Օ՛ն, թէ շնչէ խիստ մըրըրկ,
 Թէ նգքեւ գուռն խեւ ալքբ,
 Յայս յառեալիր ի վարսամ
 Հասցես ի վայրն երջանիկ:

1841

Ի ՅԻՍՈՒՍ

ԵՒ Ի ՄՍՆԿՈՒՆՍՍ ԲԵԹՂԵՀԷՄԻ

Օրհնեալ է ծնունդքո՛ Տէր Յիսուս.

Հաաբէլ մայր, մի՛ եւս յարասուես:

Երկնազօր կուսի ծոց զԱստուած տանի.

Յաւխանահանն ի մըրթի ծնանի.

Մըշտահրաշ սիրոյ դերադոյն հանդէս:

Իսկ դու նդէր խաովեալ մոլիս, Հերովդէս.

Յնշքեզ բըռնաւոր, սա հանուրց է տէր

Միւ ծըղեօքն ունի զանդունդս եւ ղէթեր.

Շունչ եւ սաստ սըրտիդ՝ նորա է սպարգեւ.

Դու զօր շուրջ կարգես արբանեակս ըզքեւ:—

« Ի Բեթղէմ արքայ ծնաւ ինձ հակառակ,

Օն անդր, ըզմանկտին տուք սըրոյ ճարակ,

Ըզմանկտին ամէն յերկեմենից վայր »:

Եւ հրամանն անէլ ի նախճիր փուլթայր.

Գունդ գաղանադէմ զաւանն էաւ շուրջ,

Փախըստեայքն եղեն դիակոյտ կամուրջ.

Յարձակեալ ղինու ի կեանս նորահաս,

Ճակատ յարդարէր ընդ մատաղամարս.

Լանջք մերկակըտիտք կառուցան մարտիոց,

Պասուարք սլարառիկք սիրամուկնդ տղայոց.

Պըզսըջեալ ընդ խրամ կաթն աւնոյր շըրջան,

Սէր ընդ սուր բաղնէր, մեծ էր կախ, մեծ ջան:

Հարեալ աշտէ զգիրկ ընդ գըրկաբարձիկ

Ըզմայր առ սրգեաւ առնէր ընկեցիկ.

Եւ մարմինք փափկիկք ի սուսերս դաժանս

Թօթափին ղինչ թերթք վարդիցաւ շուշանս.

Եւ կաթն ընդ արեան խառնեալ զուգավէժ

Սիրոյ ու արասուաց յորդէ ուխտ յաւեժ.

Եւ գէլեալ կասի հեղաշունչ հագագ,

Կըկոցեալ կափչին աչկունք նորածագ.

Եւ կարմրիկ հոգի նդ շըրթունս մանուշակ՝

Սլանայ շէշտ ի վեր մընչեալ անուշակ,

« Օրհնեալ է ծնունդքո՛ Տէր Յիսուս,

Հաաբէլ մայր, մի՛ եւս յարասուես »:

Ի ՅԻՍՈՒՍ ՊՍՏԱՆԻ

ԿՐԵՆՈՎ, ԶԳՈՐԾԻՍ ԶԱՐԶԱՐԱՏՅ

Մնացանէի 'նդ գաշտ լայնանիստ
 Յորում՝ բըլուր մի մենաւոր,
 Եւ յուզէր սիրտ իմ անհանդիստ,
 Եւ չէրեւէր ոք անասնոր,
 Բայց ոմն եւեթ յառաջանցիկ.
 Երթայր գընայր լըռիկ մենիկ,
 Թըւէր տեսեամբն աւարտհասակ
 Առոյգաբարձ գեղանի.
 Անսեթեւեթ եւ աչրոսակ
 Յաւերժակեաց մի պատանի.
 Ու երթայր գընար լըռիկ մենիկ,
 Կոխէր ըզփուշ եւ ըզծաղիկ:
 Էր նա զգեցեալ պըճեղնաւոր,
 Անկար ձորձիկ պարկէշա ճիւստով,
 Գոտեակ միջաց պարան բոլոր
 Հրեշտակակերպ ամէն ձեւով.
 Ու երթայր գընայր լըռիկ մենիկ
 Կոխէր ըզփուշ եւ ըզծաղիկ:
 Ճակատն էր պարզ եւ բարձրագիր,
 Երեսք կարմիր եւ քրտնահար,
 Աչքն ծաւիք եւ լուսալիր
 Եւ ջինջ կայլակք յեղերն ի շար,

Ու երթայր գընայր լըռիկ մենիկ
 Եւ ակնարկէր բըլէրն այնմիկ:
 Խայտայր վաղէր ընդ ձոր, հովիտ,
 Ընդ վարգենիս եւ ընդ գըժնիկ.
 Ընդ խաղս առուաց ակնակիտ
 Մնացանէր շոյտ ոտամբ բոկիկ.
 Ու երթայր գընայր լըռիկ մենիկ
 Կոխէր ըզփուշ եւ ըզծաղիկ:
 Եւ յանցանէր՝ երկիր թընդայր,
 Ու արծաթ ալեակըն խոխուջեր,
 Հոփն եւ հովիտ շըշուշ բառնայր,
 Մարմանդ բուրուամն անոյշ սըփուեր.
 Եւ նա երթայր լըռիկ մենիկ
 Ու աջքն ի բըլուր անդր ամբարձիկ:
 Եւ ես ընդ նա կըրթեալ յապուշ
 Յոտն ի մատին զհետ գընայի.
 Ու ահա բեռնակ բարձեալ ի յուս
 Եւ ի ձեռին իւր սակառի.
 Ու երթայր գընայր լըռիկ մենիկ
 Եւ սակառեակն յանթանոցիկ:
 Իսկ բարձրագեղ յիւրըն շալակ՝
 Կոճըլ երկձիւղ ձըգեալ անբարշ,
 Կանգնաւ երկայն քան զիւր հասակ՝
 Իբրեւ զորայ տանէր անգարշ.
 Ու երթայր նա լըռիկ մենիկ,
 Եւ յուսն ունէր երկձիւղ կոճիկի:
 Գործի ճիւտան ես յայն սակառ
 Եւ սայրասուր տեսի բեւեռ.
 Եւ կոճիկին էր խաչ սեւափառ,
 Եւ նա սիրով բարձեալ բէրէր.

Ու երթայր գընայր լըռիկ մենիկ
 Աջն ըզխաչիւն ու աչքն ի ըլլըրիկ :
 Յայս վայր ահեռեալ ու ոչ ժուժացի,
 Ետու ռոկցս, ու անցի յառաջ .
 Պատանեակ, ո՞վ էս գու, հարցի .
 Հիմ, եւ ո՞ր զայդքան տանիս խաչ :—
 Իարձաւ ետ աչս յիս հանգարտիկ . . .
 Եւ անց գընաց լըռիկ մենիկ :
 Ո՛հ, ծանեայ զի՛նքն իսկ Յիսուս էր .
 Եւ առ հողւոյս իմ փրկուեթիւն՝
 Ի կառափման բըււրըն դիմէր
 Կանգնել ըզխաչս սլըրիկ ի նոյն .
 Ու երթայր գընայր լըռիկ ի մահ
 Եւ մեռանէր անդ վասն իմ . . . ա՛հ :

1852

ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒՆ

Տէր, ոչ ծանեան ըղբեզ մարդիկ անհամբոյր՝
 Մինչ հեղութեան զանձամբդ արկար վարա .
 [գոյր ,

Բըբացդ արփիբ՝ յոր բոյլք աստեղց բուժաւ
 [նին

Ակընկորեալք բեւեռեցան ընդ գեաին .
 Եւ գու նըժգէհ յերկնից յերկիր սահեցար ,
 Իիւր զօրութիւնս ծածկեալ ի կերպըդ աի .
 [սար :

Տարփից կոհակք յարեան ուժգին Հօրն ի ծոց ,
 Արկ ըզնովաւ զաստուածութեան զիւր օթոց .
 Ի լուսացայտ յունիցն հատեալ ճաւադայթ
 Յահեմնեան հարաւ ի բարձըր դագաթ ,
 Եւ ի Թաբոր՝ քան ի կայանս շափիկայ՝
 Աստուածորդին լուսապարփակ շողողայ :
 Որպէս խընկոց անուշահոտ քաղցրութիւն
 Յեգեմական գրախտէն բուրեալ ի յայգուն՝
 Եւ զէնն ի տես հրաշակերտիցըն ճըգէր ,
 Յոյցս հաճութեան ի նըմանէն ընդունէր .
 Սոյն ի սարէն ընդ օդս յուշիկ էլ Յիսուս ,
 Եւ աստուածեան դէմք յայանեցան իսկալոյս :
 Թողեալ ըզմահ էւ կեանս յայնժամ քաջագէտ՝
 Կըրկին գուշակք՝ որ բոցագեղն ի Քորէք
 Ի ճեմն անձկաւ ըզնա գիտել տենչային ,

Արդ բարեբաստը կան յանդիման ի զընկն .
 Եւ Հայր յամպոյն ձայն արձակէ հաճութեան .
 « Իա իմ սիրուն Որդի , զգորս լուարուբ բան » :
Զարթիւր Պետրէ , զարթի՛ք ամեն մահացուք .
 Հնգա ընդ Հօր՝ ընդ սա միայն հաճեսցուք :
 Ոսկեճեղուն տաճարք չեն պերճ եւ պայծառ
 Քան ըզպարկէ շտանձին թաքուն սիրտ խոնարհ .
 Զըստուերամած փարատեսցուք զխտիցամբ ,
 Եւ Հայր զՈրդին տեսցէ ի մեզ հաշտ ակամբ :

1844

Ի ԿՍՂԱՆԻՍ ՄՍՐՏԻ

Ե՛ր ամօթէած դու այդպէս
 Աչք ընդ երկիր բեւեռած ,
 Եւ հիւսք մածեալ ձիւնագէս
 Յաղի վըստկս արտասուաց ,
 Հարեալ ի դող տարագարտ
 Զանխուլ մերձիս , խարտեաչ մարտ :
 Ո՛չ դու արփուոյն փեսուէր՝
 Ըզբեղմնածին ճառագայթ
 Առ հարսն ածեա ոսկեհեր ,
 Յերկրիս թաքուն առագաստ .
 Ո՛չ քեւ ծաղկունք զանազանք
 Ժըպաին ի բոյր եւ յերանդ :
 Աւաղիկ դաս եւ տաս խոյս ,
 Կորաքամակ ծանրակիր
 Մըրցեալ ընդ ահ եւ ընդ յոյս .
 Քաջալերեաց , եկ մտաիր ,
 Զիք որ ըզքեզ աւաղէ .
 Զինչ զոր բերես , ցոյց աղէ : —
 Հնպա , եկայք սիրեւեակք
 Ելցուք հիւրոյդ ընդ առաջ . . .
 Այլ բարէ , զինչ փուշ մանեակք ,
 Զինչ հապաղեմ այդ սեւա խաչ .
 Զինչ են կայլակք կարմրադոյն
 Փոխան վարդից գարնայնոյն :

Թողեալ ըզսերմն ի Թըմբիր,
 Զչարչարանաց մեռորակ
 Նա ի սըտաց կորդ երկիր
 Գայ սերմանեւ յիշատակ,
 Արեւնուող անեւ ցող
 Եւ կենսունակ ջեր եւ շող.

Ըզփայտ մահուն Յիսուսի՝
 Ան իմ բարուց խորթ եւ խեւ՝
 Ահիւ բերէ ի յուսի.
 Եւ սըտակին փըշայեւ
 Զափե զձական իմ խրթնի,
 Եւ տրամուծեամբ բաց տանի:

Ո՛հ, մի՛, եկ. այդքո ամօթ
 Իմաց դիմացս է՛ ծածկյոթ.
 Խոթուեւոց ընդ Գողգոթ.
 Եկ, տո՛ւր ըզթագդ ինձ անքոյթ,
 Եւ քառանկիւնդ ի բագին
 Ընկալ ըզսիրտ ցաւագին:

1844

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԱՐՈՒ

Հրապարակեմ մահու եւ շահապետք սանդարաց,
 Կափարիչք կենաց՝ արձանք յուսոյ նուաղելոյ,
 Ողբական ամբօխք եւ վարագոյրք քընարաց,
 Զայլամայր կուսանք, փողջարք ունկան մեռելոյ,

Եւ դուք՝ քըւերք կաթողին՝
 Միջաբեկեալք սու գորով
 Ու սպախտք լուսոյ արեգին,
 Հիմ՝ աղմըկիք զայդ վիմով:

Հասեալ գայ մտերիմ բարեկամին համակամ,
 Որ միայն գիտէ ի վեր՝ անձին գընեւ զանձ՝. (ժամ,
 Ոչ սաստեաց բնուծեան մինչ ան զորհաս տարա-
 Այլ լըւաւ գըթոյ, եւ զարտասուօք չարար զանց)

Զասպարիզօք հընդ տասան
 Սրավարեալ զսերըն խոհուն,
 Եհաս հանգոյն փայլական.
 Եւ դըլըրեցան սիւնք մահուն:

Ղազարո՛ս նընջեաց, շատ նընջե իմ սիրելին.
 Այլ արթուն է սիրո՛ւ՝ որ սիրեցաւ եւ սիրեաց,
 Վարագոյրք մահու ոչ ըղնա՛ զձեզ ծածկեցին.
 Արդ բանամ ձայնեմ զարթուցանեմ՝ ի սուուերաց

Ում՝ զիս սիրեն՝ քուն է մահ.
 Նա ի մահուն կենդանի.
 Ես յարուծիւն եմ՝ վըստահ.
 Որ հաւատայ՝ չմեռանի:

Ո՛ւր հանգչի Ղազար. ո՛ւր զիմ եզիք սիրելին...
Ղազարէ՛, Յիսուս հարցանէ զքէն. ո՛հ, դ՛ո՛ւր
Ե՛կ, աէր, Է՛կ Յիսուս, տես ո՛ւր նընջէ սիրելին.
Ա՛հ, մեռեալէնա, զի եւ դու Տէր արտասուես...
[Էս...]

Արտասր ածէ յաչս Յիսուս

Զի բացցէ զաչս Ղազար...
Այլ ո՛հ, քանի՛ արտասուես

Հեղցէ նա՛ նդ կեանս իւր խաւար,

Երբ տեսցէ վաղիւ ըզգարթուցին իւր սիրուն՝
Որպէս դանն անզօր մատնեալ դայլոց ի Ժանիս,
Յակներեւ ի մահ վարեալ նշաւակ ի բարձուն,
Լի ցաւօք վերօք արձակելով նուաղ ոգիս.

Եւ շո՛ւրջ եկեալ սրբատօրեկ՝

Օգնել ինչ ոչ զօրիցէ:

Քանի՛ եւ ձեղ անդ, քորք հէպք՝

Գառն այս կեանք, մահ՛ քաղցր իցէ:

Ղազարոս մեռեալ բնութեան՝ մեռցի եւ սիրոյս,
Իբր եւ էս մեռայց ըզմահ բնութեան՝ այլ ի սէր.
Սրբ ի բայ առէք ըզվէմբ՝ ըզխոջ սիրելեոյս...
Թերհաւատ Մարթա, յուսմէ՛ դարչես, ըզգաստ
[Լեր.]

Այդպէս սիրես դու զեղբայր՝

Հռչակելով զհոտ մահու,

Մինչ Մարիամ բարեաց մայր

Ձանմահութեան բոյր առնու:

Հաւատա՛, երկմիտ, եւ տեսցես զփառս Աստու-
[Ժոյ]

Որք զայրն այն լըցեալ՝ կան նընջողին բարձակից.
Կախարիչք ընկ արդէլու զնա ի տեսոյ,

Կոչեցէք ըզհօրս, Թաւալեցէք զվէմնդ կից,
Բացէք ըզլարկըդ մահու.

Պատրաստեցէք ճանապարհ

Բարեկամին սիրարկու,

Որ չճանդուրժէ այլ յերկար:

« Ղազարէ, Էլ Է՛կ արտասր »... Ահա յառնէ նա՛
Յարունթեանն հրաւեր զարհուրեցոյց զինքն
[Խոկ մահ.]

Ամենայն հնարիւքն՝ ոչ յաջողեաց սատանայ.
Արդէլու չբաւէ զոգին գիււաց անհուն պահ:

Որպէս կայծակն յամբարոսաց

Հատեալ ընդ խաւս խաւարի՝

Երաբերաք յիւրըն խայծ

Հարեալ ի նոյն եւ վառի:

Սիրելին Յիսուս փըչէ զնախ շունչ նոր կենաց.
Եւ շընչէ Ղազար. շարժէ զանդամս իւր աւոյգ,
Եւ հանդայն Թիթղան հերձուլ ճըգին զխորիւրն
[մահ.]

Շարժէ զոտս եւ զձեռս, վառի աչացըն խարոյկ...
Փութա՛, Մարթա, ի բաց տու.

Ձերիզ եւ զկապ տարորակ,

Երթ, Մարիամ, լոյծ, սրատան,

Ձեղբօրդ գիւմաց վարչամակ:

Ո՛վ, քանի՛ պայծառ եւ լուրջ փայլին այն երեսք.
Համբուրեա՛ սիրով, արբ զանձուկդ յաչս եւ չըր-
[Թունս...]

Այլ, բա՛բէ ուսով՝ խոնաւ կայլակքն յաչամէջք.
Այն ցօղ է կենաց զսր արտասուեացն արդ
[Յիսուս.]

Արտասր եւ լոյս իւր աչաց՝

Եղէն մտերմին սպեղանի .

Եւ շունչ ըզշունչն կոչեաց ,

Զարթոյց զմեռեալ կենդանի :

Ըզմահուն նըշան՝ զպատառուեալսն պատանա՝

Յտղթանակ մահու պարզեալ ի դրօշ անամաչ ,

Եւ արկեալ զանձամբ՝ իբր առնազէն զիւր պար-

[ծանս ,

Կենսատուին սիրոյ դիմէ փութութով ընդ առաջ ,

Փարեւ զօտիւքն հեղաքայլ ,

Որ խայտալով փութացան

Ի դրանց դժոխաց զհոգւոյն փայլ

Իարձուցանել յիւր կայան : . . .

Ո՛վ Յիսուս , անսուտ իմ յարութիւն , կեանք

[հոգւոյս .

Ոչնընջէ սա ընկ , այլ եւ մեռեալ է շնորհաց .

Այլ էր սա երբեմնն սիրելի քեզ՝ ըսաքոյս ,

Արդ ի կիրս ու ի սուգ վարակեալ՝ խուլ է կե-

[նայ : . .

Զարթուցանել փութո՛ւ , Տէր ,

Զի մի փոխի քունս ի մահ .

Լնց , եւ կոչեա զիս ի վեր ,

Յարեայց , անցեալ՝ դ մեղաց պահ :

ՅՐ ԲԱՐԵԲԱՆՈՒԹԵԱՆ

Ատուած՝ որում՝ միայն են փառք ,

Որում՝ հոգիք ըծին ի կառք ,

Որ սլանայ յանսահմանս ,

Պարուրելով զսասուից սիւպար

Եւ բազմեալ հեղ եւ նուստաբար՝

Իայ հանդարտ ի նաղանս :

Ո՛վ , բանի՛ դնացքն են վայելուչ

Եւ մերձեցումնն սըրտաուռչ՝

Որոց ահն ունիցին :

Իղըրդին պարիսոյքն այն ապառու՛ք ,

Սիրտք պակրաստք , ոգիք տրտու՛ք .

Հըրճուի անձն անբը՛ծին :

Յաւերժ է սա փառաց արքայ .

Խոնարհութեամբ եւ սիրով գայ .

Զունի թագ եւ մահան .

Մաքրութիւն հեղ խաղայ ի դէմս .

Եւ սէր՝ յաջացն լուսաճեմ՝

Զեղանի յաւաղան :

Շըրթունքն անշարժք են վարդահատ ,

Եւ աւետիս տան անընդհատ

Ի հոգիս խոնարհաց .

Ծերք եւ մանկու՛նք ոստաբարձիկ՝

Զծառոց սաղարթ , զուսոց ձորձիկ

Ճապաղէն սիրադէկաց :

Ճօճեալ ըզբլուխն հըլուաբար
 Աստուածաբարձ մարուկ ախմար՝
 Ի Սաղէմ ընթանայ,
 Գոչէ ամբոխն, « Օրհնեալ ուր գայ
 Ի Տեառն անուն, տէր մեր արքայ,
 Ովաննայ, ովաննայ » :

— օջեօ —

Ահաւասիկ կեանք կենաց խնց
 Եկեալ գան առ իս :
 Եւ խոնափեալ ծոցէ ի ծոց
 Այլայլէ հոգիս :
 Ահաւասիկ սէր տեսանեմ էս,
 Եւ սարսէ սիրա իմ :
 Հեղահայեաց դիտեմ երես,
 Եւ յանկարծ խռովիմ :
 Հընչէ ամբոխ ազազակին,
 Եւ ինչ ոչ լըսեմ :
 Լուս եւեթ հան շըթունք նորին,
 Զայնիւն էս լի էմ :
 Եարժին ժողովք, խըռնին խաղան,
 Եւ ինչ հեզ Յիսուս :
 Կէսք ի հըճուանս, կէսք ի մախանս,
 Սա լոկ յարասուս :
 Հընչէն մանկունք ըսարնչիազ,
 Հընչէն քարինք հուս :
 Հընչէ բնութիւն բերանաբաց,
 Ե՞ս լոկ կացից լուս : —
 Բնդէր չունիմ ծաղկեալ էս ոսս
 Ի՛ արմաւ հաւասոյ :

Հիմ ձիթ երեսակ ոչ լուսասոս
 Եւ չուշան սիրոյ :
 Մի միայն է հնասե գրգէտկ՝
 Սրտիս առիգած :
 Եւ սալ յոտին ընթանալեակ՝
 Լինիմ ամօթխած :
 Ահա եւ ընմէ զսիրա խնքնին ոչ
 Աւ սան արկանեմ :
 Որ թխնդս առեալ յիմըս թընդոջ՝
 Մասջին սիրաճեմ :
 Օրհնեալ եկեալ գըթութեանց Տէր,
 Այսր ի սիրա մատիւր :
 Գարշապարացդ հեղանըւէր՝
 Սա նոր քեզ երկիր :
 Օրհնեալ ինձ եկք քո խաղաղիկք :
 Դեմքք ինձ հաշտարանք,
 Եւ արտասուքք այդ ողորմիկք
 Վերաց են խարանք :
 Ե՛կ տէր Յիսուս, է՛կ ի սիրաս այս,
 Մի լիցի աւեր
 Իբր ասերախաղն զոր ողբաս՝
 Սաղէմ վատըւէր :
 Ե՛կ հեղութեամք քո ամօթլեած,
 Զի առից խրախոյս :
 Հեճեալ ի գութըս սիրազգեաց՝
 Որ հիմն են հոգւոյս :
 Ե՛կ, մուս, խաղա՛ յիս համարձակ :
 Եւ թէսլէտ անձուկ՝
 Եղց ի գաւքում ընդարձակ
 Սիրոյս ի փըզձուկ :

Ե՛կ Յիսուս, եկ, արամսուռեա՛ յիս
 Ու եղեց քեզ կամակ.
 Կարմիր աչօքդ հայեաց յոգիս,
 Ու եղեց ըսպիտակ:
 Եղեց եւ էս քեզ բարեբան,
 Օրհնեալ աէր արքայ
 Որ դաս ի սէր մշտ յալժական,
 Բեզ Տէր՝ Ովսաննայ:

1853

Յ Ո Տ Ն Լ Ո Ւ Ա Յ Ն

Ձե՛նչ են զարմանքս այս, ո՛ր Տէր.
 Երկինք կանգուն քեզ սպասեն,
 Եւ զԵրկնաւորդ՝ առեալ սէր՝
 Ձրդէ՞ առ ռաս հողեղէն: —
 Չոր ինչ առնեմս էս այժմիկ
 Ոչ արդ, ապա գիտացես: —
 Եւ էրբ հասցեն միտք ուամիկ՝
 Յայդքան հրաշից քոց հանդէս: —
 Ի սքանչելիսն յայն սիրոյ՝
 Հասցե՛ սր լին է սիրով:
 Եւ ի խորհուրդ Բարձրելոյ
 Խոնարհն եւ սուրբըն հոգւով: —
 Տէր մատչ՛ի սպաս ծառայից.
 Ձերծեալ զհամեստ զբռնիկ՝
 Հանդոյն փառացն յաւերժից,
 Ընդ մէջ գեաին գայ միայնիկ.
 Լըցեալ ջըրով լողարան՝
 Արկանէ զգաստն ինքնաստեղծ
 Յստըս գուհիաց ձըկնահան:
 Սէր՝ չըզըրէ ինչ աղգեղծ:
 Առ բուռըն սէր՝ սիրան հանդոյրժ՝
 Առ հեղուժիւն բըռնագոյն
 Ձիշիէ այլ եւս ունեւ ժոյժ,
 Փորձէ վազել բացագոյն:

Զը՞քեզ Պետրէ՞ զլսալստասկ .
 Քան ըզսէր ո՞հնարապէս .
 Զխոնարհուեթիւն՝ զիւր պահնակ
 Կարգեալ է յանցս՝ ըլլայշ զէս :
 Հնաղանդուեթիւն ծառայի՛
 Տեղի տացէ աստանօր
 Խոնարհուեթեան տէրունի ,
 Տեղի սիրոյն հրաշանօր : -
 Տէր , ես չիշխեմ՝ ընդ Պետրի
 Ասեւ , զիս մի՛ լըւանաս .
 Քանի՛ ի շնորհացն իւր թերի
 Եւ աղաեղեալ է սիրաս այօ .
 Կեսաաբործակ թէ անդրէն
 Զեան ի սա ոչ կարկաւի ,
 Նմանեցայց այնմ՝ որ ի քէն
 Զընկալաւ մասըն բարի :
 Մի՛ զիս զըրկեր ի մասնէդ ,
 Որքօղ արկեալ զամեթոյ՛
 Մատչիմ առ քեզ անղանդէս .
 Արս՝նդ իս , Տէր , ըտ կամս քոյ :
 Լըւա՛ , եւ մի զոք միայն
 Զերապն յընթացքս չարին ,
 Այլ գլխովն զանձն համոյն
 Զեկեալս ի գայռ խաւարին :
 Ես ինքն օսանում յաւազան՝
 Զոր պարաստես Տէր Յիսուս ,
 Ու ելից մաքուր սրբազան՝
 Թէ կաթես շիթ մ՝ արաստուս :

Ի ՎԵՐՆԱՏՈՒՆՆ

Մինչեւ ցերբ , սիրտ սովալըլուէ ,
 Մինչեւ ցերբ գուքաղց եւ պասուք՝
 Խընդրես զյագօւրդ քո յերկրի :
 Սէր է միայն սըրտի սընուեդ .
 Սէր՝ զոր չուենին ոլորաք ու անգունդ ,
 Այլ որ զերկնիւքըն փարի :
 Յաստուածային կըրթեալ ճարակ ,
 Յաստուածահամն հաց անուշակ՝
 Քիմք հիմ ինդրեն այլ զթօսանս :
 Ի վերնատուն անգր երթ , փուեթ ա՛
 Ուր հանդերձի զենուլ պարս ,
 Խնդրողդ հագւոյդ ըլլերիկանս :
 Յանկանարու յանկայ ինք սէր
 Զենուլ զարտեքք ինքնանըւէր ,
 Ընդ ուր անցցէ մահ ի կեանս .
 Ընդ յանկուեթեան հին նախասոր
 Անաղա արփանք եւ անտանօր .
 Ամա հնուեթեան է սեղանս :
 Երթայք , իղձք սուրբք , իղձք եռանդուն ,
 Պատրաստեցէք մեզ վերնատուն .
 Մէծ իցե՛ւ բարձր այն տեղի ,
 Մինչ չերեւել երկրի անգամ՝
 Զի նախադահ՝ յայն համագամ՝
 Ինքնին իսկ սէր զեաեղի :

Բարձրացի՛ր վերնատունն այն,
 Տարածեսցի 'նդ խոր եւ ընդ լայն,
 Քանզի Բարձրեալն ինքնին գայ.
 Կիրք եւ խըռովք ի բաց անախ՝
 Ուր հեղուծիւն Տեառն հանդարախ
 Եւ սըրբուծիւն գերակայ:
 Երթիցէ Պեարոս՝ Հաւատք՝
 Ըզտաճարին կրուել յատակ,
 Չոր կոխիցէ հուրն Աստուած.
 Երթիցէ եւ Սէրն՝ Յովհան,
 Սըրբել զորմունս եւ զպատուհան՝
 Յոր Տէրն արկ քաղցր հայեցուած.
 Եւ երթիցէ յառաջընթաց
 Քան ըզհաւատս եւ սէր ի սլաց՝
 Սափորակիրն Ապաշաւ.
 Սրահեսցին շուրջ ջինջ արաստուք,
 Մաքրեսցին բիծք սրտի եւ սուգք,
 Եւ գայցէ Տէր սիրարչաւ...
 Պատրաստ է, Տէր, վերնատունն այս,
 Եկ, ո՛վ մաքուր, բեր ըզք հայս.
 Ե՛կ քահանայդ յաւիտեանց,
 Թէ եւ դողամ՝ աւանիկ քեզ
 Սիրառս սեղան, վայր սիրակէզ.
 Արա՛ զԱնցիկդ յիս անանց:

1846

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ

ԸՆԹՐԻՔ ՅԻՍՈՒՍԻ

Հանդերձեալ Տէր Յիսուս մըխել յուզին մեծ,
 Յուզին յաւերժ, աշակերտաց տայ հրաւեր.
 Սիրան ի շըրթանց յաջաց կարգայ սիրայեղ.
 « Եկայք յընթրիս զոր պատրաստեաց Փրկչիդ
 Փափագանօք յիս մատիք. [սէր.
 Ճաշակեցէք, եւ կեցջիք »:
 Ճեպեա՛ սիրով եւ դու սիրոյ, զի՛ կաս ահիւ.
 Որում չըխնեո գարշապարին դալ՝ ի հող,
 Խրախճանակից լինել մըղձկեալդք խըղձիւ.
 Ի մի բաժակ քիմս հաղորդել է քեզ դող:
 Նորին արդ քեզ է հրաւերս.
 Անց եւ դու, անց ի հանգէս:
 Տաճարապետ անդ սէրըն սուրբ նախագահ,
 Չաւեշա՛ խընդից երգ եւ նըւագ՝ սէր միայն.
 Մէր համեմէ անդ ըզպասէք եւ ըղխահ,
 Մէր օշարակ ի սուրբ պաշտի խոտնարան.
 Մէր ճաշակի, սէր շընջի,
 Եւ այն ամէն կորընջի:
 Ոչ պայծառ յեա հիւսիսոյ այնպէս արեւ,
 Ոչ հողք ծաղկանց ստաւամանեաց դան ըզհեւ,
 Որպէս Յիսուս յայն երեկոյ ակներեւ
 Ըզուրջ գիծօք խընդից ցանէ սեթեւեթ.
 Լըսել նըմա եւ հայել՝
 Անմահական է վայել:
 Այլ փայլակունքն ահա յայտից ամփոփին

Ի ԳԵԹՍԵՄԱՆԻ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Եւ Յիսուս սկսաւ տխրել եւ հոգաւ:
ՄԱՐԿ . ԺԳ . 19:

Հան ինձ զուարթուն, որ ըզրիեսուերս լուսազարդ:
Մշտափայլիցդ աչաց արկեալ յայնժամ . քօղ
Կացեր ի սպաս կըրից Հաստէին մեր տնայարտ,
Զանհիւթական դերարտառուաց հեղեալ ցօղ:
Ի նոյն ի թեւըս սրգաթափ՝ վարեալ զիս,
Եւ արկ ուր լակ ցանկայ լինել արդ հոգիս .

Տրամակարկաջ ուր ի վիմաց զարամուր
Սորոյ ի սոր զըզըջէլով ուխք հոսանս՝
Ի կեդրոյնեան ծործորս խօսին ծանրալուր
Հոգեթախիծս եւ սրաառուջ հառաչանս .
Ուր համայն վանդք եւ շունջք չէն յայլ դի-
սլաւոր՝

Բայց ի խռովել ու ածել լուռութիւնս հասուր,
Ի խորագոյն խոհից յանղոյգն ասպարեզ,
Ի բնահովիտ արամուռութեան, վայր իսկակոծ .
Ուր զբովանգակ ակեղերոց դիզարգեզ [ւոց,
Ստանձնեալ զաղէսս՝ անոք անմուռնջ Այրցա-
Մենամարտիկ երկնի ու երկրի վեր ի վայր,
Ու աստուածաջափ կըրիւք ակիրէր եւ հոգայր:

Ո՛վ տխրութիւն անյատակ, ո՛վ հոգք անհուն...
Հոգայ նա զմարդ . եւ մարդ... Որդիք որոտ-
ման,

Եւ դ՛ո՛ւ Պետրէ, նընջէք յահեղն ի պահուն .
Ո՛ւր ձեր շանթիք, եւ ո՛ւր քօ սուր վրիժահասն .
Կեանս ընդ կենացն երգուայք . ի ցաւս արդ
նորուն՝

Ժամ մի, մի ժամ՝ ո՛չ հանդուրժէք կալ ար-
թուն:

Զարթիւր ո՛վ մարդ, զարթիւք բնութիւնք համա-
դունդ,

Թէ բաւիցէք նըսպաստ ինչ տալ ինամատար,
Այնմ՝ ոյր բարձեալ զբեւինս ձեր յուս՝ սըր-
տաթունդ

Դիմէ յօժար հոգւով, մարմնովն՝ ո՛հ, տըկար:
Աստուած համբուն դանդաչէ, զի՛ գործէ
մարդ...

Տիրամասնի՛չ բնութիւն, նընջեա՛, հանգիւր արդ:

Յանմահութիւն կընքեալ իմ սիրա՛, դու՛ միայն՝
Թէ եւ անզօր, զօղեալ ի թեւս հրեշտակին
Ե՛րթ, ի բրու բիծ մ՛ ի լըւին վայրն եւ ունայն,
Նկատել զտաղնապս օրհասական՝ լըսանկին .
Նկատել զարեան քրտունս ի դէմս Յիսուսի՝
Ի մենամարտ ասէղն անջափն հանդիսի: . . .

Աւասիկ Տէր . ծունկք կրկնեալք, դէմք գեանա-
մած,

Դաստ ըզգաստիւ իրր յանդարձ մահ գատա-
պարս,

Ճակատն ի հող ու աչք անբըթիթ մըթազգած,
Ընդ վիհն հայի յոր կործանեալ անկաւ մարդ .
Մարդ՝ զոր իւրովք ձեռք ի հինն յայն յեղեմ

Զայն մեղրահոս ամպս անողիդ էր ի ճահ՝
 Զայն պատրաստել ումպ՝ ձեղ կենաց արևողին։
 Ո՛վ քանի՛ ծանր աստուածութեան խոկ եղեր
 Մատուցակեալ մեղք բաժակդ աննըւէր։
 Պինդ երկոքումք ակեղերակալըն բաղիօք
 Հաղիւ բաւէր ունել, եւ յանձն ոգորէր,
 Վըստահութեամբ արկանէր զահ ընդ կամօք.
 Եւ ահ դարձեալ ընդ կասկածի հարկանէր.
 Թերաքամեալ աջօք՝ զերես դբժընդակ,
 Զափէր մըտօք ըղխորութիւնն անյտտակ։ —
 Արդ ի բայ կաց, հրէշտակ, թող զին Փրկչին դէպ.
 Զբաժակէն բուռն հարեալ՝ ուրդոյ եւ մասն իմ,
 Տալ ըղձակատս առ այն ճակատ յերաշխէպ,
 (Ներեա Աստուածդ հէղ՝ թէ ի բանս զառան
 ցիմ),
 Սըրտիւ ու աջօք նորուն անցեալ եւ տեսից՝
 Որպիսին նա կրէ ի նուաբէն մըրըրալից։

Քան զանկերպարան վըհին թոխ եւ բոխ
 Անեղս ովկէան ալեօք բաղմամբոխ,
 Աշխարհ դբժալըհի մըտաց ի տեսիլ
 Լի ուրուականօք զաղեր ու անարդիլ.
 Համօրէն մըրուրք մեղաց մահացուաց՝
 Իբր ի կոյանոց անդր համատարած
 Յաղչաց յաղքս հոսեն ի կարկաջ կերկեր,
 Ու անդուլ ի խորոց հարկանին ի վեր։
 Անդ դարիւ դարիւ հոյք կըրից տըրուր
 Հանուրց շընջողաց զօրոյս այս մըրուր,
 Իբր ի խրոխա լէրանց ուղկք դէտոց յաւեժ

Դարահոս զեւամմբ սրտից յորգավէժ,
 Ընդ հինգվըտակեան ըղբայութանց դուրս
 Տղմասիկ ի կոյտ թաւալեալ ի դուրս,
 Ընդ ժամանակին վաղեալ ծեր կատար
 Ի սահանաբաց կոհակս անկոպար,
 Ամենուստ թափին յաղախցն ի բաժակ,
 Ոյր կողք ալէկոծ մաշեալ բովանդակ՝
 Սպառնան խորտակումն անյոյս անդարման,
 Հեղեղէլ ծածկել զաշխարհ յերերման։
 Անդ՝ խոժոռ յունկից շարժին սպառնալիք,
 Խըտանան պարզին մէքք ու ամպրուպ սաս
 տիկք.
 Անդ ցասուցելոց աչաց բոցացայտ
 Շանթեն շառագմամբ կայծակք բարկաճայթ,
 Եւ ի թըխաթոյր ռուտթեանց գուպար
 Փոթորկաց տեղայ դիշերագէմ պար.
 Անդ անժոյժ ոչուոց նըկարին պատկերք,
 Ուխք անհաշտ արեան, բարկութեան մըթերք,
 Կասուտակային կոհակք նախանձու
 Օձաձեւ ցայտեալք եւ վէրք մահացու.
 Տենչք ամբարտաւանք, նանիր խոհք եւ խոս
 Անդ լեւնակուտակ բաղխին դարահոս.
 Յանդուուըն չըրթանց հայհոյաց յահուր
 Պըղպըջեալ սայթի դիզուրէդ փրփուր.
 Յայրատից աչաց՝ ի յոյղ անդ ալեաց
 Գէջ գէջ հատանին կայծակք մըթաղբեաց,
 Անառակ վարուց գրգռնք մեղկալէտ
 Նողակալն դիմք լուրից մէտ ի մէտ.
 Քանի՛ ռխերիմ կենաց ճապաղիք,
 Զոր հոսեցին զէնք եւ քէնք կատաղիք.

Քանի՛ արատուք անոյս տարապարտագոյ
 Ըտարջանք սրտեյ բարւոյ դիմամարտ .
 Ո՛րքան ուրուականք սնտի պաշտամանց .
 Յընորք եւ տղանդք մշտակոյր ազանց .
 Ո՛րքան սեւագէժ զաղղաթորմի կիրք .
 Բունեալ ի մըլար սիրա ըղբայողերկ .
 Եւ խուան աւերակ , տեսիլ ժանա , բանի՛ .
 Սըրբոց տաճարաց անդ ցիր տեսանի .
 Սըրբապիղծ ձեւաց հարուածք յանդբոճնք ,
 Դիւաշունչ ոճիրք՝ քրնուծեան սոսկմունք :
 Անդ՝ համայն զոր ակն էտես Բարձրելոյն .
 Կամ զոր ի մարդիկ տեսցէ չարեաց բոյն ,
 Ի մեղաց՝ զոր անդ ի լոյս անմասնն .
 Ծընան փըքացեալ միտք արուսեկին ,
 Ի ստուեմբանուծեանց զուգին նախասեղծ
 Յաշխարհակործան նեւին եղծ ու մեղծ . . .
 Ո՛հ , անդ , մեւեր անձն իմ , երթ գարձ ի չեք .
 Անդ՝ եւ քո մեղանք յայանին գարշէլք .
 Զոր զուր ճըգնիցիս ծածկել գլխակոր .
 Ե՛րթ , գարձիր ի չեք . . . Այլ մի ապաշնորհ ,
 Մի արձանացիր մանաւանդ , եւ տես .
 Զոր աչաց , լեզուի եւ սրտի հանդես .
 Բղետեալ յորդեցին յաւերլու Փրկչեք .
 Յաճեղըն բաժակ՝ թոյնըս մահաւիժ :
 Օ՛հ , թէ մի կայակ պահաս էք ի քէն .
 Եւ Փրկչեք կիրք նուաղ լինէր ասպաքէն .
 Ու ո՛չ յայեքան խոճերց ի խոր մըղանանց .
 Ոստիկան մահուն ճեմեր խորստապանձ ,
 Ըղտակալիժ խարսըն ցըցուեալ զէջիւրս .
 Ի խաւարքտին բաժակէն ի դուրս . . .

Յայսքան ի տես՝ ոչ հանդուրժեալ Յիսուսի .
 Ծուրջ ակնարկէ , եւ ոք չըկայ օգնական .
 Սիրտ ի սաւոյց եւ դէմք ի դոյն օրհասի .
 Սք աշակերտսըն դայ , եւ խոր ի քուն կան :
 Յիշեաց քտես զինք ընկ միջնորդ մարդկուծեան .
 Մտտեալ ի տաշտն . . . ո՛հ , ահաւորն այն վայր .
 Երկցս յարեաւ փորձել , երկցս եւ անկաւ .
 Յաստուածուծեան իւրում՝ զափայր մարդ .
 Կուծիւն :
 Ո՛հ ծանրուծիւն մեղանաց , ո՛հ բեռն անբաւ ,
 Որ եւ Որդւոյ Էին աժէս սասափիւն :
 Գամ մի Յիսուս չեղնէր յահէղն ի պայքար .
 « Հայր իմ , անցցէ բաժակս յինէն , թ՛է հը .
 ւանար » :
 Զայն հոգէհար , յաղթեաց , երկնից եւ հա .
 յարուած .
 Փուծացաւ Հայր , ըղլըսելիսըն կափոյց ,
 Անհընարին ընուծիւն ձայնին եւ գարձուած .
 Մահանացուեաց յուսոյ սարսեացնուրք հան .
 դոյց :
 Իսկ մեհամարան ի տաշտն անդրէն բուանեհար ,
 Զըզուեցաւ . . . « Հայր , անցցէ բաժակս այս ,
 թ՛է հնար » :
 Ծաւալէր ձայնն ողորմ յանհունըն սահման .
 Արդարուծիւն դրդուեալ չարժէր ըզանթա
 իւր .
 Ամբարձ ըզձեռս զինեալս Վեհին յանդիման
 Եւ աիեղերք սասանէին թաքթաքուր .
 Երդնոյր կարել ըզոյս մարդկան , աւանդ մեղ ,

Թէ ոչ ըմպէ զբաժակըն ժանտժաճադէզ: —
Հընչեաց ըոպէն յաւիտենից ի բարձու...:

Եւ Գրթուծիւն արաստուեալ թող միայնակ
ՉԱստուածըն Բան: Եմուտ յորհասմաճացու,
Եւ քրտան արեան խառնէր յաճեղն ըմպանակ.
Անդէն զիջան ալքը փրփուրք ապաժոյժ.

Եւ հառաչեաց Յիսուս. « Արբից, թ' եւ դառն
յոյժ »:

Արբից. լըւան եթերք. եւ կառքն եռանդուն՝
Ի գիւլ եկին ընդ աիեղերս ընդ հանուր.

Չայն ետ Որ էն յաւիտենից մինչ յանդունդ՝
« Տըւան փրկանք աղբի մարդկան սիրատուր »:

Արդարուծիւն ըզլիթ խարին ճայթուեալ
չանթ

Յերկնից ծագաց ցանդընդախոր մինչ ցըբանն,
Որտէս զաղեղն անմահին յօդըս ցընցէր,

Եւ խորասոյզ մըխէր յաղտիցն յայն բաժակ.
Շըջեալ ծըխոյն չոգի յերկինըս կըցէր...

Իարբ Յիսուս. ըզգաց ընուծիւն բովանդակ,
Արդարուծիւն եւ ի Գողբոթ՝ հուսկ շանթ
յուս,

Շիջուցանեւ եւ զայն յարեան քուժ, Յիսուս:

Մ Ա. Հ Ա. Ն Մ Ա. Հ Ի Ն

Ընդ աիեղերս հծծանք, ընուծիւն ի սարսուռ.
Հաւքաւ մահու Անմահին.

Մի՞ արդեօք վեր ի վայր եղեալ ամենայն ընդ
հանուր՝

Կարգքն յաւիտենիք փոխիցին:

Բըլուր փոքրիկ արձանացեալ համարձակ՝
Չերկիր լընու. զծով անսանձ,

Բարձեալ ըզխաճ՝ մեծ քան զերկնի սպարափակ՝
Կրելով զԱստուածն յաւիտեանց:

Ո՛վ խորհուրդ ցնորեցուցիչ իմաստնոց,
Ո՛վ սքանչելիք սքանչելեաց.

Ծայրք բարձրուծիւնց հաւասարին ընդ խորոց,
Գո՛րծ Աստուծոյ գերաստուած:

Հեծէ ընուծիւն, զի խուովեալ ոչ քայքայի.
Տարերք՝ զի ոչ չքանան.

Երկիր՝ զի կրէ զփայտն, եւ արեւ՝ զի հայի,
Ու անմահ՝ զի ոչ մահանան:

Իսկ ինքն Աստուածն յաւիտենից՝ հառաչէ...
Եւ ոչ թըլլի փոյթ երկնի.

Եւ ընդ երկիր արձակեալ զաչս ի խաչէ՝
Խոնարհէ զգլուխ, մեռանի...:

Ո՛վ իշխեացէ կեան՝ ուր Աստուածըն մեռաւ .
Յանմահու թիւն զուգի մահ .
Եւ արդ չիցէն յայսմ հետէ կեանք դրժուարու
Իսկ մեռանէն՝ հեշտ եւ շահ :

Ո՞տայր մշտոցս՝ ի խորհուրդս յայս գուհատու ,
Եւ բեւեւել անմեկին .
Ո՞տայր լըծէլ ըղտէր ի կուրս մահու ,
Ու անգրավարել քան զերկին :

1852

ՀԱՅՆԱՅԻՆ
Ի ՆՍ. ՅՈՐ ԽՈՅՆՅԻՆՆ

Տեղէ՛ տուք ի բլրոյդ , բնու թիւնք խառնեալք եւ
Տեղէ՛ տուք ի բլրոյդ՝ միտք ի վարանս եւ ի թող .
Սըրտի միայնոյ անդի տուք
Սարսէլ սաքրել զարանուր ;
Եւ ի նշուակն անպաշնք
Կառուցանել աչս ամուր : ||

Սյլ ի յերկուս հերձեալ սիրտ եւ յերկուանան
Հաւատացեալ դիմէ կէս , կէսն անհաւատ կայ
Հաւատք՝ յարևն հոտտի ,
Եւ վեկայէ դժէրն է խաչ .
Սէր՝ ինդրէ զիւրջս սրաին
Եւ զանգիտէ գալ՝ յառաջ :
Գիտեմ զի պսս է իմ Տէր , այլն՝ անմահ , իբր
Ով պանմեծն սրանչէլս որ այլ երբէք չէ
Ճըզէն տարերք ի տատան
Ու երկինք լըռեն եւ թաքչին .
Ու ահա կանգնի աստ տապան
Ծածկել զահէղն մարմին : .
Օ՛ն , մտադոյնըս մատիր , տես սա իցէ սէրըն քոյ .
Բարէ , մեռեալ է . համայն մեռեալ նա , բաւ ի
[սիրոյ

Տիպք տիրականք դրոշմեալ են

Կիտաթարշամն ի շրթունս.

Ու անմահութեան ելանին

Նըշոյլք նուաղեալք՝ ընդ աչկունս:

Մեռեալ՝ մարմնոյն ասէ զնա խաղաղահանըն

[Դալուկ.

Մեռեալ հծծեն յամրաթորք եւ շառադոյնքըն

[Կաթլուկք.

Վէրք եւ հարուածք՝ մէն մի տառ

Յարենադիծ մուրհակին.

Ու արդարութիւն անաչառ

Հարեալ զկրնիք մահացուն:

Գլուխըն պանծ սիրաշարժ՝ կայ խոնարհեալ

[ընդ երկեր.

Աչքեւ շրթունք կապուտակք յեռեալք յարաս

[ի կարմիր,

Բաղուկք պարզեալք դրոկաթափ.

Ձեռքըն լըցեալ բեւեռօք,

Եւ դեռ հոգւոց առ շջափ

Թլուին ձրգտիլ անձկանք:

Հանապաղ արօժիական պահնակ լանջաց՝ սիրտ

[անթրունդ,

Եւ ճանապարհ ծիրանի բացեալ ի կողս խորան

[գունդ.

Ընդ որ վազեալ աշխոյժ սէր՝

Հայի նդ խըրամն ահաւոր,

Եւ յաստուածեանն այն աւեր՝

Նշմարէ կեանս իմըն նոր:

Այս, մեռեալ իբրու զմի եւ սա յորդոց մարգ-

[կանէ.

Եւ քաջանիշ կերպարան գերմարդկային ցուցա-

Եւ սա գըրեալ ընդ մահու, [նէ,

Այլ ոչ մահու է գերեալ.

Նա եւ մահուան լըծարիւռ.

Սա լոկ սիրով է մեռեալ:

Այնպնի թագաւորն՝ որով միայն պակասէր՝

Եդեալ է ասա եւ ըլթագ մահու, սըրբեալ

[յիւրըն սէր.

Աստանօր մահ լուծանի.

Պահուսաք դժոխոց կողոպտին,

Սանդարամեա կործանի,

Ոչ ևս ճարնչէն գրուիք բանտին

Արդ՝ զի՞ նկատես ասա սիրտ դու. ոչ աւաստիկ սա

[քո կեանք.

Ձոր գիտէիր անմահ սէր՝ ծանիր մահու յաղ-

[թականք.

Նա՛ եւ զքեզ խկ մահացուդ՝

Անմահ գործեւ ցանկացաւ,

Եւ յըմպեւ զուժպքո մահուդ՝

Յերեսըդ կեանս ժրպտեցաւ:

Ոչ տեսանես համօրէն յաստուածունակն այն

[իրան

Քեզ եւ նմանեացըդ փայլեալ նիշ եւ կընիք հաշ-

[տարան...

Ե՛րթ, ս՛վ հէդ, մի զարհուրիր,

Ե՛րթ մուս ընդ դուռըն կողին,

Եւ սիւշ յառեալ հիացիր

Ընդ հուն սիրոյ փրկողին:

Ահաւադիկ սիրտ լըռեալ ի շարժմանց՝ ոչ ի սիրոյ.

Եւ յ՛մր ձեռաց պապաւում հարուածն ի նա եւ

[աղքոյ...

Ա՛հ, եւ գոցէ՛նք հարուած
 Ա՛հ, եւ գոցէ՛նք ինչ զէր՝
 Չոր չեա՛ հաստեալս առ Աստուած,
 Եւ սիրելիս՝ առ իւր սէր։

Ես ուրացայ, ես հարի՛ նայիք թմայսլ եւ մէ-
 Ղարհուրիմ ի հայեւ եւ հեռանալ չիշխեմ բնաւ։

Ու ընթանալիս կը թոտիս,
 Սէրն ի սորոտեալ ըստիտէս։

Խրակոյս եւ ոյժ տայ սրբոյի։
 Եւ երկուսեք տաճակապեալ՝ ես առ խաչին թա-
 Էջիկ կուգէք Տէր, լըցեր ըզտարաս, լըցից եւ
 Արի Աստուած իմ ի փառս.
 Յաւոցդ ի գա՛ն թող ինձ կեան...
 Այլ զին սրբիմ ես թըշուանս,
 Անդ՝ առկնայն կատարեալ։

Արդարութիւն չի եւ յաք՝ յարեան սրբում
 Սիրոյն ըստի, ո՛հ, ծածկէ զվերս, եւ չըկան անդ
 Ես լոկ յառեալ յոր հարի՛
 Եւ հանապաղ սիրելցից
 Չար զիս սիրեաց յոյժ կարի.
 Մեռայց ի սէրն եւ կեցից։

1816

...

ԲԱՍԽԻՆ
 ԶԿՈՒՐԾՍ ԵՒ ԴԱՌՆԱՅԻՆ

Աստուած մեռաւ, մեղաւ վասն իմ,
 Ես ուխտադրուէ՛ սիրոյն անձաւ
 Չրկայի նմա հաւատարիմ.
 Աւաղ, եզո՛ւկ հոգւոյս չըբառս։
 Սրբ ո՛ր է մահ, հիմ խնայէ յիս՝
 Հիմ չեղանեա հողիդ յինէն.
 Եւ թէ անաս գու Արարչիս
 Յէրբ կեեդ տնի մարմինքս իցին։
 Հիմ մեռեալ չէ եւս է մարմին։
 Չի հող իս սոց կեցէ՛ ազատսց
 Աստուած մեռաւ ի չոր փայտին,
 Ես ի գրգռնս կը թիմ յարաս։
 Կայ հանապաղ խաչն առաջի,
 Եւ իմ դեռ չէ փարեալ ի նմայ։
 Ոչ անտարած լոկ ի խաչի,
 Այլ եւ կըռեալ ի կիրս կամայ։
 Տարեկանաց առնելով գարձ՝
 Գընայ՝ նզ բնութիւն դադանի սառսուս.
 Սիրաքան ըզվէ մն հերձեալս յանկարծ
 Կայ յամառեալ եւ պընդակուս։
 Աստուած առնէ զմեզս արտալած,
 Ես ըզիրա ասմ ասպընջական.
 Ո՛հ, մեռանի վասն իմ Աստուած,
 Եւ ես մահուն եմ պարտական։
 Ես ինքն ետու զհոգիս ի մահ

Եւ ըզհաստիչ հոգւոյս ընդ իւրօ
Նա բարուԹիւն էր բուն անմահ
Եւ ի մահուն ետ ինձ համբոյր:

Աստուած սիրեաց զիս մահուցափօ

Եւ ի խաչէն սիրակարկառ

Արկ զինեւ գիրկ հոգեշջափ,
Փըչեաց ի գեմս իմ շունչ կայտառ:

Արի, փուԹա սիրա յոյլ պըղերգ,

ՓուԹա ի խաչ, ի ցաւ, ի մահ.

Տես, քանի՛ քաղցր Յիսուսիդ վերքօ

ՓուԹա ի խաչ ի ցաւս անահ:

Արկ գիրկ սիրով եւ համբուրիւ՝

Քամեա վիպակսըն ծիրանիս.

Եւ քաղցրացիր գեշեր եւ արև

Հըսկեալ յանկեան պատուանդանիս:

Աւաղակին խաչակցելոյ

Գոչեա ձայնիւ, Յիշեա զիս Տէր

ՅարբայուԹեանդ հանդերձելոյ.

Զոր այդքան մեծ մահու գնեցեր:

1852

Ի ՏԱՊԱՆ ՅԻՍՈՒՍԻ

Ե՛կ մերձաւոր իմ... ընդ հովանեաւ վիմիդ :
Ե՛րգ .

Հիմ շըւարեալ եւ սըխուր

Շուրջ Թափառիս, ո՛վ իմ սիրա.

Աչքքօ ճեպին խիրա ի խիրա,

Եւ չըգիտես գիմեւ ո՛ւր:

Ըզմահահոսան ըզփողդօԹ

Թո՛ղ արդ, էջ սեաւ ի գիտէն,

Եւ ըստ կարմիր կայլակէն

Ե՛ւ զհեա Սիրոյն անյողդողդ:

Մի՛ զարմանա ահաԹուրդ

Ի տապանէն ցըրտագին.

Թէ եւ նընջէ անդ մարմին՝

Սիրա Յիսուսիդ կայ արԹուր.

Թընդիւնք նորին ետ ընդ եա

ՅաղԹեալ վիմին կարծրակուր՝

Սիրոյ Թըւչին քեզ ի հուր,

Սիրոյ բանան քեզ ըզհեա:

Ե՛րԹ սըրտիկ, էրԹ առ Յիսուս.

Յայնկոյս որմոյն ի Թաքուստ

Վանդակապան ի ներքուստ՝

Նա սիրաձայն տայ քեզ յոյս.

« Արի եւ Է՛կ մերձաւոր

Փարմամբ խաչիս մեռուծակ.

Արի եւ Է՛կ դու հոգեակ

Լուացեալ յարեան իմ բոսոր.

Գործ իմ մատին , արեան գին ,
 Ե՛կ աղաւելեան ինձ հոգիք ,
 Ընդ հովանեաւ ե՛կ վնօրդ ,
 Ե՛կ ի սրտսուսար իմ շիրմին :
 Յոյց ինձ ըզգեմքդ ամօթլեած
 Լըսեցո՞ղ զձայն քո գողգող
 Աս ձայնն իմ այս արքայագոջ
 Ձի մաս՝ սըրտիս բռնել ոչ ածոյ՛ն :
 Ահա թըռչիմ գամ Յիսուսն ,
 Քաղցըր ձայնիդ կարեալ ուշ :
 Իհասկցուածեանն եւեթ փուշ
 Կայր՝ անըըրպէս ընդ երկղոս :
 Արդ ինձ լիցի՛ յայսմ հետէ
 Իմ սիրելին , ու էս սըմուս
 Ընդ սիրա որ անդ արթուն կայ
 Սիրա իմ սիրտը հըսկեցէ :
 Մինչեւ ըստուերըն շարժին ,
 Մահն ու մըթարըն այն աղօս ,
 Եւ յարուածեանն առաւօտ
 Ծաղեսցէ՛ նդ նիդ տապանին :
 Այլ ո՛ր կացցեաւ սիրա իմ , ահ ,
 Անմահ ու թեանն էւ մահունն
 Ետ զկապ անկեալ սիրասունն ,
 Կէս մահայնուդ կէս անմահ :
 Իամբանանկան զերդ լամբար
 Ըղկափարէն արդեօք կաս ,
 Թէ մըշտաշարժ ի ձեմ գաս
 Ի սենեկին սըրբատար ,
 Արդեօք կացցէս՝ յար յակճիս
 Թէ համբուրից ի համբոյր

Փարեալ ի գէմս ոսկեթոյր
 Թաւալիցիս շուրջ ի հիւս
 Իբրեւ սիրոյ կայծակունս բոլոր
 Նըւալ ի բիբս անգր անկցին
 Թէ իբրեւ շուշուքս հրովիս
 Հառաչիցես ի շըրթունս :
 Իբրեւ սըստիկ արքամաշուրթ
 Կայցեն յանշարժն ի ձակաս
 Թէ իբր երանդ վարդահատ
 Գունել զինացն ըզգալուի
 Իբրեւ նըւէր՝ արգասիբ
 Գարշապարին գիցիս մերձ ,
 Թէ առ վերին կողահերձ
 Կանգնիս սրահնակ սիրալեր ,
 Ձհամայն մարմնովն իբրեւ խուկի
 Ծաւալիցին եւ զմեռաս
 Թէ գիցես զնշըս մաքուրս
 Սուգարս սնարից սրազարունս :
 Քաղցր է ամէնն ինձ , ո՛վ Տէր .
 Այլ սիրա՛ ըզսիրա խնդրէ զքոյն ,
 Աէր իմ զաղբեր իւր սիրոյն .
 Յանկամ ինդրեմ սիրա եւ սէր :
 Անդ ընդ կատոյտ կամարաւ
 Կրկնակ ձեռացդ հերձոտեալ ,
 Ի օրբասուն լանջաց փայլ
 Ընդ որ հայի սէրն անբաւ ,
 Սըրտիդ վերայ զսըրտին իմ
 Հանգուցանեմ երեկոս .
 Ընդ ելեւէջս իւր անձկոս
 Մեռանիմ , կեամ եւ զուգիմ :

Ո՛չ ճըմէցից սառնապէս
 Պանու բեռամբըս մեղաց,
 Զի ձայնդ ու արիւնդ զիս քաւեայ,
 Առ սէր սըրախդ չեմ ծանրես:
 Թաղեմ ի կեանս. անդ քամեմ
 Ի դէմս մահուն զիմ թախիծ,
 Մինչեւ դարձցի՝ խոր կայից
 Շունչդ աստուածեան սիրաձեմ:
 Մինչեւ թափեալ զայդ թըմբեր՝
 Բանաս զաչկունքդ յանվերջ լոյս.
 Յայնժամ վառեալ զկայծ սիրոյս
 Ի լոյս հոգւոյդ սիրալիր,
 Նոր նորոգեալ քեւ համայն
 Ամբարձ եւ զիս ի վիմէդ.
 Գոչեա ի ձայն խրնդաւէտ,
 « Յարեայ... յարեա՛ւ եւ սիրան այն »:

1844

ԱՌ ՀՐԵՇՏԱԿՆ

ՈՐ ՆՍՍԵՐ Ի ՎԻՄԻՆ

Յոյժ սըխրացեալ եմ ընդ քեզ
 Սիրուն Սերո՛ւբ լուսակէզ.
 Զխորդ պարզեալ զճողաթեւս
 Առ վարդասփիւռս այս արեւս,
 Ի կափարիչ ցուրտ վիմիս
 Անցեալ չըքեղըս բազմիս.
 Առ վէմն ու առ ոտս առաթուր
 Յընդես զմահուն սեւաւ մըրուր.
 Եւ յընդհանուր ահեղերս
 Քաղցրաձայնեալ տարփողես.
 Երկիցս ի վեր զաչս յակճիւ:
 Երեցս ի վայր տըւեալ հիւ:

Ասո՛, Սերուբ սիրակէզ.
 Հիմ աստանոր դադար քեզ.
 Թողեալ զկենաց զերծ դաւառ
 Ի սեամ մահուն կալ ոտնառ.
 Եւ ցերբ ի դուբն հայել յայն,
 Ի թաղելոյն իսկ ունայն: -

Ընդ այս ունայն եւ թափուր
 Ընդ այս տապան կենսատուր,
 Ընդ այս՝ Սերուբս երկնից
 Գամ սըխրացեալ հրաշալից:

Սա ոչ կենաց ոչ մահու,
 Վայր հմն ահեղ սիրարիու,
 Վէմ ի լեանէ տառածոյ,
 Եւ ինքն է առն Աստուծոյ.
 Չանց արարեալ զիւր քահու
 Աստուած հանգէ ի բարձ մահու.
 Չարթուցանէ զմահ ի կեանս՝
 Անմահութեան յալթականս:

Յոյս բովս չրաչից ո՛ւր ոչ դամբան՝
 Յապուշ կրթին միտք եւ բան...
 Ծանիր, ով մարդ, զի մեծ սէր
 Աստ՝բան յերկինս՝ եցոյց Տէր.

1852
 Գրողն ասն մահանց սմբոյն
 Եղի միտ դամբանքից, ասի
 Եմբոյցան յամբանայցրաբ՝
 Ետքեալ, սպար զմի վ սրբից՝
 Ետն յամբան դառն վ սրբից՝

Երկնային գաղղմ լուսն
 Երկն դարաք դեմասա Կնչ
 Ետաւաք ծղմբ բամբիք յամբոնի
 Ետաման յաթ առնան Կանու մ
 Երալ յմիտ միտք մ զիմք աս
 Ետանան մի միլյարան էի
 Ետիտան աս միաման սրա քմ
 Ետաստամբ մարտա սրա քմ
 Ետիմիդ սրա քմ ի սրա քմ
 Ետաւաղծ յամբոյցոյցս Կան

ՅԱՐԵԱԻ, ՉԷ ԱՍՏ

Յարեալ Քրիստոս. աւեախս
 Եւ սրգաւոր իմ սըրտիս,
 Յարեալ էից կենսատուն:
 Չարթիր, հոգի զըւարթուն,
 Լոյծ, ըզկապանս մահահոտ,
 Սրկ ըզքեւ լոյս անաղօտ.
 Կեաց Քրիստոսի անմեկին,
 Վերամբարձցիս ընդ նրմին:
 Մահքո՛ սերման է թըմբիր,
 Անկեալ զմարմնով հոգեկիր,
 Գարնանագեղ ծաղկան սկս
 Ի նոր դու կեանս ընծիւղես:
 Թէ վերս ի կողք ընկալար
 Եւ ի բոսոր թէ ներկար,
 Վարդակարմիր փայլեսցես
 Ի նորատունին ի հանդէս.
 Վասն ընկերին վըջալմբեր
 Շիթ արտասուաց թէ հեղեր,
 Մարդբոտայեա քեզ սըսակ
 Յերկնից կապես սարունակ: —
 Թաթիւ ոտից յեց ի վէմ,
 Իբրեւ արմաւ լուսաճեմ՝
 Ընդ Քրիստոսի քաջապէս
 Գողջեր այժմէն՝ Յարեայ ես: —

Մագդաղենի գ. անվեհեր,
 Յով ընթանաս խընկաբեր.
 Յարեայ. ոչ ևս մեռանիմ
 Փուլթով առ Հայր թըռանիմ:
 Է՛ջ դու հրեշտակի յարիւոյն,
 Գո՛գ խընդարակաց Սիրելւոյն.
 « Յարեա՛ւ սիրան այն, ոչ է ասա ».
 Եւ ցոյց զերկնից առագաստ:

1844

ԱՒԵՏԻՒ

ՅԱՐՈՒԹԵՍԱՆ ԲՐԻՍՏՈՍԻ

Օրհնուցիւնք քեզ, Հայրըզ լուսոյ,
 Յարեաւ Որդին քո ծոցածին.
 Օրհնուցիւնք քեզ, Հոգի սրբոյ,
 Յարեաւ ընկեր փառաց քոյին:
 Աւետիս քեզ, Տիրուհի՛ կոյս,
 Յարեաւ որդին քո տէր Յետու:
 Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց
 Աւե՛տք էից եւ եղէլոց:
 Աւետիս ձեզ երկինք սոյժառ,
 Յարեաւ բնակիչն ձեր Քրիստոս.
 Աւետիս քեզ երկիր խոնարհ,
 Յարեաւ փրկիչն քո Քրիստոս.
 Աւետիս ձեզ ամէն աշխարհք,
 Յարեաւ հաստիչն ձեր Քրիստոս.
 Աւետիս ձեզ լոյսք եւ խաւարք,
 Յարեաւ արև ձեզ նոր՝ Քրիստոս:
 Աւետիս ձեզ, ո՛վ կենդանիք,
 Յարեաւ Քրիստոս, ոչ մեռանիք.
 Աւետիս ձեզ եւս ո՛վ մեռալք,
 Յարեաւ Քրիստոս. լիջիք լուծեալք:
 Քրիստոս յարեաւ ի մեռելոց
 Աւետք էից եւ եղէլոց:

ՔՐԻՍՏՈՍ

ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌՆԵԼՈՑ

Միգահալած արփւոյ նմանեալ արեւու,
 Եւ Թափանցիկ ընդ շերմին փակս ահարկու,
 Իբր ի Թիկանց լերանց մայրեաց վարսահոծ
 Եւ բարդ ի բարդ միգաց մղեղաց վարեւոյ,
 Երեւեցաւ լոյսն յարուածեան,
 Ծագեաց արեւ կենդանութեան:
 Եւ որպէս վարդբ վառեալք ի նշոյլս օրաբերս՝
 Եւ ցօղափինք յամպոց Թափին ընդ եթերս
 Կամրածեւեան մշտամանուկ հոյլք խորտեաշ
 Ի խառնարան կենաց մահու հիւհրաշ՝
 Ի գերեզմանն կենսակիր,
 Որ խանձարբեաց նոր մեզ զերկիր:—
 Ճաճանջագեղ ճարտարք, հրաւոր ձեանաւորք,
 Հաշտեալք ընդ մեզ՝ տեսիլք երբեմն ահաւորք,
 Տապալեցէք զգերեզմանիդ կափարիչ,
 Բացէք զտանիս մահու, յերգիս լուսաթուրիչ.
 Ոչ եւս մահու իցէ աման
 Որ ընձիւղեաց կեանս աննրման:
 Բոցացընցուղ յարուցելոյն լոյս կանխիկ՝
 Զքահանայիցն նախանձու եւոյժ կնիք.
 Պահապանացն զարհուրեալք եւ փախեան՝
 Զինչ վերջապահք մահու արխուր տերուէ:—
 Էջ հրեշտակդ, էջ, կաց ի վիմիդ
 Եւ հրաշայիր ընդ դործ Հասաչիդ:—

Մնհուպ Թաթիւք յեցեալ ծրղեօք ըսպիտակ
 Յեզր ի վիմին՝ տիեզերազուարճն այն հրեշտակ,
 Սաւառնածայն Թեւոյն հանդէս առնելով
 Եւ կարկառեալ՝ գերկինս, երկիր եւ ընդ ծով,
 Գոչէ շրթամբն վարդահուր,
 «Յարեաւ Քրիստոս, կեանք ընդհա-
 նուր»:—
 Ի յարուածեան ձայնէ տիեզերք հըռչակին.
 Կանգնէ Ագամ զճանրացեալ գլուխն ընդ եր-
 կին,
 Խըթէ ի կող կողաբուսին խարուսիկ,
 Զանմահութեան մատուցեալ ստոյգըն խայ-
 րիք.
 Բանի յԵգեմ հինն առաքաստ,
 Եւ օձն առ դրամբն կայ տապաստ:
 Նոր Եւա, նորոց կենաց բարունակ,
 Մայր աշխարհի՝ խընդայ ծոցիւ կուսանակ,
 Եւ քան ըզբոյր ծովահերձին Թըմբկուհի
 Մեծանըւագս հարու աւետս աշխարհի,
 «Յարեաւ որդեակն իմ միածին,
 Եւ արհաւիրք մահուն անցն»:—
 Հոյլ հոպոպեօք ալէճբիովք խառն ընդ ուս՝
 Մաքդադէնւոյն սրբեալ զանդուսպ արտա-
 սուս,
 Սլանայ սիրոյն սլացիւք առ քորս ջայլամարս,
 Ու առ կոչեցեալան ի Քրիստոսէ իւր եղբարս,
 «Փուծացարուք ի Գալիլէ,
 Քանզի Քրիստոս յարուցեալ է»:—
 Պընդեա՛ Պեարէ ըզլիթուցեալ դարշապար
 Ընդ Որոտման քաջընթացիկ զուգապար,

Որ առ անբուն սիրոյն քնարան կարկառեալ
Եւ զանհալին ոչ գտանելով ծոցընկալ,
«Սրգարեւ սէրն իմ ոչ է աստ»,
Ասէ ցհաւաս թերահաւատ:

Ձուրացութեանն արտօսը հէրքէ սուրբ զայրոյթ
Եւ զյարըստօք մահուն վաղեալ ծերն ընդ
փոյթ՝

Յուզեալ խուզէ յահեղասքանչ յատակին,
Յոր երեք օր տարածեցաւ կենդանին.

Եւ զվայրասպարըն պատրուակ
Թօթափէ յօդս՝ ըզվարչամակ:

Վէմն հաւատոյ եւ ժիր սիրոյն արբանեակ
Ձեռն ի ձեռին փութան յընկերքն բանակ.

Աւետարան լինին եւ ձայնքն եւ ընթաց.

«Րաբունին յարեան էղբարք, իբր ասաց.

Ելցուք ի վայրըն ժամագիր.

Անդ է Յիսուս, մէք զի՛ թըմբիր»...:

Ի ժամագիրն, ի ժամագիրն անդր ի վեր

Փութացարուք, ո՛վ մահացուք տիրասէր.

Քանզի յարեան Քրիստոս ի յոյս մեռելոց.

Ո՛ւր արդ մահու յաղթուի, ո՛ւր խայթ գժո-
խոց:

Յարեան Քրիստոս. դու սիրա, ո՛ւր կաս

Ընդ խընկաբերան հիմ գէթ չըդաս:

Ձարթիր, զարթիր ի տրամութեան տապանէդ,

Լուացիր ի զեղծ ու ի կող Փրկչիդ կենսաւէտ.

Վառեա զլապտեր սիրոյդ ի լոյս յարութեան,

Ի կէտ խրախիցն ընթա՛ ի սար գալիչեան.

Ո՛չ լըսիցես զողջոյնս Փրկչին՝

Յորմէ երկիր ու երկինք հընչին.

Արատսուողքն անդ էն, խնկաբերքն անդ, հօսն
անդ,

Որ ի հովուէն զըրկեալ երթայր աստեւանդ.
Տիրամայրն անդ. եւ հրեշտակք անդ հօւր թեւ
ւօք.

Եւ Յարուցեալն անդ փարելով ըղնօքք,
Կենդանարարըս բարբառի.

«Ես Յարութիւն եմ աշխարհի»:

ՕՐՀՆԵՐԳԻ ՍԻՐՈՅ

Ի ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ

ՅԱՐԵՍՄՈՒ ՍՍՏՈՒՍԵ

Ձայն յարուժեան լեզի եղեւ
Ի տեղւոյ մահու.

Եւ նորալոյս ծագեաց արեւ
Ի մեք մըթարկու:

Արձակեցաւ հով կենսաշունչ.
Շունչք են համարձակ.

Հաւածի ստուեր շիրմացն ի յունջ
Ի վայրս անյատակ:

Ձարթնու բնութիւն, թափե փութով
Ըզթանձրըն թըմբիր.

Եւ վարանեալքըն սեւա սըգով
Պըճնին ի կարմիր.

Կանգնին խոնարհ եւ սըղմասիկ
Հովտացըն շուշանք:

Եւ ծիծաղի ծընգեալ ծաղիկ
Ի ցօլ երփնաղանգ.

Յաստուածային արեան կաթլեաց
Վառ առեալ վարդից:

Ընդ թառամեալ դասակս հոգեաց
Ճախրեն թեւակից:

Ձայն յարուժեանըն հըռչակի,
Հարըստանայ յոյս.

Եւ արհաւիրք փախըստակի
Խուճապեալ ասն խոյս:

Կործանէ զվրան իւր բանսարկուն՝
Ձոր կանգնեաց յերկրի,

Եւ ժողովեալ զհալըսըն թաքուն
Ի բաց վըսարի:

Քանզի փրկեաց Յիսուս զաշխարհս.
Սա մարդ է երկնից.

Սուղաւ սատան յանլոյս սանդարս,
Խըցան գրունք ելից:

Քանզի նընջեաց ի խոր ստուերի
Որդի Աստուծոյ,

Ձյաւխտենից նընջեալն յերկրի
Ձարթոյց ի բընոյ:

Եւ ահա սուրբ են երկնքս այս
Ի մահուն թիւնոյ.

Եւ ահա սուրբ է երկիրս այս
Յանիծից նախնոյ:

Պայծառացաւ բնութիւն համայն.
Նոր է առաւօտ.

Եւ սրբատաշ տապանակն այն
Բուրէ խընկահոտ:

Անմահութեան հոտ հարկանի.
Հանգա զմայլեսցուք.

Ի Գալիլեայ գրախտ նոր բանի.
Հանգա փութասցուք:

Ելէք, եղբարք, յոստ անտառին,
Ելէք, բորք, յովևա,

Հատէք ըզխայծն ի խընծորին
Եւ զվարդն ի փըթիթ.

Բողորեցէք սրսկս ի ծաղկանց
Անահ եւ ըզգուշ.

Զի Յարուցեալն ընդ այդն էանց,
 Եւ դօտացաւ փուշ,
 Յամաբեցաւ ծառն չարին
 Պատահեալ ի խաչ.
 Զախեաց ըզբլուխ կամահորին՝
 Կոյսն պարառաջ:
 Յօրինեսցուք սյարըս մաքուրս,
 Քորք իմ եւ եղբարք.
 Հարցուք սրտիւ ծափս անտըխուրս,
 Զի բարձան դըժուարք:
 Զայնն յարութեան ընդ տիեզերս
 Հըռչակէ զՅիսուս.
 Եւ դիտէ զնա Հայրն ընդ եթերս՝
 Որ հաս զարասուս.
 Որոյ քակեալ խաչին նըդաւ
 Զամուրըս մահու,
 Կորզեաց զքերեալս, աւար անբաւ,
 Եբարձ յուս յաղթիու.
 Եհար ըզմահ, ըզմեղս ըսպան,
 Իժոխոց աւեր ած...
 Ու երկինք ու երկիր վկայեն միաբան
 Թէ Յարեաւ Աստուած:

ՅԱՂԹԵՐԳ

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ

Սըրբեսցին արտասուք.
 Նորահրաշ աւետիք.
 Լըռեաց շիրմին շառաչուկ,
 Սեաւ Սահու սպառնալիք՝
 Որպէս սին հովանիք
 Խուսափեալ ծըւէն առ ծըւէն
 Հալածեցան ի Հըսկողէն.
 Հերքեալ լուծաւ Հրէից նախանձ
 Կենդանացաւ մեռեալն անյանց.
 Ահաբեկեալ փախչին պահնակք
 Զինաթափք լըլկեալք կորքամակք.
 Ո՛վ Կայիփաս եւ Աննա,
 Զուր զառածիք. Յարեաւ Նա:
 Յօղաթուրմ զինչ շուշան
 Ամեիփեալ յերկուն՝
 Հանդէք մարմինն հրաշազան.
 Սաւառնեալ սէր արթուն
 Շըպարէր զըսպեացն հուն.
 Նորէր նըկարէր նազէնի
 Ըզտարփատենչ գէմք տէրունի.
 Խայծէին այտք ու աչկունքն անոյշ
 Վառեալք ի վարդ եւ ի մանոյշ:
 Ազգուժն առեալ սըրտին յանկարծ՝
 Հողովէր զանիւն ընկըրկած.
 Խնդրէր զհոգին յըլեմբեայ,

Ըղջրաժարեալն եւօրեայ :
 Զարթիր մի այլ նընջէս
 Պարմանիդ հուսածին .
 Հատեր փառօք զասպարէս ,
 Կւփահար դու չարին ,
 Թափող բիւր աւարին .
 Դրժոխք եւ մահուն շահապետ
 Յաթուրդ հարեալ կան դատափետ .
 Թաղծեալքն ի ստուերս ընդ յիսուն
 Արծարծեցան՝ հօգիք արդար . [դար՝
 Ահամ , Աբէլ՝ լուծեալ ըղգոյժ
 Վաղլաղէն յԵդեմ հոյս վակժոյժ : ...
 Արի՛ նիրհեալդ երըննիկ ,
 Լէր մեռելոց անգրանիկ : —

Որպէս բոց ի բոցոյ

Որպէս լոյս յարշաղուորչս
 Թափանց ընդ վէմն արասող
 Փայլակեաց ել ի դուրս .
 Հայեցաւ յընդհանուրս .
 Յառնուլ ճեմ ոտինըն վըստահ՝
 Հաղար հրասախ խուսափէ մահ :
 Ուրախ լէրուք երկիր ու երկին
 Միոյ ասն յարիք զօգեալ կրկին .
 Ուրախ լէր դու հօտ անտերուհչ ,
 Աւագիկ հովիւդ հեղաշունչ .
 Յուպ ըղցըպով ածեալ յուս՝
 Գայ խայտալով Տէր Յիսուս :
 Կանխեալ յէլս արեւու՝
 Արեւ նոր աշխարհի՝
 Յարեաւ Աստուած այցելու ,

Թըչնամիքն յերերի
 Փախեան զհետ խաւարի .
 Խորտակեալ փաղանդ առ փաղանդ
 Զուկք սանգարաց , վըհից իշխանք ,
 Սարսէ սատան լէրկ հողանի ,
 Ի փուլս ալուցն անհովանի . . .
 Սիրելեացն աչս ածէ Յիսուս
 Յաղթաբեր զնուլ զարդու յուս .
 Զուլեալ ի մի զմահ եւ կեանս՝
 Յանմահուծիւնս յաւիտեանս :
Սուզաւ խեռ Փարաուն
 Ծովակոծ աշխարհի :
 Նոր Մարիամ , մաաիր ծն ,
 Պարաուալ թմբկուհի
 Եւ հանուր թադուհի .
 Վերասցի քոյ սուրբ սըրտի սուգ .
 Մուտ ի սենեակ սիրոյդ անձուկ .
 Սիմէոնեան սուրն անկց՝ ի բաց .
 Քանզի զգլորեալս յարոյց կանգնեաց
 Որդին քոյ այդ մէն Միածին
 Յարուցեալն ի յոյս մեր ընաւին :
 Ուրախ լէր նոր կենաց Մայր ,
 Քեւ Յիսուսի եմք եղբայր :
Յընծուծեան հարցուք փող
 Աւետօք քաղցրաւաչ .
 Յարեաւ Աստուած մեր յաղթող :
 Փուծասցուք ընդ առաջ
 Փարելով յոսս եւ յաջ ,
 Զեռն ընդ կողմն ծերպ կարկառել ,
 Ի հուր սըրտէն սէր մեզ վառել .

Խընդիւ թընդիւ հոսել համայր
 Ընդ հետ շաւղացն անուշաբոյր,
 Կոխել զմահուն կապարձ՝ թափուր
 Դըժոխոց բըթեալ խայթոյ սուր.
 Պարզեալ ըղբւոջ խաչանիչ
 Յանմահուն թիւն երկնասիւշ:

1869

Ի ՀԱՄԲՍՂՈՒՄՆ ՏԵՍՈՒՆ

Համբարձէք միտք, համբարձէք միտք իմ ի վեր,
 Համբարձէք ի սէր.
 Ամբարձէք զսիրտ՝ մինչեւ ի կայս հրեշտակաց,
 Մինչեւ յինքն յԱստուած:
 Հիմ խոնարհեալ զեզերիս, սիրա, ի ստորեւս.
 Ամբարձիր վեր եւս.
 Ուր ցանկալին քո հանգիստ, լուսմըն բարեաց,
 Անդր ի վեր ամբարձ:
 Տեսանե՞ս, որ չափք են ելից ի բարձունս,
 Յերկնից խորուձիւնս.
 Վայր՝ յոր անգեղ ոչ ժամանեաց ալըն սուր,
 Ի ոչ արժւոյն փետուր.
 Պայծառութիւն տարածեալ անդ համասփիւռ,
 Եւ ճաճանչք բիւր բիւր.
 Լոյս ի միջին ծաւալեալ գողար եւ քնքոյշ
 Ի հայել անոյշ.
 Սպիտակարան հուն լուսակիզն ի նըմին,
 Եւ հետք անքընին.
 Անդ բոցեղէն զորաց յերկնից ստորիջուք՝
 Վերեւք երկնաչուք.
 Եւ կերպարան աստուածափառ ի միջի,
 Որ էրն ի խաչի.
 Այն որ սահեալ ի բարձանց՝ հան ի բարձունս
 Ըղխոնարհ բնութիւնս,

Եւ զառ ի գժոխս անկեալ մածեալս հաւասար՝
 Իւր պէս բարձր արար․
 Զբոցածօճակ քերովբէին կապտեալ սուր՝
 Թօթափեաց ըզհօւր․
 Ել սլացաւ էջ ի ծառատունկ սրգազգեաց
 Դրախախն՝ զոր աքնկեաց,
 Հար տապալեաց ըզբարձրածաղկ ծառս երկու,
 Ըղկենաց եւ մահու․
 Տաշեաց զուգեաց ըզբառածեւ իւր գործի
 Յոր կեանք մեր փորձի․
 Ու առեալ՝ ստ անձին՝ սրպէս հրակայ զլայնալիճ՝
 Կանգնեաց ի մահիճ՝
 Տարածեցաւ եւ պրկեցաւ պընդապլինդ․
 Արհաւիրք եւ խնդ։ —
 Արեգական տեսեալ շքրջէր զգէմս ի մուծ,
 Վէ՛մ գըզէր ի գուծ․
 Եւ նա՛րտասուեաց, գոչեաց, նընջեաց մահու
 Յարեան թաթաղուն․ [քուն,
 Էջ ի թըմբիրս զուարթունս, զարթոյց ըզթըմբւ-
 Եւ յարոյց ըզմեռեալս։ [բեալս
 Զարհուրեցան սանգարամեաք սոսկալիք,
 Եւ զերծան հոգիք․
 Յաստուածախառն թմբրուծեանցն եւ զար-
 Մահ ետես պակեաւ․ [թեաւ․
 Ընդ ամրափակ կարկառակոյտ վիմաբլուրս
 Ելանէր ի գուրս,
 Ընդ արշալոյսն առաւօտին բացեալ թեւս
 Թօթափէր թեթեւս,
 Զարդ՝ քան զայգուն քրքմահանգերձ ծիրանի
 Արկեալ գեղանի․

Եւ զսեւաշուք գործին փոխեալ լուսանիւծ,
 Էսա ընդ անուծ։
 Ի գալիլէան գէ՛մ եգեալ սար ի գխակ՝
 Կընքեաց զիւր վաստակ․
 Եմուտ ի գիրկ աստուածայինն աղեղան,
 Հատ նետ փայլական․
 Թըռեաւ, հարաւ ընդ դրունս երկնից մարգար-
 Արար մուտ եւ ել․ [գեւ․
 Եւ ժողովեալ որպէս հաւ զձագըս զիւրով,
 Ասըբոցըն ժողով,
 Ահա թըռչի երամովին բարձր ի մէնջ,
 Ի վայրն հոգետանչ։
 Կարմիր կաթեն կրկունք, կարմիր եւ դաստակ
 Վիրօք կապուտակ․
 Կարմիր կաթեն եւ տիգահար կողք փափկիկ,
 Եւ սըբբին հոգիք։
 Հոյք շուշանաց վարգից սփռին զիւրեւ ցիր՝
 Հրեշտակաց իւր ձիր․
 Եւ հեղանազ համատարած ի բաղուկ
 Սրբոցըն դասուք,
 Յաջ եւ յահեակ հերձեալ զերկինս խորագոյն՝
 Հուն գործէ սիրոյն․
 Յերանուծեանցըն մլտանէ առագաստ՝
 Յաջ Հօրըն պատրաստ․
 Ինքըն բազմի, սուրբք ըզնովաւ եւ զուարթունք
 Թաղան զինչ մանկունք․
 Եւ ի բարձանց արձակեալ աչս յաղթական
 Ի վայր սիրական,
 Ուր սանգըխաէր, կըրէր, սիրով մեռանէր,
 Սիրով եւ յաւնէր,

Տեսանէ զհետք տնօրէնութեանցն աստուա-
 Եւ զսիրողս ինքեան, [ծեան,
 Ընդ նոյն շաւիղ կարգայ խրախոյս՝ դաւ ըզհետ,
 Յերկնից Ժամակէտ։ . . .
 Արդ ճն ի խաչ, սիրտ, ընդ Յիսուս միացիր,
 Եւ զոյգ ամբարձիր։

ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Հոգիդ Սուրբ, ո՛վ որ միայնդ ես հոգի,
 Փըչեա եւ յիմ հոգիս, եւ քեւ նորոգի.
 Ո՛վ, որ հոգիդ իսկ ես հոգւոց ընդհանուր,
 Եւ յամենայն ծաւալեալ կեանս՝ դործել հուր.
 Ո՛վ, որ խաղաս յամենեսին եւ շարժիս,
 Եւ ասս խաղաւ շարժել վարել բընաւիս.
 Հոգի՛ լըցիչ ըստ պատկերի քում ծնելոց,
 Երկնից ինքնին դու եւ բղխուածն եղելոց:
 Հոգի՛ Աստուծոյ, ինքդ իսկ Աստուած,
 Եւ յանէից ամող ի գոյ զընաւ հաստուած:
 Ո՛վ Հոգի, կեանք կենացս ու անձինըս հոգի.
 Սէր ի սըրտիս եւ լոյս մըտացըս միգի:
 Ո՛վ Հոգի, ամենալոյս կերպարան,
 Յորմէ փախչին խաւար եւ թօհք խառնարան.
 Որ զամենայն հոգեւորես՝ յոր մերձիս,
 Եւ յորոց կաս հեռի՛ դառնան յանշունչ գիս:
 Ամենաբաւ Հոգի, ու ես եմ՝ հոգի խուն,
 Այլ անբաւիդ պատկեր, լինիմ քեւ անհուն:
 Հոգի՛ պէսպէս շնորհաց եւ հայր հեղութեան,
 Որ զանապատ սիրես եւ վայր ըրուութեան,
 Հանգիւր, հանգիւր եւ ի հոգիս այս կարօտ,
 Որ յամենայն հանգչիս՝ բնաւին անկարօտ.
 Աղաւնակերպ ի Փառակիցդ որ հանգեար,
 Յորժամ իմովըս պատկերաւ յերկրի դայր.
 Եւ յիս՝ զնորայն կրնիք բերողս ի ջըրին՝
 Հանգիւր եւ յիս Հոգիդ հանգարտ եւ ըրին.

Եւ թէ թընդմամբ թեւեւ հաճիս եւ հըրով,
 Երկնախօսիկ լեզուաւ հանգիւր յիս սիրով:
 Որ զսյարդախօս լեզուս եդեր անգիտաց
 Արքայու թեանդ աւետարան անմոռաց.
 Բայ զարխեալ բերան սրտիս յորհնու թիւն
 Եւ երգեսցէ 'սպառ անձն իմ քեզ միաբուն:
 Դու որ յանդունդս հին խօրատանջ խառվակոծ՝
 Թեւատարած փարեալ փըչեալ սիրաբոց՝
 Զեռանդնապոյտըն ցածուցեր փոթորիկ,
 Ու ի հրաշագարդ լանջացդ հատեր ըյս քաղց
 րիկ,
 Ի տատանեալ արպ տարերաց թաքթաքուր
 Թարքմանելով զաստուածու թիւնդ ընդհա-
 նուր,
 Փըչեա՛, շըրջեա՛, խաղա սլացիր դու եւ յիս,
 Լըցցի՛, աեսցէ՛, կեցցէ՛ եւ իմ քեզ հոգիս,
 Որ առանց քո խորախոր վիհ է ունայն:
 Հոգիացիր յիս, եւ ստանամ զամենայն:
 Տաճար է քեզ սիրտս այս, եկնիսա իտան քում,
 Կացո պահանկ գըրանցս ըզնորհք անպա-
 տում:
 Եւ յոր մտանես դուգ՝ մի մըացէ 'նդ այնօտար,
 Այլ համարձակ քեզ լոկ իցէ ճանապարհ:
 Հոգիդ Աստուած, յիշեա՛ զ'իմ իսկ ես հոգի,
 Քեւ կեայ եւ քեւ անձն իմ խաղայ փոքրօգի:
 Հանդա սլացեալ ի հրեղինաց քոց կառաց
 Հանգիր հեզիկ եւ ի հոգիս խոնարհաց.
 Կամ ի ծըրար թիկնամիջաց քոց անձայր
 Բարձեալ եւ զիս՝ խաղացո՛ յով եւ քո վայր:

Ի ՏՕՆ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵՍՆ

ՅԻՍՈՒՄԻ

« Ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շքեցաւ » : ԵՐԵՄ՝.

Ընդէր փոխեալ արեղերացըս պատկեր,
 Երկինք խոնարհք, երկիր այսօր ձիւղ ի վեր:
 Վերինք, ներքինք, ալ եւ ձախ մի տուն յա-
 մայր,
 Յոր հըռչակի հասարակաց տէրն եւ հայր:
 Այն որ թողեալ զյաւելանինց զօրու թիւնս
 Գայ հեղաձե՛մ ի մահացուաց բնակու թիւնս.
 Ըզմահացուի տուեալ զմարմին եւ զարիւն
 Յանմահական կոչէ ի սոնըս սիրուն: [բիր,
 Զարթուցեալ աղք մարդկան՝ մերժէ զհին թըմ
 Եւ ամենայն հասակք այսօր զուգակիր:
 Մայր եւ մանկիկ, այրաքաջ, թոյլ արեւոյթ,
 Ժիր պատանեակք եւ օրիորդք փոյթ ընդ
 փոյթ,
 Խաղմից ծառայ, երկվարաց յոխորտ պեա,
 Եւ աղծիկեր խաղաղու թեան վարդապետ,
 Ընդ աղբատին ընթացակից մեծատուն,
 Որք եւ այրի, եւ խընամոտ ձեռընտուն,
 Ամենեքին յաստուածայինս երթան տօն.
 Ամենեցուն մի սիրտ մի սէր մի պաշտօն.
 Խաչ եւ սուսեր դիրկա արկանեն ի համբոյր,
 Զըկայ խըաիր այսօր ընդ բահ եւ փետուր:
 Զինչ առաւել է առ Հաստչին հող քան հող:

կամ թէ բեհեզ իցէ քան զձունձըն փայլող .
 Եւ սակեմանք թէ հիւսք եւ զարդք ծածանին՝
 Ի հրապարակս ու ի զդաստացեալ շինանին ,
 Եւ բարեքիկ թէ ժողովուրդն ըզգենու ,
 Ծնոր հակալէք են Տեառն եւ ցոյցք օրհնեդու :
 Յաղթանակաց պարգէն նըշանս եւ տաճարք ,
 Դրօջք եւ նափորտք , փողփողին ջահք եւ լամ
 Եւսպըսակն եկեղեցի յայն ժողով՝ [պարք .
 Գայ զինուորեալն եւ վըշտակիրն եւ յաղթող .
 Եւսն վերնայինցն երանեւեաց անդ հողէք
 Հանդէս առնեն ի սուրբ պատկերս եւ կընիք .
 Եւ կիսասուգ՝ երկրորդ՝ մաղթողք ջահակիր՝
 Հրեշտակք են անդ հոգւոց բանախն վըշտակիր .
 Խուճք արարեալ նոքօք՝ երրորդք եւ մարդկան՝
 Իբրու զինուորք կենաց մահու մէջ խաղան .
 Ընդ ծաղկազարդ մարդասարիսպ ճանասարհ՝
 Տանին զՕճեալն յաւիտենից սիրաբար .
 Նորոյ Ղեւեացն օրդէք զուարթնոց դասակից
 Նորոյ հընչէն Սիոմիւն երգ սիրալից :
 Անդ մեղքասիրտ մատաղերամ մանկու թիւն՝
 Իբր ի սըրտէն սփռէ ծաղիլունս երփնագոյն .
 Եւ քան ըզվարդ գիմացն հաճոյ տայ՝ ա Աս
 տուած

Քօղ ըզգըլիով՝ կուսան՝ ըզդէմն ամօթլեած .
 Գերեզմանի դրացի հասակ երկրասպիշ՝
 Զանմահու թեան հոգւոյն առնու անդ ըզնիշ .
 Ոմն ըզհըրճուանս մատուցանէ , ոմն ըզսուգ .
 Հոսեցարո՞ւք եւ դուք իմ դաղտ արտասուք :
 Աստուած փառաց ահա իջեալ շըրջն նդ մեղ
 Հիացարո՞ւք երկնից ու երկրի ասպարէզ :

Երկինք գըլեալք յերկրէ՝ կացէք ի զընին .
 Երկիր , ուրախ լեր եւ լճուրքում Արարչն .
 « Խաղաղութիւն ձեզ մահացուք , ես եմ Տէր՝
 Որ ըստեղծի եւ փրկեցի զհօգիս ձեր .
 Ոչ շանթեռանդըն ցամամք դամ յաստեղաց ,
 Այլ հեղաբար իբրեւ ի մէջ սիրելեաց .
 Ես հաշտութեան եմ Աստուած , հայր եմ սի
 րոյ .
 Անցէք որդեակք , վառեալք ջահիւք հաւատոյ .
 Ուրախ լերուք արդարք , ահա վարձքըն ձեր .
 Մեղաւորք , բաց են եւ ձեզ դուր իմ եւ սէր :
 Ո՞ր սըդայք եւ լայք , հատէք զարտասուս ,
 Ես խընդու թեանց սըրբոց բըղնեմ ձեզ աղ
 բիւրս .
 Եւ դուք որ գայթ ի գայթ կրկին հետոց մէջ՝
 Կայք տատանեալք , առէք ըզըտս իմ անշէջ :
 Յիս , ո՛վ մարդիկ , մօտ մատերուք եւ տեսէք ,
 Անահայլ սուրբ համբոյրս ինձ տուք եւ առէք .
 Ահա մարմինս որ փոխանակ ձեր մեռաւ ,
 Ահա արիւնս բուժիչ հոգւոցդ ըզծարաւ .
 Ճաշակեցէք ու արբէք եւ կեայք յաւիտեան .
 Զի յարութիւն եմ ձեր եւ կեանք անվախճան :
 Յինէն ողջոյն տուք եւ մահուն ի դադար .
 Ինեւ՝ մեռեալք են կենդանիք հաւասար .
 Որք հաւատայք եւ հետեւէք ձեր Փրկչիս
 Վայելեսլէք յարբայութեան իմում զիս » :
 Սիրտք քաջայոյսք թեթեւաբեռն դառնան
 Եբրեւ դուժարք ի հանդիսէ յաղթական .
 Պանծան յԱստուած՝ որ երեւեալ ի յերկրի՝
 Եըրջէր ընդ մեզ իբրեւ եղբարց առ երկ .

Շարժեալ խըմբիւք իբրև ալիք յովկիան,
Երկըրպագեն դարչապարոյցն աստուածեան.
Խառնին յիրար խուռնիք և ծաղկուռք երփնե-
րանդ,

Բարբառ շըրթանց եւ շեփորոց արձագանդք.
«Փանք եկեղոյդ առ մեզ՝ փրկչիդ Յիսուսի,
Փառք սուրբ խաչիդ՝ զարդու հըղօր քո ուսի.
Փառք սուրբ մարմնոյդ, կենդանարարդ եւ
արեան,

Փառք սուրբ սիրոյ սըրտիդ, փանք, փանք
յաւխեան»:

1844

ՏԵՕՐԻՆԱԿԱՆՔ

Կ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

Կ ՈՒ Ս Ա Կ Ա Ն

ՈՂՋ ԼԵՐ ԹՍԳՈՒՀԻ

Ողջ լեր թագունհի
Երկնից եւ երկրի.
Գըթուլթեան նըժար
Մահացուաց թըշուառ.
Քաղցրուլթեան աղբեր
Ի ցաւըս մեր բիւր.
Ողջ լեր, մայր, ողջ լեր,
Ապաւեն յոյս մեր:
Առքեղ բարձրագոյն
Սըրտիւք ի թընդոջ՝
Դրախտէն արտալած
Յովհաս արտասուաց
Որդիքս Եւայի,
Կարգամք, թագունհի.
Ողջ լեր, մայր, ողջ լեր
Ապաւեն յոյս մեր:
Լալա հաւաչ քեզ
Մաղթեմք՝ մօրըդ հեզ.

ՄԻՐ ՍՍԻՈՐ

Մատանց տատանմամբ
 Սիրոյդ ի պաշտօնամբ
 Զըգեմբ ի բարձունս
 Կողկողեալ աչիւննս .
 Ողբէր, մայր, ողբէր
 Ապաւէն յոյս մեր :
 Միջնորդ առ Որդիդ
 Լէր գեռափրթիթ ,
 Առ բողբոջըն սըտուղ
 Ծոցոյդ շնորհարուղն ,
 Ի վիշտըս մեր՝ դէւր
 Շնորհեա մըտադիւր .
 Ողբէր, մայր, ողբէր
 Ապաւէն յոյս մեր :
 Եւ ցոյց մեզ շօնուս
 Յանջատման հոգւոյս ,
 Ըստ խոստմանց նորին ,
 Ընդ սուրբս յեթերին
 Օրհնել զնա եւ զբեղ՝
 Սըրտիւք սիրակէզ .
 Ողբէր այժմ, յաւէտ ,
 Մայր մեր անձկաւէտ :

1843

ՅԱՆՍՐԱՏ ՅՂՈՒԹԻԻՆ

Ե Ի Ի ԾՆՈՒՆԴ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Աստուածային հաճութեանց գեղածիծաղ ծի-
 րանի՝
 Որ զըլորտիւք մըրըրայն յաւիտենիս հարկանի ,
 Փոյլատակեալ անթափանց ,
 Եւ հուպ՝ թըրև առնել զանց .
 Յոր կառուցեալ մըշտաշարժդ՝ եւ ճապաղեալ
 յանբոյթ խաղ
 Մանրածաւաղ վէտըս վէտըս ճօճիս կաս եւ խա՝
 Ի յաղտաղտուկն ի փրփուր
 Քան ի մըրէն վառեալ հուր .
 Ի սղմասիկ յատակաց ծովակէնցաղ անդընդոց
 Իբըր յանկարծոյն մարդարիտս այս վերբերեալ
 Լուսածոց ,
 Ընդ որ գըրտողն հիացաւ ,
 Զի ոչ գործեօք ըստացաւ .
 Ըղևայծ եւ ցանց սըփռէին մարդիկ զմըրրիեալ
 մըրկանամբ .
 Յալուց օդոց փութացեալ վարդ ժըպտեցան կու՝
 սան ամբ ,
 Սմբք որ շէկնեալ ընդ Եւայն
 Դօղեալ կային ցարդ ունայն ,
 Եւ տէր Եհէրձ զամպս յուովս , Եհէրձ զաղիս նա
 բազում՝

Եւ որսացաւ զգեղազանն ի գոյս փառացն անառ-
տում:

Ըջբէշ, չքքնաղ օրխորդ՝
Քան ըզբնուածիւն ռահահորդ:

Ագամային ոչ բաւեն աչք յեռութեանըդ քընին,
Ընդ այնքան հրաչս հանգուրժեւ իսկ ուրանայ
եւ երկին:

Սխրանալ լոկ եւ հայել,

Սյս եւ վերնոցն է վայել:

Այլ ի հեղիկ քո 'նծայման, ի ծաւալէն թում
յերկիր:

Իբր արշալոյս վարդահատ, իբրեւ ըզցօլ քըրք-
մալեր

Սարսեն բնութիւնք ըստօրին,

Եւ յաւիտեանքն հաստատին:

Անմահութեանն արեւու՝ յոր Տէր հաստեաց
զմարդոյն զարմ,

Եւ բանսարկուին գրժանօք խաւարեցաւ ապա-
ժամ,

Վանեալ գու զգարն հիւսիսեակ

Ծագես անմուտ արուսեակ:

Եւ յանգրանիկն ի նըշոյլ կենսացընցուղ ակին
քում

Վանեալ ըստուերք երկրամածք ծրարին ի վայրս
ապառում:

Պատին զաչօք գոռողին

Որ արօսեակն էր նախկին:

Ի բարձրագոյն ծագս՝ յոր կալ բաւէր բնութիւն
եղական՝

Անդ հաստեցաւ հրաշափառն ի զօրութիւնս վեր-
նական:

Մի կէտ քան զննքն ի վեր կայր:

Եւ այն Աստուածն էր յամայր:

Ասաց շարժեւ քայլ մի լոկ ու ի դահ բաղմէլ
Որէին:

Ընդ պատուանդանն հրաչալի հարեալ՝ անկաւ
յալս ստօրին,

Եւ խորք բացան ընդ նովաւ,

Եւ յատակացն ոչ է յաւ:

Անտուսա զհըպարտսըն շանթեալ խորհուրդս
հրակիծ օձաձեւ՝

Ու ի տարրական գրդալիս գեղեալ զլեզուն մա-
հաթեւ,

Զարդեւականն էօժ խայր

Կարթեաց ձրգեաց զմարդն ի վայր:

Ի խորագոյն արգ խանթից կորաքամակ մարդ-
կութեան՝

Նոր դու հաստեալ արուսեակ ի գերուսակ կառ-
չիս կայն,

Խոնարհութեամբ ինքնաբոյս՝

Մըղեալ յերբեակն անդր ի լոյս:

Յորմէ սըփռեալ զկենսածուդ ի խորս խորոց
ճառագայթ:

Զարթնու եւ կոյսն օձախաբ, որ ի մրդոյն որո-
գայթ՝

Փակեաց զոր բացս եւս կամէր

Եւ բանայ՝ ըգքեւ զաչս ի վեր:

Իւրանման յերեւոյթեւ գերագոյն ի հաստուած
Տեսանէ զկոյսդ անարատ, եւ տեսանէ անդ զԱս-
տուած,

Եւ ճանաչէ զքեզ կին կոյս

Օձին ջաղխող խորասոյդ:

Շունչ աստուածեան իջանէ յադամայինն որ շըր
Թունս,

Սանձակօժեալ ըզարսփանս եւ լուծանէ զՏին
երկունս.

Ծընունդք շնորհաց արձակին:

Դրոշնք գրախտին ոչ եւս փակին:...

Բարդաւաճեաց դու աճեաց, Էլ խոնարհեա՛ւ
բարձըր Լէր,

Արեդական անձկալոյ պատրաստեալ ծոց լու-
սաբեր,

Յուսոյ կեհաց արշալոյս

Ու անմահութեան Լէր մայր Կոյս:

ՅԱՆՈՒՆ

ԾԱՐԻԱՄՈՒ ՏԻՐԱՄՈՐ

Այն քաղցր որ յերկնուստ ղողանջ,

Այն քաղցըր դաբնչիւն յականջ,

Զոր շար անմահիցն ի սէր

Այսօր յարեւո՛ն ի լոյս

Գեղգեղ հընչերմիս ասէր,

Այն քաղցր էր անունդ, ո՛վ Կոյս:

Ըզբեղ ձայնէր ամին առ ամբ,

Ըզբեղ՝ երկնից ծիրն ողջամբ.

Զեփիւս շունչ առ շունչ թէթեւս

Ըզբեղ՝ Մարիամ երգեր.

Պարդեալ ծիծեռան ի թեւս

Ըզբեղ Մարիամ ձայնէր:

Շաղշաղ յաստեղաց ցօրէլ

Սնունդ սունէր էլեւէլ.

Տեղայր յամպոյն ցօրն յեմակ

Զհովտին նըկարէր ըզբոյս

Ի թերթս ի ծաղկունս համակ

Զանուն քս գըրէր Սուրբ Կոյս

Յերկնէ՛ Մարիամ լըւաւ,

Յերկրէ՛ Մարիամ տըւաւ.

Մի ձայն ես լըւայ, ձայն մի.

Ամէն արարածքն ի շար

Նրման եղեգանց հովուի
Ըզմիգ երգէին ըզՄայր:

Զըկայր չեղեցի եւ չեք
Անունքան ըղբոյդ քաղցրիկ,
Փափկիկ, նազինիկ, բընբոյշ,
Գողարիկ, երանիկ, անձառ,
Քան զայն՝ ինքն՝ Աստուած՝ անոյշ
Երբեք ոչ յօգեաց բարբառ:

Ի ցանկն Ադէնայ խրամատ
Ի ցանկն այն անկաւ խրամատ,
Ի ծառն անիծից էջ սուր
Յորժամ Մարիամ հընչեաց,
Փուշք մեր գօսացան տընուր,
Կասկանք մեր զերծան ի բաց:

Գեղար գալարէր նըկուն
Յիւր փոր թափէր օձն ըզթոյն,
Հանգէպ դրախտին տայր արտանն,
Եւ շատ ասպարէզք ի բաց
Ի ընիւր մահացուաց կոխան,
Հանգոյն պայթուցեալ պարկիաց:

Յետին դըժոխոց վանիչ
Ծանեաք զայդ անուն փրկիչ
Պըսան Յիսուսի երկոց,
Խաչուն ամբառնայ Որդին,
Գըրկօք ձըգէ մայրն ի ծոց,
Հողուց մեր նեղոճէք կըրկին:
Զի սուրբ զն օրհնեալ զն՝ յեղց,
Անուն գրոշմեալ յայտս աստեղց,
Ո՛վ, լի խորհըրդով անհաս,
Անձառ սքանչելեօք զեղուն,

Որ բնաւ գըրկածես զաշխարհս
Խընկեալ պաշտօնեալ անուն:
Փափկիկ ընդ մօրն իւր անուան
Կըկնէ զՄարեմուն՝ մանկիկ,
Եւ մայրն եւ որդեակ եւ հայր,
Գերի, աղատ, ճոխ ու աղքատ,
Մարտիկն ի մահուն իսկ վայր
Կարգան Մարիամ՝ անհատ:

Յանուն Մարեմոյ՝ հերձու
Նաւաղըն զանդունդ ծովու,
Եւ որք աւազին գըրժեն
Անսանձ կայուտակ նըժոյգք՝
Լոկ յայսմ անուանէս սարսեն
Փրփուր սու փրփուր անոյժք:
Լընու սա գհիգին համբարս,
Որբոց ու այրեաց տայ դադարս,
Խառնէ յարտասուս սըզոյ
Կենաց ապրասամ հեշտին,
Պայծառ գործէ զակն յուսոյ,
Եւ գիւր՝ ըզմահուն խըշտին:

Փանկցս եւ իմ սիրտ ի խուլ
Մինչ մաղձ գիզէր յիւրն ի ծով,
Յանկարծ զՄարիամ յիշեաց,
Անուանն հեղաւ յիս սուրբ իւղ,
Լըռեաց շառաջիւն մըրըկաց
Սըրտիկս հանդարտ եւ ի լըւղ:
Մեղրիկ ի բերանս կաթեաց
Մեղրիկ ըզըրթունս եթաց,
Լեզուս հրեշտակաց կիթառ,
Յորժամ Մարիամ տսաց,

Բողոր անձնըս մի բարբառ,
 Բողոր շունչըս շունչ նուազաց:
 Արդ ես գիւրագայթ լաղկան՝
 Ի տիպ բազմահայց մանկան
 Ըղբեղ, Մարիամ, կարդամ
 Յամէն դէպս յամէն բոպէ,
 Իմ յոյս յամէնայն ի Ժամ
 Ըղբեղ անձն իմ միշտ խնդրէ:
 Ո՛հ, զի՛նչ ցանկալի քան զայն՝
 Զի դու ասացես միայն,
 Թէ Տէրն իմ Աստուած Յիսուս
 Եւ այդ վըշտահար սըրբիկ՝
 Զոյգ զիս կոչեն՝ մոյր եւ կոյս. —
 Ո՛վ ինձ աննըման որդիք:

1814

ՅԸՆԾԱՅՈՒՄՆ ԿՈՒՍԻՆ

Ո՛վ է սա որ ելեալ գայ: — ԵՐԳ.

Յաստուածային անողարեղ՝
 Ի քաղցր ի մօր գըգուանաց
 Նոր արաննեակ թեւահեղ
 Թըւչի, յայդուն անդ կենաց.
 Սպիտակածղի զոյգ նըմին
 Ելով ճակատն եւ հօգին,
 Յանըծու թեան վառեալ վարդ
 Փըլթիթն այտից վարդ ի վարդ.
 Շուշանափայլ շող զիւրեւ,
 Հրաժեշտ արեւալ աշխարհի,
 Ճախր առեալ ճեշտ եւ թեթեւ
 Դէմ ի տաճարն Սնմահի.
 Սուացեալ մօրն իսկ ըղբուծ,
 Նըւիրական ընդ հաւուց.
 Ուխտ ի սըրբուժ գարերայն
 Նըստի մընչէլ լուրեւայն:
 Դեւ կաթնածիր է բողոր
 Վարդապըսակ շըրթներոյն.
 Մարգարտայ յեւքն ի բոսոր
 Դեւ լըբացեալ լեն տղայն
 Դեւ չունին աչքն մեղայն՝
 Իայց հայեցուածըս քընքոյչ.
 Եւ մանուշակք բըբացն այն
 Շարժին ի ծով շափեղայն.

Դեռ ի փափուկ թիկնամէջս
 Եւ դեռ զուլամբ գեղեցիկ
 Ոչ ծածանին յելեւէջս
 Ոսկեփողփող հօսուպիք.
 Դեռ չընէրեն բարձք կակղիկ
 Ծունըր դընել ժամըս ձիգ,
 Եւ ոչ բաղիւնք փարելի՛
 Ճօճել բուրվաւ խընկալիւ: —
 Բայց դայ վըստահ ինքն առ այն,
 Սըրտիկն ելով ի Թընդի,
 Առ այն՝ որ ետ զամենայն,
 Երեքն ելով ի խընդի.
 Լուծանէ զլար բերանոյն.
 Այտքըն վաւին դունադոյն.
 Սիրտն ի լեզուին վազէ ծայր...
 Լճւր, ով տաճար վեհավայր.
 Եւ երաժիշտ սրովէք դուք
 Անմահ ունկան հեշտարար,
 Եւ դուք այժմիկ սեղն տուք
 Առ աննըմանս այս քընար: —
 Սմբիճ, դու եկ, դու խօսեաց.
 Զինչ առ որ զքեղըն հաստեաց՝
 Դէմք ամօթլեած ի հայել
 Յառաջ մատչիս՝ ընծայել: —
 Յայնժամ զհողին սիրախայր
 Ամփոփեւրով յաչքն ի վեր,
 Զմատաղ ծըղիան ի մի վայր
 Զանաղա լանջօքն ոլորէր:
 Մի հաղ բըբօքն ընդ երկին
 Ծաւալանայր կաթողին.

Անդէն բերիւր ի խոնարհ
 Որդէս չուշան ցողաշար:
 Ոչ հընչեաց ձայն ի յարկին.
 Ոչ էլ յուխտէն այն մըմունջ.
 Այլ մինչեւ յունկն Անմահին
 Եհաս բարբառ հողեշունչ:
 Եւ ակնարկեալ ի յամայոց՝
 Յանշամանդաղ կուսին ծոց,
 Եւ զոր ի նըմայն սուրբ նըւէր
 Հետադօտեալ ինքըն Տէր,
 «Ո՛վ, գոչեաց, կոյս իսկաճեմ,
 Քեւ այժմիկ բաղքն Ոգամայ
 Ի բընտուրն իւր Եդեմ՝
 Դարձ առնէ հեշտ եւ կամայ,
 Իսկ խընկեղոյգ զոր ետուր
 Ծոցիդ՝ չիք այլ տըրիտուր,
 Բայց զի գահ՝ մեծ քան զերկին
 Յայսմ հետէ դահ մեղ լինի»:

ԱԻՏՏՈՒՄՆ

Ուրախ լեր բերկրեալք, Տեր ընդ քեզ:

Աննդընդայոյդ, համապարփակ սաւառնում,
Որսորդ յոչեկց, թոհնից բոհնից այցարար,
Խաղաղութեան ձայն ծըփեալ նիւթոց ապաւ
ուում,

Ամենայնի կենարար
Հողերդ, հայեանց յայս յաշխարհ.

Տարերք անորրահք բախին, կուտին եղերունք,
Դանդիւ թանձրամած հետախաղաղ աննէ զսա,
Արփւոյ շնորհալսս զօղեալ յողան խրոխտ ձմե-
րունք.

Մըըրեկք մըըրկաց ի վերայ
Սուգ ի սըգի դիզեալ կայ...

Ահա շունակիզըն կէտ, սեղան ուղբոյ,
Ազիտակափայլ թառ, անբըծութեան բուն դաւ-
դար,

Որ զայսբան հերձեալ ժըխոր ժահնից դիզածոյ՝
Վերաթեւէ կայ հեղիկ
Յաճեն աղան զերծ սըբբիկ.

Յուչեկց թափեալ զաշխարհս երբեմն ու ի վըհէն,
Ի ջուրց հեղեղաց երկրորդ ու ի բուսըն մեղաց.
Յանյուսութենէ երրորդ սովաւ թափեալ յսրէն.

Ո՛վ հողի, հայր շնորհաց,
Հանդեր ի կոյսք ամթխած:

Ուրախ լեր բերկրեալ միակ տախտակ անարխուր,
Յոր յոյս մարդկութեան անկեալ ելցէ յանդոր-
րու,

Միակ ոտնադիր հաշտից հաւուն այն մոքուր՝
Սաւառնազարդ որ ի թեւ
Մարժեալ սլանայ 'աքեղ թեթեւ:

Ուրախ լեր բերկրեալ, զոր երկիր ոչ արամեցոյց
Զմահառիթ մըրգոյն ճաշակ չըփեալ չըրթանց
քոց,

Այլ միայն երկինք զըզբանչէլիս իւր եցոյց:
Ուրախ լեր կոյս դերազանց
Մորոգութիւն դու ազանց:

Ուրախ լեր բերկրեալ, ուրախութեան նորոյ
ծայր,
Երկինք եւ երկիր յայսմհետէ քեւ հրճուեացին.

Ի քեզ՝ զամենայն շընորհս բարխս դիտէ Հայր.
Ի քեզ ամէ սուրբ Հողին
Զյաւառնից ծոցածինն:

Ուրախ լեր բերկրեալ, մի երկընչիր մի խառվիր,
Աստուածային կամք ընդ քեզ հաճեալ ցանկա-
ցան,

Մընցիս դու զՈրդին յանբըծութեանդ ի սկակիր.
Միայն կամեանց, սո՛ւրբ կուսան,
Եւ անիզերք փրկեցան:

Խոնարհեանց դըընուս նազելի՝ լանջուրդ մաքուր,
Արկ զակն ի խոնարհ, ամբարձ ըզիրաւ քան զեր-
կին,

Մտախառն յարտուր հարեալ զչըրթունս բոցաւ
հուր՝
Ասա՛ երկինց նուիրակին,
« Ինձ ըստ կամս Տեառն եղիցին »:

Ընդ համարադեղ խոնարհութիւն քո, Սուրբ
Կոյս՝

Ահա սահեալ էջ ի ծոցդ անկաւ բարձրեալ
Բանն,

Սըրտիդ (Թընդեալ) հան ըզիթս ի վեր դերադոյս
Պատեաց զբնութիւնն Էջական.

Ու ի նոյն Մարտիկն եղև Բանն:

Ամբարձ ի վեր զաչս եւ լանջ՝ տաճար տիրակիր,
Կամբքո զկամս լըցին եւ բանք ըզբան բարձրե-
լոյն.

Խոնարհեցողցեր զերկինս, բարձեր դու զերկիր,
Բարձան անէծք մօր նախնոյն,

Եւ մահացուն ցընդի թոյն:

Ուրախ լեր բերկրեալդ եւ սուր ուրախ աւե-
տիս

Ե՛լ ի լեռնակողմն, է՛ջ ի հովիտս անդր Յուդայ,
Մասն յաստուածաարօի լանջս հընչեցո՞ղձայնդ
յողիս,

Թէ բացաւ դուռն Եդեմայ

Թէ բարձաւ լուծն Ադամայ,

Հընչեցո զսուրբ ծոցդ աստուածաձայն թըմբկ-
ուհի,

Կայթեա, մեծացո՞ղձեր զամբարձիչ խոնարհաց,

Խաղս խաղացո՞ղձեա զլերծեալս նոր աշխարհի,

Անց պատառեա զծով մեղաց,

Եւ հան յերկիր աւետեաց:

Բարձր եւ թուխ կոհակքն ահա ելին դիզացան,
Յաջմէ մահ, եւ մեղք ձախմէ պընդեալ եւ պա-
ղին,

Գարնակալն օձ նուրբ ներբանիդ կայ կոխան,

Խոյտա՛ս ի ծոց դու ծովին,

Մարդք ընդ ստիւքըդ ծաղկին:

Երանի՛քեզ Կոյս՝ ի Բարձրելոյն բարձրացեալ,

Սնբաւին տարող ի խուն ծոցիդ յայդ ծըրար.

Յամայր երանի՛քեզ հարանուհի սրբափայլ.

Թի՛քր կորընչել երկնի հնար՝

Ի քէն հասաիւր նոր աշխարհ:

Ուրախ լեր բերկրեալ, յաւիտենից Տէրն է 'նդ
քեզ,

Ձերկինսանս թող, չթողու ղքեզ, խորք հանգըս-
տեան.

Խրախացո՞ւք եւ մեք, զի եղիցիս եւ ընդ մեզ.

Եւ հընչեցուք յաւիտեան

Ձաւետս անձառ բերկրութեան:

ՅՄԱՐՏԱՍՈՒՄ ԿՈՒՍԻՆ

Ծոց ծովահին շափելուայ՝

Ընդ որ յառեալ եւ սրբոնիս,

Ասա՛, զուարթուն իմ սըրտիս,

Ընդէր յափանց իւր զըմբռնեմ

Մարգարտաց զյոյզս պանդունիս

Ի կարմրեկ դաշտայն տեղայ՝

Ոչ այնպէս ջնջ այնպէս գերդ՝

Արշալըրշոց կայ ցօղեկ

Ի շուշանին նուրբ ծղկեկ

Կամ ի վարդին ծիրանի,

Մինչ այդն աւուր ծընանի,

Որպէս այդ հասք երկկարգէր:

Ողուն ողուն, ասա՛, է՛ր

Վիժեալ ուղիսցն արտասուաց

Ի սիրահաթ կոյս աչաց՝

Մինչեւ գիմացն ի ստորոտ,

Սնդ տատանին երերկոտ

Աստեղց հանդայն ի յեթեր:

Բըբացն հանդէս սրբասուուց

Թըւի զբայուն մէն մի շիթ.

Բըբացն հանդէս անքըթիթ

Ձիւնըկատեն այնք պայծառ,

Քաղէն զոգւոյս տուրեւառ,

Եւ խուփի սիրտ, խուփի շունչ:

Ո՛հ, գիտացի, աւանդ զիս.

Վան իմ են այդ արտասոււք

Բուժեւ զհոգւոյս իմ պասուք.

Այլ յաննըւէր ի սըրտէս

Խիթալով՝ կան կախեալ կէս,

Ձիշնեն կաթեւ, թանալ զիս:

ՄԷ՛ Մարիամ, մի ո՛ւլ մայր.

Երկիր եմ կորդ քսամնափուշ,

Այլ կայրակքդ այդ քնքուշ

Փթըթեացի յիս վարդ, բըբում,

Քերկրեացի սիրտս այս արտում

Յօղեալ ի քէն սիրարար:

Ի ՅԱՒՍ ՏԻՐԱՄՈՐՆ

Ի ԲԵՌԻԿԵԱՆ ԼԵՐԻՆ՝

Ո՛վ քաղցրաձայն սուրբ սրբաբան,

Որ Մարեմայ յանուն անձառ

Ուրապացեալ յօգոց գաւառ

Բըրոց և բըռըս ծաւալիք,

Թափեալ ըզիրոտ՝ որ քաղցրաբուն

Հուպ Տիրամօրն հրակեր և ծոց՝

Ի յանըրջոց գիշերայնոց,

Ի սուրբ վարէք սաճար նորուն.

Իցե՛ւ այգուն այգուն այգայէս

Հնչէիք միշտ յունկըն սրախ,

Ձի նուիրականն յանվիշտ տեղես՝

Գայր բուժե՛ւ զանձըն վըշտատես,

Որ արդ նուաղեալ եւ չունի ժոյժ.

Լըւեն այսօր մրմունջքն եւ ձայն,

Ձի զսիրաբօ, մայր, ետես յարեան

Եօթնապիսակ վերացքընքոյշ:

Եիջո՛, զուարթուն, զհոգւոյս պատրոյգ

Ձի տեսողես զսիրտն այն փափուկ

Գըրեա թ՛առ ցաւսըն խուսափուկ,

Մահուն միայն մընայ խարոյկ:

1 Ի վիկեգենտիա (վիկեցա):

Պատառեանց լանջ, եւ սիրտ, փախիր:

Սնդըր քան զմահ, անդըր քան զսէր...

Այլ եցե՛ վայր՝ զայր այսքան վէր

Ոչ բուրբեալ ունիցի զձիր:

Գարձիւր, գարձիւր, այ՛ հեգ, եւ կաց:

Ակն անքըթիթ հայեանց լըուկ:

Ձի մօր սըրտի վէր գեղեցիկ՝

Է անփախուստ անգիմահաց...

Ո՛վ որ զՍրտուած և քեզ տարար,

Աներև ժամուց տարբեալ պատակեր,

Ծոց Երանեալ մարթ քեզ իրօ էր

Խընդից փոխան դու ցաւարար:

Մաւանիկ չիք մասն անդ աւսող

Եւ չիք հիւանդ, չեն դէմք կրկին:

Այլ միատարր է ծով վըշտին

Կայուսակեալ ալեօք ամբողջ,

Յոր համաձայն քաղցր եւ արխուր

Եօթնավըտակ թախծանաց ուխք՝

Գարուց և դար գան սրտաբուխք

Սողոսկելով սիրափըրփուր:

Մուսալանայ ինքըն լըուկ

Ձի մօր և սիրտ անգիտալի.

Եւ վարելով ալին զալի

Չասեն ափուկը, թէ սահման չիք:

Ո՛վ մայր սիրոյ, մայր ինդուլթեան,

Ո՛ւժ զարթոյց այդ արտասուէք,

Ո՞ զքո՛ և դառն համակեաց սուղ

Ըզիրտ՝ ցաւօք դերովկիան:

Ո՞ բաւեսցէ դիտել անդէն

Մաւախլապատ ըլ՛Գողգոթայն,

ԶՈրդւոյդ եւ քո զողէմս համայն,
 Եւ զոր աշխարհս անդուէ նիւթէն:
 Ո՛վ դու աման շուրջ մեղրուհակ,
 Յոր անիծեալ դարձոյց երկիրս
 Ըզգասնութիւնս իւր ծանրակիրս,
 Զինչ արասցուք քեզ միայնակ:
 Վաս՛ մեղանացրս ժանաժուտ,
 Որ շնորհակաթ ի ծոցդ հեղին
 Զարդարողան զեւրեանց բաժին՝
 Զի մի՛ գեհեանս անկցին վախուտ: ...
 Այլ ո՛վ հրաշիցս եւ սիրոյդ, Մայր,
 Որ մեղուաբար՝ ըզթոյնս ի մէնը
 Քաղեալ ի սիրտ անդր որդեանէն՝
 Յախորժ փոխես խորխոս յամայր.
 Եւ սիրաք յօժար անդր բերին
 Կարօտք ցաւոցդ ի կայակէն.
 Անդ քաղցր է բնաւն, բաց յանուանէն,
 Նա՛ քաղցր եւ այն, զի է քոյին:
 Ես իօհ, ա՛հ, ես իօհ հասեալ դամ
 Զհետ ձըգելով սիրտ, զոր սիրով
 Դահել թէ ոչ՝ գոնեայ ցաւով
 Ստասցիս քեզ այսօր, Մարիամ:
 Երկըրպագեմ՝ ձեզ, վէրք անախտ,
 Որ ծոց ի մօրս իմ ճարակէք.
 Երանութեան իմոյ տեղէք,
 Լէրուք ձեմոց ինձ եւ ի դրախտ:
 Երկըրպագեմ՝ ձեզ՝ եօթնալոյս
 Ղամբարք ծոցոյն աստուածակիր,
 Արտասուաղէղք, շողեալ յերկիր,
 Կատարք յուսոյ ծովածփեղոյս.

Երկըրպագու գայ սիրտս հեռուս՝
 Ո՛ անգաստանք ցաւոց իմ՝ մօր,
 Սիրոյ աժեալ սերմանըս նոր
 Յոր հերկեցի մեղքը հարուստ.
 Նա եւ ողջոյն զանգեալ յարտօսր
 Եւ տարրացեալ սիրոյ ի հօւր՝
 Սիրտ իմ՝ հեղցի՛ սիրան այն մաքուր
 Ի սպեղանի փոխեալ անօսր:
 1845

Ի ՆԻՆՁ ԿՈՒՍԻՆ

Լճու լիցի ծով, երկինք ու երկիր լըռեսցեն,
 Հողմունք եւ հաւք ի մայրսի ձորս հանգիցեն:
 Քող աւցէ վարդ յերբըն շինեալ կարմիր ծոց,
 Քող աւցէ տիւ, քող եւ աստեղք հեղաբոց,
 Համայն բնութիւն՝ թէ սեաւ ունի վարագոյր՝
 Աքողեսցի այսօր ընդ անդարձ կորուսան իւր:
 Ձի գըշլոյցին անմահարար շունչ քաղցրիկ՝
 Խոյանս ի բուն գաւառն էառ՝ եւ զմեզ ելէք:
 Իմ զուգակիր գիպեալ հրաշից եւ ցաւոց՝
 Սերտ ի թընդի, շունչ ի բերան, ակն ի կոծ,
 Սերեմ՝ ճեմիլ ձիթաստանեայցն յայն ի զը-
 րախա՝
 Աւր նախ Անմահն ըղմահու զգաց դառըն
 բաղդ,
 Եւ աւընթեր լուրջ հովանեացն արդ նըմին՝
 Մայր իւր զճանդիսառն մեծ հանդեաւ ի վիմին.
 Ծուշանն անբիծ ի շաղ չնորհաց աճեցուն՝
 Անդ անարբիտեղձ՝ այլ ո՛հ, յաջաց կայ թաքուն:
 Եւ զեմրդ լիբբ եւ գառնութիւն կենաց՝ մահ,
 Ձեմրդ իշխեր ձըգեւ ըզղէնս քո անահ՝
 Աւր հայր քոյին մեղք չըկարաց ձըգեւ գիծ,—
 Այնչափ հոգին սրայծառ, մարմինն էր անբիծ.—
 Աստուածութեանն՝ ո՞րպէս տաճար կենդանի
 Ոչ խորտակէ զորմունն շերմին տապանի.

Յուրա կափարիչն այն ցուրտ արգանդ վիմեղէն
 Ըզնա՞ ծածկէ որ զանսահման ծածկեաց ղէն:
 Մի ցայդ վայր, ո՛վ մահ, ան զմանկաղ քո եւ
 էրթ.

Ի տարտարոսն անդր ողբա զղէնս չարակերտ.
 Տէս, մի դուցէ յամբառնալ ձեռն ի փըքին՝
 Կապարձքդ ի քէն իսպառ ի բաց կապտեսցին,
 Եւ հրեշտակաց կախեալ յերկնից ի կամար,
 Որսքըդ յերկրի աղաթեսցին փրկաբար:
 Ձեք նեա՞ գիտեմ՝ աղքու լանջացն այն մաքուր
 Որ հար վանեաց ըզգըժոխոց նիգս ամուր.
 Սակայն, ըզնոյն նա զմահացուաց նընջ քուն.
 Որ զԵգեմին եբաց ըզՏէտս անվարուն: . . .
 Ձինչ այս հրաշք, գուրք ինձ երկինք պատմե-
 ցէք,
 Որ խոնարհեալ զուարթնօք ըզվէմն զնընէք.
 Մի՞ եւ սըմա՞ մեղաց՝ զանպարտ ուսուկքն իւր
 Իբր Յիսուսին՝ եզան բեռնիք մեր արխուր:—
 Ո՛չ, զամենայն բարձ Յիսուս, նա զմահ էհար.
 Իսկ մեռանել Մարիամու իբր հընար:
 Աստուածախօս հոգիք, լճու կայք, ո՛չ գիտէք,
 Ու ի լարս անմահ՝ մահու հանդիստ թոթովէք:
 Լճու լիցի ծով, երկինք ու երկիր լըռեսցեն,
 Հողմունք եւ հաւք ի մայրսի ձորս հանգիցեն.
 Եւ գուրք զուարթունք լճու լիք. թողէք իմ
 սըրտիս
 Տրոփեալ ի վէմն՝ հարցաբանել զԻսկուհիս:
 Քաղցրացի՛քուն քո թեթեւ,
 Ո՛ր ի ծոց տապանի՛ս

Իբրեւ հըրոյ հայրն արեւ
 Մայրս ամփոփեալ ծիրանիս,
 Մածկեալ յաջաց հողէից
 Կաս հայելի անմահից .

Քաղցրասցի՛ քուն սուրբ սըրտիդ .
 Որ եւ ի նինջ իւր արթուն՝
 Չերկրիս երկնիւք աստղախիտ՝
 Հընչեցուցեալ զէս համբուն ,
 Լար քաղցրութեան կայ միակ
 Տիեզերաց բովանդակ .

Քաղցրասցի՛ քուն քո, ո՛վ Կոյս ,
 Չոր ցողավար աէր ամպոյն
 Իբր ի շուշան դեռաբոյս
 Խողաղական յիւր ծոցոյն
 Հոսեալ տարափ առ տարափ՝
 Ի քեզ հայի սիրատարփ :

Ոչ ծածանեալ ծով ծըփոտ՝
 Համբոյր շըրթամբ սըղոխին
 Ի վարդամասն առաւօտ՝
 Կամ յակնարկէլ փայլածունն ,
 Երբ ի բելբեղ փոխէ մեզ
 Ըշտարօտասէրն ասպարեզ .

Ի ոչ անտաւին հովանի
 Յորժամ զեփիւռն առեալ հիւ
 Ըղտերեւովք տատանի՝
 Խոնջեալ թեւոցն ի կայտիւ ,
 Ու ամէն նընջէ ծառ , սաղարթ ,
 Չեն այսդուհակ քեզ հանդարտ .

Հանգէտ անհողմըն նաւու
 Ի միջածոյն ովկիան՝

Կառեալ կան բերք սիրարկու
 Յարծաթափայլ շափիւղայն ,
 Յար խիա ըստուէր սեւորակ
 Տեղան յունկըդ կամարք .

Դաշտիկ հընձոց քոյդ ճակատ
 Կաճող վարսիւքըն քանդուր ,
 Տիպ սրայից բարդ ի բարդ
 Կայ ծաւալեալ ջինջ մաքուր .
 Վարդայատակ երկու սրահ
 Սյաք քո թըւին ըռաւջահ :

Հարսին ի անպ Յրգերգոյն ,
 Ի կարմրաբարդ շըրթունս՝
 Հըսկէ համեստ ըռուութիւն ,
 Եւ փակ արկեալ քո զմատունս ,
 Աստուածասուն ոչ ներես
 Մընջէլ լանջաց սիրապէս :

Իցէ՛ թէ սիրա իմ ցաւած . . .
 Այլ իշխեցից զայն ասել .
 Իցէ՛, ո՛վ մայր, թէ յանկարծ
 Ի վէճդ անէր մուտ եւ ել ,
 Եւ ի սրբում տապանիդ
 Հանդէր յական մի քըթիթ
 Քանզի առ ինչ դու ի մահ

Չանմահութիւն նընջեցեր ,
 Բայց ի դործէլ զիս անահ
 Առ դամբանին այն հրաւեր .
 Չեւ ըզմահուն տըւեալ դաս՝
 Թըւէր քեզ վաքք քո պակաս :
 Սէր՝ քո կեանք , քո շունջ համեղ ,
 Նոյն եւ ի մահ քեզ յորդար .

Ի ծոց մահուն իսկ ասէղ
 Հեռադատեալ դու սէր նոր՝
 Կըթուցեր զաջն ապառուժ՝
 Ի խոնարհէլ գըընոյ քուժ.

Աստուածաշէն առաքատ
 Երկնանժման քո մարմնոյն՝
 Առ սէրն յառեալ կայր պատարատ.

Դու՝ «Նըմանէլ լաւագոյն՝
 Ասացեր, տեսուն իմ Փրկչին,
 Զայս ուխտեցի առ խաչին.

« Ինչ աղանոյ իմ Որդւոյս
 Քաղցր է երթալ ընդ հետս իւր.

Ի դաշտ մահուն իսկ անբոյս՝
 Ես տեսանեմ ծաղիկ բիւր,
 Որք ընդ օտիւքն անսասան
 Յէջն ի դըժոխս՝ ծաղիկեցան.

« Դուք՝ որ ըշտերդ ի Գողթօթ
 Յանհուն ի ցաւս իւր թողէք,
 Ըղմէ այժմիկ կայք յողբողք
 Մօրս ըսպատակ Սերովէք.

Երթայք հարցէք ըզՅիսուս,
 Ո՛ւր է բաժին իմ լէղւոյս» : . . .

Զինչ լէղի, զինչ ցաւ, ո՛վ մայր.

Քաղցրութեան դու ես աղբիւր.

Խոնարհութեամբ քով անծայր՝
 Զլանա՞ս զՈրդւոյդ իսկ տրիտուր.

Ըզգառնութեան մեր բաժակ
 Ինքըն քամեաց ցըլատակ.

Առ նըմանէլ քաջ ինքեան՝
 Ծնորհէ սահէլ քէղ ընդ մահ,

Ի զմայլական լըռութեան.

Ծատ իսկ կրեցեր դու ցաւս, ա՛հ.

Անմահութիւն, խինդ եւ սէր՝
 Արդ ըսպատեն քէղ յէթեր :

Ահա մահուն չէւ մօտեալ՝
 Ծունչդ ի շըրթանց քոց անբիծ
 Յաստուածային կայս թուուցեալ
 Ծիծաղեցաւ ի յերկնից.

Երկրաւոր կեանքըդ լուծան,
 Անանցականքն ըսկըսան : . . .

Քաղցրասցի՛ քուն քո մարմնոյն
 Քան ըզմանկան մօրն ի ծոց,
 Քան զաստեղաց գիշերոյն,
 Քան ըզցօղոյ ի ծաղիկոց : . . .

Վէ՛մ, բիւր քէղ բիւր երանիս
 Որ զԱստուծոյ Մայր տանիս :

Երանի՛ իմ իսկ սըրտիս,
 Եւղաբերից թէ հանգոյն
 Հըսկեալ խընկօք ի լալիս՝
 Ընկալի զնախ քո ողջոյն,
 Յորժամ ի կեանս յամերամ
 Բարձցի մարմինդ, Մարեամ : . . .

Լուռ լիցի ծով, երկինք ուերկիր լըռեացեն,
 Հուր եւ հողմունք ի մայրս ի ձորս հանգիցեն.

Լըռեացեն յայսմ հետէ խօսք կենցաղոյս,
 Մի՛ լըւայց ձայն, նա մի տեսից եւ ըզլոյս.

Սիրտ իմ միակ լըռիկ իջեալ ի վիմին՝
 Անդ յանդօրրու լըւիցէ մօրն իւր սըրտին :

Ի ՎԵՐՍՈՒՄՈՒՄՆ

ԿՈՒՍՍՄՕՐ ԱՍՏՈՒՍԾԱԾՆԻ

Հընճմունք հրաշից բաժընական նըւադաց՝
 Աըրտաղարթոյց հրաւէրք հոգւոյս եւ լուց-
 կէք,
 Անճառք ձայնից, վանդիւնք քաղցսնք գեղե-
 ցիկք
 Որ զըզաւըւաւս հէզոն մասամբ թանճրամած,
 Յաւուց խորոց յարուցանեն զիղճըս, Մայր,
 Զկախլ ուր սուրբն երգի անուն քո յամայր:
 Սիրտ ի յերկուս արդ կայ 'նդ երկին եւ երկիր,
 Աստ՝ ըմբարմինդ, անդ ի պաշտել ըզհոգիդ,
 Խունիկ՝ նըմա, փունջ սըմա կապել գեղա-
 փծիծ,
 Մերձ ի յերկինս, մերձ գայ զմարմնովդ աչացս
 հիւ.
 Թէպէտ բոլոր ըզքեզ երկնից իղճք են իմ,
 Այլ զաստ մընալ մարմնոյդ՝ ոչ փոքր ախոր-
 ժիմ:
 Իսկ այժմ ունայն եւ միջաբեկ դերիք սըրտիս՝
 Զինչ լարաթափ քընար բաղնին ըզքո կնի: . . .
 Զն գուրք հրեշտակք, զն պարաւորք ձեզ երկնի.
 Ընդէր զըրկէք զանմըխիթար եզկելլս.
 Թէ թեք թուուցիկք հասարակաց Մօրս իցէք,

Ես պատուանդան ոսկնց եղէց՝ թէպէտ հէք: . . .
 Ո՛վ լոյս փառաց, յոր կորընջի, Մայր, հոգիս.
 Լոյս՝ որ ի Շօր ծոցոյ թափեալ մինչ յայս վեմ.
 Եւ ընդ շաւեղըդ շողողուն տեսանեմ
 Ոչ մի զուարթուն իբր անդ ուրեմն յԱւետիս,
 Այլ երկնայինքն ամէն ի շող եւ ի շաղ
 Գան թաթաւեալք եւ ցողէն ցողըս խաղաղ:
 Թաքչի տապան քաղցր արեւուդ կենախոյս.
 Ուր ընդ Կեփայն եւ ընդ սիրոյն աշակերտ
 Վարչամակի փոխան՝ վարդից լոկ ըզթերթ
 Եւ պատմուճան ես տեսանեմ ասրաբոյս: . . .
 Այլ ահա զօրք երկնից հանեալ են ըզքեզ,
 Ո՛վ բերկրութիւն, թողուս զպաւոյս ասպա-
 րէզ:
 Ո՛հ, զն՝ չըքնաղ, ո՛հ, զն՝ մաքուր, զն՝ սոյնծառ
 Դաւ նորահրաշնորափեառուր կոյս հարմեակ.
 Վէհաւեան Հայր՝ ըզքեւ անկեալ հովանեակ,
 Իմաստք յՈրդւոյդ սփռեալ, Հոգւոյն շնորհք
 անճառ.
 Եւ զօրք երկնից ըզքադաթամբք հրաշազան
 Հիւստիս յեւոյժ վարսից՝ քան վարդ եւ շու-
 ջան.
 Հոգիք ի կերպ աստուածութեան եւ անձնեայ
 Փարեալ զմարմնովք՝ ի տարր յեղու լուսե-
 ղէն.
 Փայլ ըզփայլ թաս քան ճաճանչ յեթերէն.
 Երկնիք՝ բիւրեղ աստեղոց, մարմինդ՝ հոգւոյդ
 կայ.
 Յօրոյս ծայրից ծիծաղախա ծաւաղիս,
 Այդ անաղճա՝ յաւխտենից օր ծնանիս:

Քո սուրբ ճակատ վեհին հովիտ հաճոյից,
 Քո երկնածիր զիտակ՝ համայն լուսասփիււ
 Քան ճառագայթ արեգականս դայ ի հիււ,
 Սպիտակարան աստղակաճառ քան զերկնից.
 Քո կապուտակ սրտմուռճանի խորք թըր-
 թուուն՝

Նոր թերթս երկնից յերկինս ի վեր յաւելուն:
 Աչքս բանաս դու հրաշագեղս աննրման,
 Եւ մահացուաց եւ անմահից սխրալիս.
 Բիրքս շարժեա սիրահոլովս եւ հրալիս,
 Երկինք կայտուն եւ տիեզերք թինդս ասն.
 Խարտեաչ զուարթնոցն երամ ըզքեւ պատ
 առնու

Ձինչ չըրջանակ ոսկի, զինչ բակ արեւու.
 Յուշի գրնայ աստուածակիրն այն բընակ
 Աննուրեք զի հեղուցու զըննորհս իւր.
 Եւ անդ ուր օգք սպասեալ՝ եթերք հասն հուր
 Խուն մի հանգիտ աըւեալ Կուսին առ բա-
 նակ,

Ամբ յամոյոյ կաթս յաջաց ցօղեալ սիրալիբ՝
 Յանմեկնէլին հայի խնամոց վայրն՝ յերկիր.
 Եւ այնչափ ցօղք քամիք տեղան ի ժամուն,
 Միւք եւ ծըղիք շնորհաց սփռն ի ծոցէն,
 Ձի զբայ երկիր զիւրն անվըկանդ ապաւէն.
 Ոք եւ յերկնուստ կարկառեալ թեւըս փայ-
 լուն,
 Տանեւ թըլի զկայս մահացուաց յայն սահ-
 ման՝

Ուր վասն իւր դահք յաւիտենից կազմեցան:
 Եւ ահա բարձր հաստատուած իւնիքըն շարժին,

Եւ ահա դրունքըն վերանան աննիաղ.
 Արաւնակերպ հասեալ կայ Կոյն հեղանաղ.
 Եւ յանգիման իւր դըտանէ առաջին
 Չայն զօր յերկրի դերագըրգուեացն ըղձիսուս.
 Փարին յիրար իբրեւ ճաճանչք իսկալոյս:

Նա Էնն Աստուած, սամայր ինքեան Աստուծոյ.
 Ի սարս հոգեաց՝ սոցս միայն է մարմին,
 Յոր սըխրացեալ գիտէն եւ Հայր եւ Հոգին,
 Այնքան կարէր տանել փառաց մասն հողոյ.
 « Երկինք, դոչէ Երրորդութիւն, լըւարուք.
 Սա է դըշխոյ, սըմա սպասեակըս լերուք:

Սա ինձ դըստրիկ Հօրս անմահից անմահի.
 Սա Մայր Բանիս անըսըզբան Հօր Որդւոյս.
 Սա փառակցիս ինձ հարսնացեալ է Հոգւոյս.
 Սա կուսուծիւն յերկինս հոնուր եւ յերկրի,
 Մէք՝ Աստուած, սա՛ մեզ Աստուծոյ վերձաւոր,
 Եւ զօրութեանցս անբաւ՝ լուծ հեղ եւ հըզօր:
 Ողջէր Վէհիցսս Վերառեալ Իսկուհի »:

Եւ հրեշտակք. « Ողջէր, ասեն, մեծ դըշխոյ ».
 Եւ երկինք. « Ողջէր, հրամանաց միամբքոյ ».
 Եւ երկիր. « Ողջէր օժանդակդ աշխարհի »:
 Իսկ Տիրուհին. « Որ Էնդ օրհնեալ Տէր յա-
 մայր.
 Արարածք, ողջ լիք, ես հանուրց եղէ Մայր »:

ՊԱՆՊԱՆԻՉ ՈՐԳԵԳՐՈՅ

Գալարին լորք, խոնասիէ քնար ղարձաղիւն
 Եւ սիրտ նըւաղի,
 Յորժամ ըզքս իշխէ հընէլ տւերք անուն
 Ո՛վ Մայր քաղցրաօղի:
 Մայր, ո՛հ, մայր, եւ յառաջ իբր խաղա՛
 Թէ ոչ պընդեա ղես, յորտեղ յայտ
 Ձեռ՝ յոր ճահառ ծըղի զըթոյգ կարկառեալ
 Գըրեաց յՈրդեգիրս:
 Ձէր ի շըրթ ունս իմ ի մատաղ եւ թոթով
 Հեշտ այնպէս կոչ մոր,
 Յորժամ գըրկացն ի քաղցր առնոյր ղես գորով
 Կամ ամէր յորոր,
 Եւ ոչ անընդեանս ճերմակ տղերքն անփոփո՛ւր
 Ս, յնքան ինձ քաղցր իկք,
 Եւ ոչ տըխեղծ տնօցս այնքան կենսատուր
 Էր նա զօրավիք,
 Որքան ինձ այժմըդ Մայր երկնից եւ դշխոյ,
 Սիրով սիրարկու:
 Ոյր եւ անուն եւ խնաս գեր ի վերոյ
 Ձգացման եւ յաղկու:
 Ո՛հ... այլ մի դքեղ խոցն արդեօք հառաչանք՝
 Որով լի եմք մեք.
 Ներեա թոյլ տուր ղի չլք մեր այլ ըսփոփանք,
 Ձեք այլ ղիւր ումեք:

Հառաչանօք ուսար կարդալ զայդ անուն՝
 Ձքաղցրաբոյնն յանուանս.
 Եւ հանապաղ կուռեալ ի կիրքս մահուն՝
 Դովաւ կեալ նոր կեանս:
 Հալածականք յաշխարհէ յեղբ ելեալ սուղ՝
 Մեղ դեռ սպառնայ՝ շխարհ.
 Խօսն տախտակիս խանդան ալիք բռնամուղ,
 Երկինս է խաւար:
 Ի յեկեւէջս ոգեոց մերոց՝ սիրաք հատան,
 Մերձեցաք ի մահ.
 Մի շունչ է մեզ, ո՛վ Որդեգրացըս Պաշտպան,
 Փռեթացիր մեզ, ո՛հ:
 Ծըփեցի ծով, մըրրկեսցին մէքք եւ մըթարք.
 Ձի՛ անանկն աստեղ,
 Թէ եւ անդունդք կըլցեն ըզմեզ թէ սանգարք,
 Դու մեր յուսոյ տեղ.
 Գու՛թ քօ խորին է քան զանդունդս ու անյա՛
 տակ.
 Դէմք՝ բարկ քան զարեւ,
 Բաղուկք երկայն քան զճառագայթս ընդար.
 Ճակ մը քոց ի մտարք քո ճարք զո՛ր յո՛ր
 Գալ փաբէլ ղինեւ:
 Ոչ յառաւօսս ոչ ընդ երեկ վարդենի
 Արեւակ պայժառ,
 Եւ ոչ ի շանթելի ի միջակէտ անդր երկնի
 Ա, յնքան է փարփաս,
 Որքան ի թուխ թիկանց մըրրկաց քան ի գուրս
 Յըստակ ըուսակեղ.
 Ս, յնքան յաւետ երբ վանես դու ղմեր մըրուրս
 Ձըքնալ թըլիս մեղ:

Արդ երեւեաց, արդ փայլակեաց, արդ ակն արկ
Եւ շատ է մեղ այն.

Ի խուն հայեացք՝ ամեն յայտնին քո գիւր
ժրարք.

Յայտնիս դու համայն:

Որդիս անթիւս ստացեալ յերկինս քան զսս-
տեղս.

Եւ ղերկնիցն իսկ Տէր:

Յիշեա զի զհէգս յերկրի, ու անգամ զբազմա-
մեղս.

Յորդեգիրս աւեր.

Ոչ փառք բարձանց զբարձրեան ի քեզ ի ըուցին,
Այլ վիշտք մահացուք.

Հաճեաց... գիտեմ՝ հաճիս՝ թէ զսիրտ ի թախ-
ծին.

Առ քեզ ամբարձցուք:

Անցաւ զԱստուած ծընար, ու անցաւ նա չեկեաց,
Յաւեաց քեզ ընդ այն.

Յաւօք ծընաք. ապա սիրոյդ անձկայրեաց

Քըրաւ եմք համայն:

Գըթոյ՝ որ զգահ էւ զգանձս ի քեզ ղետեղեաց,
Իցէ՞ վայր հեշտի.

Քան վըշտահար սիրտ զըրկելոց իւր սրդեաց
Ի ցաւոցս հովտի.

Ճճմարտիցի՞ եւ քոյդ անուն, ո՛վ Պաշտպան,

Այնպէս քաջ կըշտե.

Քան մինչ փայլէ՝ յորս ենն ի քեզ ապաստան
Չեւնըդ շնորհաձիր:

Յորոտալ խիստ տարերց՝ հարեալք ի դետին՝
Կոխեաց ըզմեզ մարդ.

Անց եւ դու ո՛վ հեղաճեմ յոյս մեր սրտին,
Եւ կանգնեացուք արդ:

Զըզուէ երկիր, անգամ զովոյք կան յուրաստ,
Այլ դու ես մեր Մայր.

Ապախտ ընց բնաւ, միայն գիրկ քո պատրաստ
Բացցի մեզ յամայր.

Եւ յամենայնց թէ զմեզ հրամանք ինչ կամ պարտ
Թողցեն կողոպուտ,

Զորդեգրու թիւնս միայն բարձցուք անաղարտ
Իսպառ անկապուտ:

Եւ թէ ցաւիմք եւ լամք՝ դու զբաղըրդ ժըպլտ՝
Հա՛ր յարտասուուս մեր,

Եւ հաշտու թեան ծընցեն ծիածանս լուսա-
խիտ

Յաւքս այս եւ քո սէր:

ԿՈՒՍՍԿԱՆ

Die erste Art der ...
 Die zweite Art der ...
 Die dritte Art der ...
 Die vierte Art der ...
 Die fünfte Art der ...
 Die sechste Art der ...
 Die siebente Art der ...
 Die achte Art der ...
 Die neunte Art der ...
 Die zehnte Art der ...
 Die elfte Art der ...
 Die zwölfte Art der ...
 Die dreizehnte Art der ...
 Die vierzehnte Art der ...
 Die fünfzehnte Art der ...
 Die sechzehnte Art der ...
 Die siebenzehnte Art der ...
 Die achtzehnte Art der ...
 Die neunzehnte Art der ...
 Die zwanzigste Art der ...

SOULOS

SOULOS

Die erste Art der ...
 Die zweite Art der ...
 Die dritte Art der ...
 Die vierte Art der ...
 Die fünfte Art der ...
 Die sechste Art der ...
 Die siebente Art der ...
 Die achte Art der ...
 Die neunte Art der ...
 Die zehnte Art der ...
 Die elfte Art der ...
 Die zwölfte Art der ...
 Die dreizehnte Art der ...
 Die vierzehnte Art der ...
 Die fünfzehnte Art der ...
 Die sechzehnte Art der ...
 Die siebenzehnte Art der ...
 Die achtzehnte Art der ...
 Die neunzehnte Art der ...
 Die zwanzigste Art der ...

Խաղան Փրկչին վերամարտիկ նահատակք.
 Չխորդ հարեալ դահ էւ ըզմահ առաթուր,
 Կարմիր մանեակ զուլամբ մընչէն սիրասուր,
 Ո՛վ պատանեակք երկնահորդք,
 Ո՛վ նազեղն օրերդք:

Սէր կենարարին վառէ զվամեցողս ի ղէն երկնա-
 ղէն.

Ի Յիսուսէ պընդի աըխեղծ ու ալեւոյթ.
 Ծանթ մանուածաւալ խաղայ յերահուես,
 սիրտք՝ երկնի արտփեն:
 Չիք պանծալի սպաս՝ քան երկնից լինեւ
 փոյթ.

Փառք էն մանկանց՝ ճօնել տուողին սիրտ մա-
 տալ.

Փառք էն քաջաց՝ քրիստոնեայ մահան զըմ-
 քաղ.

Հանգա տուողին տացի սէր,

Ո՛վ նահատակք սիրտսէր:

1840

Ի ՆՈՅՆՍ

Հոգի սիրտանջ՝
 Ի մարտ անհահանջ
 Յօժեղոյն հանգէս
 Երազընթաց,
 Ի դռն ասպարէս
 Յարարս քաջաց
 Իջանէ ի դօրծ,
 Յահէ անփորձ:

Քարչեալ սրտաթուենդ
 Քառաթեւ մըկուենդ,
 Վազէ ի ճակատ

Հըսկայ յրխորա.
 Քրիստոսեան հըրաս
 Յոլեալ ի սիրտ յորդ.
 Թօթափէ յաջաց
 Ծանթ կայծակաց:

Սնդընդոց փաղանդք.
 Բաղմարիւր վահանք՝
 Մըզեղ էն յարդի
 Քաջին ընդդէմ.
 Յոսոխս իւր պընդի
 Պէս բոց ճոխածեմ,
 Վանէ զաւղմըն կուռ
 Յիր թաքթաբուր.

Ի շէղ սարտուծեան
 Զինուց զիւական
 Յակառն երկնաբերձ
 ԶՅիսուսի դրօշ
 Կանդնէ մերձ ընդ մերձ.
 Ինքեան ապարօշ
 Մարտին մրցանակ
 Ընարէ զփուշ թագ:
 Որ ի թըռիչ սուր
 Ընդ հօւր եւ ընդ սուր'
 Մարտակից Փրկչին
 Զըգայ յադն,
 Զնք սիրտ ի լանջին
 Հուր սիրոյ ըմբն.
 Յուսով երկնասկիչ
 Յաղթէ ըմբռչ:

1840

Ի ՅԻՇԱՏԱԿԻ
ԱՄԵՆ ԱՅՆ ՍՐԲՈՅ

Լուայ ձայն մեծ բազմուծեան յերկնս
 առելով Աւելուխա:

ՅԱՅՏՆ . ԺԹ .

Նրման ծերոյ խարեափելոյ դրանց ի դուրս'
 Զոյր արտասուբ լակ ընուն զաչքս թափուրս,
 Ի մենաւոր լըւեալ խըղէն ձայն խրախից
 Ըզտողմեւոցն ի տաճարի փափկալից,
 Հառաչելով կարկառէ ձեռն ի կիւթառ,
 Եւ էջ, տակ, ընկեր կուրիս իմ չըւառ,
 Ե՛կ երթիցուբ, թէպէտ ախորժ թէ աղիսուր
 Զայն արկանել առ տաճարաւն այն ամուր,
 Գուցէ հարեալ վանդիս՝ ունկան գըթատէր՝
 Զարձակեսցի անվարձ սղորմ վաստակ մեր:
 Հանդոյն եւ ես ի միգամած կենցաղոյս՝
 Որ հաղիւ հաղ ներէ հայել յերկնից կոյս,
 Յանկարծ սըրախւս ի վեր վաղեմ, մայր Սիօն,
 Զերկնադուամար լըւեալ որդւոց քղին տօն.
 Որոց լըքեալ ըզհողեղէնս այս անարգ՝
 Ի լուսաճեմն արդ յանմահից բողմին յարկ:
 Ո՛հ, թէ եւ իմ ի դըպրուծեան անդ կենաց
 Իցէ գըրեալ անուն եւ բաստ կայանաց,
 Թէ երկրաւորս այս չէ տաղտուկ խուն բար.
 բառ

Որոց լըսեն զանհատական սիրոյն ճառ,
Թէ նդ երջանկաց հաղորդութեան գոյ բաժին՝
Որոց ի ստուերըս գեռ մահաւ պանդըխտին,
Թոյլ արա, մայր, քնարաւ սըրտիս վերամբարձ
Հարցաբանել զոջջոյն զանմահն իմ՝ եղբարց:

Ո՛վ վեհավայր երկնից խորան,
Երանութեանց ասպարէզ,
Քայլիւ սըրտիս կաց յերեւան,
Փանդի անմարժ չիք ինչ քեզ.
Ո՛րք են Սրբոցն այն դասակը
Մեզ եւ զուարթնոց հարազատը,
Որք իբր առ հողմս առաւորին՝
Ի ցողադէն շուշանաց
Եւ ի վառնից թերթից վարդին
Եւ յանուշից ծաղկոցայ՝
Ճամբակ խընկոց բարգ ի բարգ
Ծաւալացեալ յօդ հանգարա,
Կամ իբր առ փող մարտայարդար՝
Ի զօրապետըն վըտոտ հ
Իկտակընկալ մարտկաց դուժար
Ի յաղթութիւն կամ ի մահ,
Ոջջոյն արւեալ կենցաղոյս
Առ անծանօթն ելին յոյս.
Կամ թէ պանդուխտ տարաշխարհիկ
Ընդ բեւր անցեալ վիշտ եւ ծուփ,
Չյետին հանգիտա ի ծնողաց գերկ
Փայ գիտելով հուպ ընդ հուպ,
Եւ անդր ի ծոց կաթոգին
Չըգէ զխարխոսն անմեկին.

Այսպէս առ ձայնն երկնահրաւեր՝
Ակընկաւոյցք խորագլած,
Ի մի խըմբեալ յուսալից սէր,
Հրաժեշտք հնարից մահացուաց,
Յաղատն ի տարփ անձնատուր՝
Ելին յաշխարհն անտըխտը.
Ուր անմահից եւ մահացուաց
Բազմեալ յաթոռ՝ աջալուրջ
Հաստիչն հըզօր եւ հայր Աստուած,
Անբուն աջք յառեալ շուրջ,
«Սըրբութեամբ զիմ պատեցէք
Ասէ, զգահոյսս ս՛վ Սրբութեք»:
Իբր աղանկը՝ աչք ի բարձունս
Հուգիքն ի սերտ մընչեցին.
Չվանդակ լանջաց ի թեւս թրթուունս
Հարեալ՝ սերով մաշեցին.
Գիշերավար աստեղաց
Տարփայլին գոլ զուգընթաց,
Այն ինչ զըստուերքս մերկացան,
Այն ինչ ընդ մահ վաղեցին.
Այն ինչ փակեալ աչքըն բացան,
Ո՛հ, ըզքեզ, Տէր, հուպ տեսին.
Տեսին, եւ ոչ եւս յիշեն
Ըղտիկըբքս համօրէն:
Չանկաւ ի սիրտ նոցն այն սէր,
Որ ընդ խաբկան կենցաղոյս
Առ ստուերագիրըն պատակեր՝
Իբր ընդ մայունն ինչ ընդ ըյս,
Չայնքանս առնէ սըրտակաթ.
Ո՛վ մահացուաց որոգայթ:

Որպէս տաղտուկ ցըրտին ձմերոց՝
 Լըբին զերկրիս օթեւան,
 Ելեալ սարսեան ի փըշոց
 Մաղկուէք անփուշ անծորան.
 Հոս բուրբեցաւ անուշից,
 Տարափք հեղան ցօղալից:
 Ոչ ոք ընդ կրօնակրն կարկառէր,
 Ոչ ոք բառնայր ինչ աստուս.
 Եւ թէ պըշնոյր որ՝ աղբ առնէր
 Սերեցեւոյն ի հեռուս՝
 Որք պանդըխտինս ի խոնորհ,
 Թէ նդ այս եկայք ճանապարհ:
 Յերանուծեանն յաւիտենից
 Արդ ի վայելս անկասկած՝
 Խուժը արարեալ հոգեացն անբիծ,
 Հրճուեալ երգովք առ Աստուած,
 Իբրեւ սփոյրք սաճարին
 Սեւըն սիրով զեղանին:

Ո՛վ, զի՛ մեծ, զի՛ հոծ ամբոխից անդ ժողով,
 Որք ի մի ծոց կուտեալ կասին մի զմիով.
 Ոչ այնպէս կուռ կազմեալ փաղանդ եկք
 Ընդ օդ՝
 Ըզհարաւոյ դխտելով շունչ ջերմահոտ,
 Զանաղանեալ պարուք յայդու դարնայնոյ
 Աւետանբերք մարգաց, մայրից եւ անդոյ՝
 Դեռափըթիթ ծառոց շարժուեն ի դադար
 Իջեւանի քաղցրանըւող հաւուց պար.
 Ոչ այնպէս ինա զԼսկանդինաւն ըզխարակ
 Մովայածիկ սրտե բազից գուժարտակ,

Եւ ոչ սաստիկ այնչափ ի բարձրը լերանց
 Ուղեխնահոս գըդքէն հոսանք խուռն ան-
 սանձ,
 Գետոյարոյց յովկիական ծոց յաւէժ
 Յորձանախառն ալեօք խուժեւ ծովալէժ,
 Ի բիւրեղեայ փըշրեալ բեկորս բազմաբիւր
 Ճօձան ճապաղ ծաւալ փրփուր առ փըր-
 փուր.
 Որպէս Սըրբոցըն ինա կաճառք ի Սաղէմ՝
 Յանտես ծագաց երկրէ հասեալք տարա-
 դէմ:
 Ամենեցուն մի շունչ մի երգ մի բարբառ,
 Զանժամանակն օրհնելով տէր եւ պատճառ.
 Ըսկիղեն աւարտ երգոց՝ անձառ Ալէլու,
 Որ անմահից կենաց ոգի է ազդու.
 Ըզբովանդակն արքայուծիւն ի մի թիւդ
 Ի մի քընար սիրակապեալ աղէպինդ:

Ո՞ղջ լերուք, ո՞ղջ ենձ լերուք
 Ո՛վ ցանկալի հոգեք սուրբք,
 Յորոց երբեմն երկինք զուրկ՝
 Երեւէին ախպր թափուրք,
 Մնալով սըրտից ձեր ամբիծ
 Առ աստուածեան իբր առ գիծ:
 Եցէ հասցէ ձեզ ողջոյն՝
 Որ ի սըրահէս սեւադոյն
 Եւ յերկրամած քընարէս
 Զիշեւ թեւեւ արծուապէս.
 Ո՞ղջ լիք, ո՞ղջ լիք խըմբովն
 Յաւերթուծեամբ Անմահին:

Ողբ Լեր Սիրօն, ազատ քաղաքդ Աստուծոյ,
 Զոր ոչ արտօսըր խռովեաց ոչ ձայն կոծոյ.
 Ողբ Լեր սըրտից ակընկալիք մեր միակ,
 Վասն որոյ կեամբս եւ մեռանիմք համարձակ:
 Եւ դու արժան տան այնպիսուոյ՝ Իրջսոյ մեծ,
 Որ զինքն ըզՏէր բարձր զբարձր զաստեղց,
 Որ զերկին խնդ, զերկրի յոյս, զահ դժոխոց
 Յամենաբաւդ ունիս ծրարեալ ի սուրբ ծոց,
 Եւ խոնորհեալ յաստուածամերձ դահլից՝
 Ընդ տիեզերս պատիս աջք գըթալից,
 Ո՛վ եղէրոց ու Սնեղին դու մայր անձաւ,
 Ողբ Լեր, ողբ Լեր, Մարիամ, ողբ Լեր իսպառ:
 Ողբ Լեր հայրդ Ադամ զուգակցաւդ հանդերձ,
 Սըրբեալ զարտասուս յաջաց լուսայեղց,
 Մատիք աներկիւղ առ կենացն ուղէ՛ջ
 Ոչ եւս քրտվբէկւք հրազննեալ պատնէշ,
 Այլ ինքնաճրակէր ձօնելով պըտուղ
 Լի օշարակաւ կենաց հոգեբուզիս:
 Ողբ Լեր նախկին զոհ դաւաքինութեան
 Ի վարդափրթ իթ քու՛մ նընջեալ յարեան,
 Եւ նախդ ընդ մահունիս խաղօցեալ ընդ դրունս,
 Որ զուարթնոց իսկ ած արտօսր ի յաչկունս,
 Եբբ ընդ գողդ զօնն մընչմամբ հավանեաց՝
 Անլուսից դիպեալ քոց տկանողեաց,
 Եւ շուշանափայլ լանջալըդ կսպոյտ
 Եւ արեհաթ ուրմ վարսագեղ գըխոյդ,
 Ամենայն շնչօղբն ըզքեզ՝ քայցր Սբել,
 Յանյարիւր քընոյդ չուժեցին թափել:
 Լոկ անմեղութեանդ կային պաշտօնեայ
 Յունայնութեան լուս բանտին Ոլիւմբեայ:

Ողբ Լեր հաւատոց հայրդ աստուածատունի,
 Դագարբ ընտրելոց ծաղկամբք լեախուսնի,
 Իրահայտապետ աղեաց քոց սիրուն
 Ի խարուկեալ ծուխ սրտի բաբախուն,
 Յոր Հայրն հանուրց զիւր անսեալ Միածին
 Յանաստն դահուն վազեաց սըրտագին,
 « Կայէք, ո՛ հնազանդք, զո՛հ՝ առ այդ սուսեր՝
 Ինձ լոկ Սասուծոյս պատրաստել մարթէր »:
 Ողբ Լեր պատանեակ դու անխտակիր,
 Զվարըս հրեշտակաց իջուցեալ յերկիր,
 Որ սանձեցեր զէք եւ զնախտնձըն ժանդ
 Ըղջաղթկուս մահու եւ ջուրց անըկանդ,
 Այգքան մե՛ծ է սէր եւ ա՛հ Բարձրելոյն
 Ի զքօն պատանւոյ սիրտ եզեալ ըզբոյն:
 Ողբ Լերուք կաճառք սուրբք հնացեալ ալեաց
 Ընդ պանդուխտ կողերբք ջերմ արմաւենեաց,
 Որք յեշատակաւ կայիցն երջանիկ՝
 Սըգախառն յուսով զաւուրս ձրգէկք:
 Ողբ Լեր երկնադէտ հաւք անպատի,
 Տըքնող ըստուէրաց, խորամուխ սըրտի,
 Որ ընՆաբատեան ամլութիւն դաշտից
 Բիւր համբերութեամբք ցուցեր ծաղկալից:
 Եւ դու առաջնորդ արն խըստամբակ,
 Որ ըզծով ի սառն, ըզլէմ՝ յանապակ,
 Ըզցօլ ի մաննա եւ զանձրեւ ի հաց
 Ու ի լոր փոխեցեր ըզփետուրս մըրըրկաց,
 Մեծըդ տեսողաց եւ դպրութեանց հայր,
 Ողբ Լեր օծելովդ եղարբ իւզածայր:
 Եւ դու ի հօտե ամբարձեալ ի դահ
 Անարի սկայից նահատակ անահ,

Որ եղեալ ըզրիրա ի սաղմնսարան՝
 Երբօվք մըցեցար ընդ զուարթունս անգամ,
 Ի հեղ հանդըրուանս, ի դաշտս ահաբեկ
 ՁՍտուած իջուցեալ ըզցայդ և ցերեկ:
 Ո՞ղ լերսուք ո՞վ վեհք բարոնեաց յայտարար
 Եւ աստուածամուսնս արծուիք երկնայտար.
 Որ զանմահին բան եւ շունչ հրաբորբոք՝
 Ի տառ մահացու յօդեցէք ուղբ:
 Քաղաքավարեալք դուք աստուածաբիծ
 Անգիր օրինօք ի սիրտ ձեր անբիծ.
 Եւ դուք՝ որ դրաւոր ըստացայք պատուէր,
 Եւ զեկեղեցի յանապատն անբեր
 Ձեզ նըշդեհակից ընդ տապանակին՝
 Մինչեւ ի Սաղէմ վարեալ անմեկին,
 Ի յսոկեթեւից քրորեկից ի լանջ
 Հետաղօաեկք զհաշտութեան ճաճանչ:
 Եւ դու յաւէա ո՞ղ լեր, մեծ ժողովուրդ,
 Նոր եկեղեցւոյ սընեալ ի խորհուրդ.
 Ո՛յր՝ իւրօնն Աստուած քայուներկեալ արեամբ
 Արկ ի պարանոց սիրոյ օղաւամբ,
 Ընդ աղետան Եդեմ՝ զոր եբաց խաչիւ՝
 Հորդել ճանապարհ դիւրին եւ հեշտիւ:
 Ո՞ղ լեր դու շաղկապ օրինաց կրկին,
 Ազատ պարերբու եւ բանդ արգանդին,
 Կարապ Յորդանու, տատրակ մենասէր,
 Արեւուն կենաց հրեշտակ լուսաբեր,
 Որ ի գլուխն օծեալ ամբարձեր ըզգաստ՝
 Ընդ լուսացընցուղ հերացն առագաստ՝
 Բիբ աչաց ի բիբ պարկեշտ ի ժղղիս
 Բնթերցեալ ըզկիրս սիրոյ Յիսուսիդ:

Եւ դուք որ ընդ կեանս՝ իրբեւ չող ի ջուրս՝
 Ժրմոնելով սահեալ հարէք ըզքի՛ տուրս՝
 Ձառ ի հրեշտակաց ձեզ տըւեալս յանօթ,
 Մանկո՞ւնք երջանիկք, կենաց առաւօտ,
 Ըզկաթն եւ զարիւն, ըզմարս եւ ըզլոյս,
 Ձըգեալ շունչս երկու՝ Թողէք էտուք խոյս:
 Եւ դու որ առ նոյն՝ նախ ի հրապարակ
 Ըզկենացդ առ խաչ նուիրելով բաժակ,
 Քարավլեժ հոծմամբ զերկիրս բացեր,
 Նախասարկաւագ սպասու սրբասէր:
 Եւ դուք որ նորին զհետ ի դանս ու ի գելս
 Իբր ի բուրաստանս ճեմեալ սոկեթեւս,
 Ըզլըկայականն առեալ բրաբինն
 Յաղթողք ի մահու ելէք ի Սիօն:
 Ո՞ղ լերսուք եւ դուք Փրկչին սիրասուն
 Աշակերտակցօք եւ կանանց դատուն,
 Որ ընդ լուսակոխ հետուն ընդ դարչապար
 Անխոնջ ընթացիւք գնայիք հեղաբար.
 Տարածեալ ուսկանս ամենայն աղանց
 Ի գերաշխարհիկն առթել սիրոյ ցանց.
 Ո՞ղ լեք ըստ սոցունց երթեալք անմոլար
 Հարց, վարդապետաց աստուածախուժք պար.
 Կրեգորք լուսատուք, Յովհանք սոկեթուս,
 Ներսէսք եւ Սահակք, Բարսեղք եւ Ամբրոս.
 Որ զսնդարամետս ի բանից տարափ
 Ըզհերձիւք զնեալս՝ եդէք զնաթափ:
 Եւ դուք Անտոնիեան ձեաք, անօթ շոգւոյն,
 Անըզբաղ կենօք երկնայնոց հանդոյն,
 Որ զլերինն անդորր կոչեալ յամայնս
 Ի բարանձաւաց ու աղբրց հովանիս՝

Միայն ընդ միայն խօսելիք ընդ Տէր,
 Փոքու խարոցաւ ընդ մահ եւ եթեր,
 Եւ որք մեղուօրէն գործակիցք ի վանս
 Հաւասար վարձուք եւ յերկնից խորանս:
 Եւ դուք նազելիք փափկուածիւնք երկրի,
 Կարծեցեալ զուարթունք ի մահուս վայրի,
 Ոսկեծղի տաճարք գեղըլ եւ շնորհաց
 Երկնից տարփացեալ խումբք օրիորդաց,
 Որ զակնախըտիլ բարեաց բեր վայել
 Զոր ձեզ խոստանայր աշխարհս ընծայել,
 Տարեալ ծածկեցէք յամուր կուսաստան,
 Աշխարհիս յուսոյ անյուշ արեւլան:
 Եւ որք գիմադրաւ ի կրկես մահուն
 Ըզմահ սարտուցէք, կոյսք, վեկայք սիրուն:
 Ողջն եւ ձեզ շունչք քաղցունք, կոյս հոգիք,
 Լաւուծեանց քանդակք սրբադործ մանկիկք,
 Որք յանցս համառօտ ընդ լալեացս հովիտ
 Ծաղկունս հիւսեցէք լոկ ակնախըտիտ:
 Այլ եւ ձեզ ողջոյն, ողջոյն եւ համայր,
 Սըբաւոր սըրտիս մասն, եղբարք եւ քոյր,
 Որք ընդ իս ի նոյն սընայք գիրկ ջերմին
 Ըզմիոյ մօր կաթն արբաք յորրանին.
 Այլ դուք չըգիտեմ զխարդ ընդ զուարթնոց
 Դաշինըս կրուեալ հատեք վաղ ըզկոծ.
 Յայնքան սիրելեաց ճողոպրեալ թէթեւ.
 Հարէք յարասնուս մեր զհոգւոյդ արեւ.
 Եւ դուք անծանօթք իմ արեանառուք
 Սրբոց դասակիցք, եւ դուք սղ լերուք:

Ողջիք, ո՛վ Սուրբք համօրէն
 Զորս արդ հրեշտակք ողջունեն.
 Որք ընծակիլք տատան՝
 Ընդ յարածուփս ովկիան
 Յետ այնքանեաց փոթորկաց
 Հարթեալ ըզգէզ կոհակաց,
 Յաստղըն յուսոյ լուսաձեմ
 Սիրով հաղմոյն ուղղեալ գէմ,
 Եւ հաստով առեալ թինդ
 Յուղղեակ խաչն ամբալնդ,
 Պսակահամբար հատեք անդ
 Ի նաւահանքիս անվըկանդ:
 Հատան երկայն արասուք
 Ակընկալիք, ան եւ սուգ,
 Ընդ մէն կոյլակ մի արեան.
 Աւէք համբոյրս աստուածեան:
 Մն, ի կայիցդ անվըրդով
 Հայեցարուք յայս ժողով
 Տարուբերեալ եղկելիս
 Դարանակալ ընդ ալիս.
 Եւ ըզբըլնովք մեր վերուստ
 Զահեցէք լոյս հարուստ.
 Շնչեցէք սիւգ բարեկամ
 Վերբերել ձեզ զայս երամ.
 Եւ առ որ զձեզն կոչեաց՝
 Հաղորդք կըրեցս եւ լալեաց,
 Սնդուլ լերուք բարեխօս,
 Շըրթամք հոգւոյ սիրահոս,
 Պատրաստեցէք մեզ կայեանս՝
 Զուգարնակել յաւիտեանս:

Յ՛ ԱՌԱՅԻՆԼԱՊԵՏՄՆ

Զայն սահանացդ, արևնը ոճշտ Տէրերիս,
 Ո՛ւմ հառաչէ և լըսուածեան գիշերիս,
 Լուսին՝ չեաես հանգոյն գիշեր յաւիտեան,
 Մինչ և կոճեղ՝ ձըկնորան ամիսնց գայլիւեան,
 Ուսկանաւոր հանուրց զարմիս Ագամայ
 Հըսկեր ընդ քաջ հեթանոսացն հօր՝ Պօղայ.
 Եւ ոչ կանխէր այնքան զըւարթ յօգս արեւ,
 Որքան ամուքս և մահ եղեալ գէմ՝ թեթեւ:
 Ինձ գեղեցիկք սոքա քան զլուծ նախահարց
 Խայտացելոց և խընկաբեր բըլըակաց.
 Նոքա որդուլք զերկրի սահմանըս լըցին,
 Սոքա զորդին երկնաբընակս արարին:
 Որպէս մըշակ հասեալ յաւուրցըն վախճան՝
 Յերկ վաստակոյն արևանելով զՅիւս ական,
 Նոյն եւ սոքա՝ չկուես արձակեալ սլարայած,
 Տեսին ըզհուսն հսգեծընուող զաւակաց.
 Ու և քեղ՝ քաղաք սեգ գարձուցին զՏպլե-
 ցուած
 Եւ սարսեցին կապիտողեան քո աստուածք.
 Յասեաւ Ներոն, ցասեան հիւսպաք եւ ա-
 տեանք,
 Մահ վըճուեցին. ո՛հ, ընդէր մահ՝ եւ ոչ կեանք:
 Մին ըզդուուս՝ զոր տայր Փրկչին և կըշու՝
 Մինչ ընդ գընդի մասնըջին գայրն և բըրդիւ,

Արդ հեղաբար և պատուանդան տայ խաչին,
 Ուղլէլ աղատ ըլլար շարսարս ընդ երկին.
 Միւսն յեւանդան սերոյն զեղեալ յորդառատ՝
 Դիմէ ձօնել զարեանն աղբիւր կարմրահատ...
 Ժրպտին հոգիքն իսկոյն միւսանց պատահեալ
 Ի կիցս երկնից ճանապարհին լուսափայլ: ...
 Ո՛ղլէր Հուովմ, չիցես գուայլ խորան գից,
 Այլ գրօշակիր գագաթն անխառն կրօնից.
 Գահոյք կայսերց խորասուղին և Տիբեր,
 Դրդուին գրօշեալք եւ քաջ արանցըն սլաակեր,
 Պետրոսեան սերձ՝ աթուռ եւ սլարձք սօղո-
 սեան
 Պաշտօն աշնուսն և յուրալէրանց խուժաստան.
 Յորջափ զեւան ջուրք յովկիան սարսուսէր՝
 Սմբարձեց նիշ խաչին գըլոււս յաղթաբեր.
 Անձանութից ամիսնց և ծագ տարաշխարհ
 Զայն աւեանեաց հասցե ոգւոց կենսաւար.
 Թողցե զանսառս երեւոյրեացն օթակից՝
 Եւ գիանագոյնըս քնընեսցե զէն երկնից.
 Զամեհի գալան ակօսելով կապուտակ՝
 Սուրբ տաճարացն ածեալ ուխտից պատա-
 րագ,
 Ի ծուեր անկցի գէմ գըմբեթին երկնածայր՝
 Քան զոր չամբարձ երկիր Հաստչին շըբեղ
 վայր:

Ի ՅԻՇՍՍԱԿԻ

ՍՐԲՈՅ ԱԼՈՅԻՍԵԱՅ

Սերեմ էն զօրն երանեակ
 Որ յիշէ զինս Արքեանի
 Հըռչակերով պայծառ ան
 Ձառաքինւոյն գերբողոն
 Որ վեհ յերկրի եւ յերկինս
 Մօգէ զվերինս եւ ներքինս
 Աստուածութիւն եւսնդ էմ
 Ի հոգւոջ անդ սրբրածեմ
 Պայծառափայլ զիւր տիպար
 Գրոշմեալ զիտէ սիրաբար
 Սյլ աչք եւ միտք իմ յատուշ
 Կալ գէտ զիմացն այն քնքուշ
 Եւացեալ հայիմ զեանահոր
 Եւ գըտանեմ հրաշքս նոր
 Մանուկ տիօք անաւաք
 Ծընեալ ի բասս բարձրունակ
 Ըզպերձութիւն եւ զաշխարհ
 Ձամէն գըրէ արհամարհ
 Խոնարհագոյն բընակից
 Համարի զանձն իւր անբիծ
 Ոչ անհըմուտ աշխարհի
 Այլ հըմտագոյն ի թերի

Եւ վաճառէ զամեայն
 Ի սէր հասոյ մի միայն
 Յիսուսաւանդ մարգարտին
 Որով երկինքն հայթհայթին
 Սընու սիրով շուճ ընդ ուն
 Ձոր արին հեղոյ հեղն Յիսուս
 Երթայ նըստի մեռաբն
 Սընի խորհուրդս երկնայն
 Եւ բախէ զսիրտն անըզհատ
 Եւ հառաչէ սիրահատ
 Եւ միջէ հեղ եւ լուսիկ
 Եւ ցօղէ դաւն եւ քաղցրիկ
 Քանդիկ պանդուխտ է յերկնից
 Համարի զայն՝ անձին բիծ
 Եւ արտասուօք հանապաղ
 Որ ի սըրտէն սիրալաղ
 Կամի շուանալ զիւր աման
 Եւ զինս ջինջ է համայն
 Յանգուշ սեղոյ տարափին
 Մաշի անօրըն մարմին
 Այլ եւ զայն ոչ գըրէ շատ —
 Ո՛վ սիրոյ հնարք անձնագտա —
 Ինքնին զինի սէր փափուկ
 Քան ըրգահիճ՝ ջարաշուք
 Աւետլ խայթող խարաղան
 Կոծէ զիրանս սրբբաղան
 Եւ վարդակաթ ճապարկը
 Ձըքնաղ զամէն քան ծաղիկ
 Հոյլ հոյլ հասէն ի լանջայ
 Եւ ի յուսոյ ճըգնաղբէայ

Քանզի արկեալ դամ՝ մի դաշտ՝
 Ակնարկէ զՏէրն իւր ի խաչ,
 « Աստուած մեռաւ, ասէ, » նդ իմ՝
 Եւ պատճառք՝ մեղքն սխերթմ։
 Ա՛հ, սրարական եմ մեղաց,
 Եւ ընդ մահու քո, Աստուած » :
 Եւ քան ըզհուսկ կենաց պահ՝
 Կանխէ կամօք զանձն ի մահ։
 Աղբ աղբ կըտատ զիւր մարմն
 Որ չըմեղաւն ինչ նըմն։
 Որչափ հէծ է նա ի ցաւս՝
 Հոգին ի սէր հարու ծափս ;
 Եւ արտասուք ըսպիտակ՝
 Անըծուծեան նըշանակ։
 Որպէս շուշանք շողաշար
 Ի խաղս առուաց հեղավար՝
 Խառնին յարիւն վարդադոյն,
 Զոր ծընանի զըջուծիւն :
 Այլ չեք չարեաց ի նմա փուշ :
 Ամենեկն է ն՝ անուշ :
 Եւ երկոքեան սուրբ վըտակք՝
 Իբրեւ գետոց օժանդակք :
 Մին ըսպիտակ միւս կարմիր
 Զուգեալ թափին ընդ երկիր :
 Ի որքան կայակէք ի վայր դան՝
 Այնքան ծաղկունք ամբառնան,
 Հուսիւ սըսակ յերկնից ծոց
 Ի կաթողին զըւարթնոց,
 Որք թացեալ թեւս յայն առուէն
 Ար Տէր Յիսուս ցուցանէն :

Գըթան երկինք բովանդակ,
 Կոչէ Յիսուս զիւր որդեակ,
 Եւ ոչ այնքան սիրալիր
 Խնամող հրեշաակն իջեալ ժիր՝
 Եյեա զմանկանն հագի սուրբ
 Ի հողեղէնն աման նուրբ,
 Որքան զամանն արդ յօժար
 Արդ բեկանէ սիրահար,
 Եւ արձակէ զհօգին այն
 Ընդ որ ինքնին հրաշանայն,
 Խոստովանեալ աննախանձ
 Ըզսանն՝ ինքեան զուգապանձ :
 Եւ քան զիւր թեւս իսկահուր
 Ըզնա լինել սիրասուր :
 Որ իբրեւ փայլ փայլական՝
 Հատեալ յերկրէ բայական՝
 Ի մի բըծիծ յերկնի ծայր
 Ու ի բարձրագոյնն եհաս վայր :
 Զխորդ հողոյ սարըր անարդ
 Տանէր զհօգին դերայարդ :
 Զխորդ մտուռի մ՝ ապիկար
 Գոյր Սրովբէից հաւասար :
 Եւ մըտանէր կայր անկէզ
 Յաստուածային հուր պարտէզ :
 Ո՛վ բարձրամիտ մահացու,
 Հասեր երբեք այս բարձու :
 Դու որ յուզէս յար զեթերս
 Եւ զանդընդոց խոր ընդերս,
 Քանի՛ արեօք աստեղց լոյս
 Յարեգական հասցեն յոյս :

Ո՛րքան, ասա՛, պիտի հօւր
 Զայսփոյն վառել սիրո՛ մաքուր .
 Անբըճուժիւն որքանի՛
 Կըչիւ միոյս այս լինի :
 Իսկ ես երկնից չեմ հասու
 Նրժգէ՛հ հովտիս մահայու .
 Զարմունկն եդեալ ի գետին՝
 Պըշնում միայն ընդ երկին .
 Եւ որոճեմ գլխշատակ
 Զոր աստ թողեր, Արտեալ .
 Եւ ի նոսին սըխրանամ
 Ճարակիմ ու ո՛չ յադեանմ :
 Սիրեմ եւ ես սերս ըզբեզ .
 Հեախ սիրոյն յասպարէզ .
 Ո՛հ, չունիմ սիրա քեզ արժան ,
 Այլ սէրս այս չէ՛ անարժան .
 Զէդէ, այո , քեզ նրման ,
 Սակայն այլոց ետու ձայն .
 Եւ բերի զքո սեղանով
 Սիրտըս մատաղըս սիրով ,
 Եւ յառկայծեալն իմ պատրոյդ
 Լուցի լապտերս քաջաւոյդ :
 Ես իսկ անցի՛ նդ գաշտ եւ դեա՛
 Ի քո գաւառ ըղձահեա ,
 Զաստուածատուփ քո գըլուխ
 Համբողբեցի սըրտաբուխ ,
 Եւ դերկնունակ քո նըշխար
 Ետու մանկանցն իմ աւար : ...
 Իսկ այսօր կամ տարագէմ
 Յերախանէն՝ զոր սիրեմ .

Ծով եւ ցամաք, լեառն եւ դեա
 Ընդ իս եւ իմն անջըրպեա .
 Լոկ միայնակ քո զանունս
 Հընչեմ յօտարս ինձ ափունս ...
 Սակայն դու մերձ կաս առ իս
 Մերձ եւ իմացըն բերիս :
 Են են ի տան անդ մանկունը
 Ինձ եւ յաւէա քեզ սիրունը ,
 Զի մերձաւորք հասակաւ
 Մերձք եւս սըրտից աեսակաւ ,
 Որք կատարեն ըզքո տօն ,
 Իբ պէս ցանկան գոլ ըզգօն .
 Սըվուեն սիրով քեզ ծաղկունս ,
 Ըջըրտից կիրս անուշունս .
 Ուխտըս դընեն քեզ պէսպէս
 Զի հաճուժեամբ հաստատես .
 Հանգիւր ի տուն՝ ուր սանք իմ ,
 Ընկալ զաղերս մըտերիմ .
 Միոյ միոյ նոցա տուր
 Զայն քո շընորձըս մաքուր՝
 Զոր բերէիրդ յամըն յայն
 Յոր , բաքանչիւր արդ նոքայն :
 Իսկ ինձ որ անդր ըստ քո ախ
 Եւ սեաւս ունիմ ի սըրտիս ,
 Ու այսօր հատեալ ոստ վայրի
 Ի պարտիզէս որ խամրի ,
 Արկանեմ յայն ճանապարհ՝
 Զոր քո սիրէ գաըշապար ,
 Ինձ ինչ հանցես ի պարգեւ
 Որ ձահ կըչուի արգարեւ : —

Ինձ՝ մասն հանցես զարատնւս.
 Պատուէ զարտօսք եւ Յիսուս.
 Արքեօք եւ բոլոր պամունւան
 Ոչ էր այնքան հրաշազան,
 Թէ արատաւաջ մարգարիս
 Չայն չանկանէր խիս աւ խիս չ

1852

ՀԱՌԱՉԻ

Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ՝

Յեկեղեցոյ նախատիպք յԱյրարատեան դագաղ
 Թանց

Որ զնախընծայն պատարագ խնկեաց ի հոտ նոր
 ծաղկանց,

Որ զհրաշալին մեռեթիւն աստուածու թեան եւ
 հոգւոց՝

Նկարագրեաց յԱգամայ եւ յԵւային անձին ծոց,

Որ յանմեղն Սբեւայ մըկըրուեցաւ վարդ-արիւն
 Չկենսավտան ի խաչին օրինակեալ քառու թիւն,

Եւ զաշխարհիս յոյս ծրփին՝ քաջայանդուգն ըս-
 տանձնեալ

Չտարերց կապուէր սպառնալիս՝ կարով երկնից
 գիմակալ:

Սրտահառաջ շննչ հիւսիսոյ,

Հօրթեւեալ գէմ ընդ հարաւ՝

Ի ճեմ խաղայ դրախտից հոգւոյ.

Քորք իմու եղբարք, բացէք անձկաւ:

Ոչ վայրասար որպէս հողմն ընդ անասատ ան-
 կենդան՝

Ուր յաւաղուտ մոխրատիպ խըրեալ կայ յոյս
 բընու թեան,

Ոչ որպէս հուր շըմնլիկ հրդեհէլսով զդոս ան-
 ծախ:

կամ շանթեւանդըն կայծակ տիեզերաց դու զըմբարդ .

Ոչ ի մայրիս մըրըրկեալ մեծաշառաջ փոթորիկ , կամ խաղմարար յովիտան անդընդաքակ խեւալ լիք :

Սա ոչ այտպէս բարձրորոտ , յայնաբարբառ , հոլանի .

Այլ որպէս ծուխ հեղատլաց , որպէս անձայն հովանի :

Սրտահառաջ շունչ հիւսիսոյ

Հոլաթեւեալ գէմ ընդ հարաւ ,

ի ճեմ խաղայ դրախտից հոգւոյ .

Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :

Մըղունն առեալ ի ներքուստ հոգւոյ հառաջս հրափետուր՝

Վտրեալ վարդի անարդէլ ընդ արեղերս ընդ հանուր .

Ոչ ծաւալմունք վայրաց , ոչ խոնաւ նըմին ասպարէզ :

Երկրապարիսպ ոչ բրդունք լերանց պահանգք ձիւնադէզ ,

Ոչ խիլ եւ խրամ սահմանաց , ոչ բռնութիւն զինադգեաց ,

Ոչ կար ձեռին , ոչ սրտի կամք զօրէն կալ դիմաւհաց .

Այլ ընդ երկինս եւ երկիր դիմադրաւեալ նահատակ՝

Քան ըզգիմեալն յարեւմուստ արեւելից փայլատակ ,

Սրտահառաջ շունչ հիւսիսոյ

Հոլաթեւեալ գէմ ընդ հարաւ

ի ճեմ խաղայ դրախտից հոգւոյ .

Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :

Չի՞ զանդիտես , արդ արի՞ , արդ հառաչեա սիրտ ցաւած ,

Թէ ոչ անմեղ՝ այլ սահման անսահման ետ քեզ Աստուած .

Քամին բարբառ հեղամուռնչ ելեալ ընդ ցեւս սեհեկիդ՝

Երկինք կրկնէն ի վերուստ , կրկնէ լալեացս այս հովիտ .

Դուքան զէթեր ծառալուն երթաս սփռիս ըզհանուրք՝

Որք յանմահիցն անդ խորանս ու սրբ ի տաճարս աստ էն սուրբք .

Այս սքանչելիք էն խաչն , այս գործ սիրոյ Յիսուսի .

Իւ մեղադարանս յուսագնեալ՝ յեկեղեցիս խուսս խուսի .

Սրտահառաջ շունչ հիւսիսոյ

Հոլաթեւեալ գէմ ընդ հարաւ

խաղայ ի ճեմ դրախտից հոգւոյ .

Քորք իմ ու եղբարք , բացէք անձկաւ :

Ո՛վ զօրք յերկրի , զօրք յերկինս , Հաղորդու թիւն դու Սրբոյ ,

Ե՛կ լից ըզսիրտս այս յուսով , անշիջան վառեալոյ .

Ասա , բանի՞ բերք էն ինձ հաւատացեալ հարազատք ,

Ընդ որս ծածուկ կապանօք կապիմք ի սիրտ անանջատք :

Եկայք եղբարք իմ և քորք ինձ անծանօթք երե-
սօք
Միաբարբառ մնչեցուք առ որ դիտեն զիս միշտ
ձեօք,
Այլ ում սեղան ի հեռուստ ընդ աղանեսաց երա-
մուց,
Աղաւացեալ եւ այս սիրտ թեւակոխէ դալ ի
Սրտահառաց շունչ հիւսիսոյ [բուծ,
Հոլաթեւեալ դէմ ընդ հարաւ,
Խաղայ ի ճեմ գրախտից հօգւոյ,
Քորք իմ ու եղբարք, բացէք անձկաւ:
Իբր ըզբըթոյն ճախճախուս քարակարկանն հեր-
ձեալ պորա՝
Հառաչանացս այս բոց դէջ զիմէ աղատ ընդ ու-
լորտ.
Կայծ ընդ կայծից հրաձուլեալ յօգապարիկն ընդ
չաւիղ՝
Իբր ի ծղօտէ վառեալ պրակ՝ ստեղնաձրբի վէր
ուղիղ,
Քերէ զբրթամբ այս հառաջ՝ մշտախոհին մենա-
ւոր,
Յերիասարգ եւ կոռօին խառնի՝ մաղթանքս հրա-
ւոր,
Յօղէ ընդ ջերմն արասուս որբոց ու այրեաց լը-
ուելայն,
Եւ յայլ աշխարհ բանտելոցն հնչի հեծ խոր եւ
Սրտահառաց շունչ հիւսիսոյ [երկայն.
Հոլաթեւեալ դէմ ընդ հարաւ,
Խաղայ ի ճեմ գրախտից հօգւոյ,
Քորք իմ ու եղբարք, բացէք անձկաւ:

Ոչ եւս օտարք ոչ եւս խորթք, այլ համահարք
համամարք
Եկեղեցոյ եմք որդիք եւ ի Յիսուս զող եղբարք.
Հայ եւ Սըխիւթ եւ Հեղեն, Սարմատ, Տեւանն
եւ Հնդիկ
Մտիլ ըստեամբ գիշցաք, միջնաշխարհիկն եւ խու-
ժիկ,
Մի խօսք, մի ձայն եւ շունչ նոյն. համափափագ
համակամք,
Ամենքին ընդ Աստուած եւ ընդ իրեար բարե-
կամք.
Ամենքին ըզմոյն, զամենեցուն խնդրէ մին,
Յամէն բողէ ամենայնք եւ աղօթեն ու աղօթին.
Սրտահառաց շունչ հիւսիսոյ
Հոլաթեւեալ դէմ ընդ հարաւ,
Խաղայ ի ճեմ գրախտից հօգւոյ,
Քորք իմ ու եղբարք, բացէք անձկաւ:
Ո՛վ աստուածեան առն հրաշից, հառաչս ի քեզ
անդադար
Հանապաղօր մաղթանօք Սրբոց՝ կացցէ դարսց
դար,
Որպէս անանցն այն լապտեր հսկեալ հանդէս
դաբիրայն,
Զոր հուսի փոյլոյն շիջուցէ աշխարհաւեր շունչ
միայն:
Ո՛վ, որքան աստ թաղծութիւնք ընդ բերկրու-
թիւնըս զուգին
Կիւամուրր որքան սիրտք՝ հուսլ ընդ հրեշտակս
հոգեկցին:
Ոչ ոք աղբատ աստանօր, անծգնական չիք ուրեք,

Եւ անառզ ոչ կարէ յետադարձիլ՝ հիւանդ հեղ:

Սրտահառաջ շունչ հիւսիսոյ:

Հըլաթեւեալ դեմ՝ ընդ հարաւ:

Խաղայ ի ձեմ՝ դրախտից հոգեւոյ:

Քորք իմ ու եղբարք, բացէք անձկաւ:

Ահաւասիկ այս մի սիրտ յեկեղեցիս համօրէն:

Աղօթեցէք որ մտանէք՝ վասն իմ՝ ընդ դրօշուս

որբաշէն:

Աղգբեւ աղինք ամենայն, եկայք մտցուք ի տունս

սոյս:

Օ՛ն անդր, աստուսա թեւեսցուք ի յօթեւանսն

յարակայս:

Ոչ պապ հսկէ հուր հրեշտակ երանութեանցն Եւ

դեմայ:

Այլ յաննախանձ վայել՝ հեռք հորդին սրգւոց

Ագամայ:

Աստ զետղ առեալ կան հաւատք, յոյժթեւածէ

Ժիր նուիրակ:

Եւ սէրն անխոնջ՝ խարուկէ զաստուածային պա-

տարաք:

Սրտահառաջ շունչ հիւսիսի

Հըլաթեւեալ դեմ՝ ընդ հարաւ:

Ե՛րթ յերախանըս Յիսուսի

Ե՛րթ հաղորդեաց ընդ Սաբբաանձկաւ:

1819

ԶՍՆԳԱԿԻ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Զանգակացն յերեր ու ի գանջ

Տրտիեալ բախի սիրա իմ ընդ լանջ:

Չայն Քրիստոսի հարսնահարաւէր

Չոգիս մանկանցն ուղղէ ի վեր:

Սազատաւ երկնից յերկրի

Յաստուածակօփ հիմնեալ քարի,

Սնրբձութեան տաղաւարկոյ:

Եկեղեցի սուրբ խկաղոյս:

Հին հաղբիւքն բանասրկու՝

Վարատելոցս յովիտ մահու

Հիգոյն Եւայ սրբոցն որդեաց՝

Իու ճշմարիտ մայր մեղ շնորհաց:

Ի մեղաց մեղ եւ մահուն

Իու կառուցեր զանաղաքն տուն:

Ըզմին քուես, միւսոյն սաստես,

Զբրդկաք յերկին սուրբս աւանդես:

Քանզ՝ ինքնին քո վեհ փեսայ

Յաւիտենից իշխող արքայ,

Յանապական բուժ սեղանի

Անմահութեամբ միշտ զենանի:

Ըզմարմին կեր տայ սկարաց

Զարիւնն արբուժն եւ դեղ կենաց:

Ընդ սիրտ խառնի՝ բրեւ հուր ի հուր

Ըզեք սրփուէ յոգիս հանուր:

Մեղաւորք՝ անմեղք դառնան
 Մահանացոք անմահանան .
 Սեանն՝ արտասուօք լինի ստիտակ ,
 Հողոյ բնակիչ սրբէ նդ հրեշտակ .
 Անդ ամէն խրմբի հասակ
 Զերանելեաց կաղմեալ դասակ ,
 Միոյ Փրկչին իւր սիրարկու
 Եւ միոյ տեառն երկըրպագու .
 Անդ կըքեալ գըլուկսք ծերոց
 Ամբառնան աչքս յուսակոծ .
 Մարդէն մանկունք ծըղիս ի վեր
 Ծուները կրկնեալ մարցն աւընթեր .
 Քահանայ՝ ի սէր ու երկեղ
 Մըտանէ անդ ի բեֆն ահեղ .
 Պաշտէ խորհուրդ անձառելի
 Յայանէ զԱստուած շօշափելի .
 Սարկաւազն ըզսեղանով
 Արծաթ առեալ շուրջ բուրվաւով
 Խընկէ զմաղթանս սըրբօցն յերկին ,
 Ու երկինք ու երկիր ի մի զուգին :
 Զըղձական արծօսը հիգոյն
 Ծաւալանայ ցօղոյ հանգոյն .
 Եւ հոս սիրոյն անմահարար
 Հուր հատանէ յանձանց խոնարհ :
 Զանգակացն ի մէն դանդիւն
 Երկնից յուսոյ հընչի վանգիւն .
 Եւ սիրտ յիշեալ զինքըն նըժդեհ՝
 Վեր հառաչէ յերկնից նըսեհ :

ՕՐՀՆԵԱԼ Է ԱՍՏՈՒԱԾ

Օրհնեալ է Աստուած .
 Յանհուն եթերաց
 Յանծայր գաւառաց
 Անուշակ վայրաց ,
 Ի բըլոց փառաց
 Մըշաղնջենակաց՝
 Յըխորս սանդարաց
 Վըջից խաւարաց
 Ալուցն յատակաց
 Ոչընչի դրացեաց ,
 Օրհնեալ է Աստուած :
 Յանարիւն զօրաց
 Հուլից հրեղինաց ,
 Եւ յանինթ ընարաց
 Բիւրուց հաղարաց
 Հոմաշունչ սըրնդաց
 Զանաղան նուագաց
 Զայնից անսղուաց ,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ ի նախն հաստուած
 Խաւարահալած՝
 Լոյս համատարած ,
 Ու ի բոց աստեղաց
 Ի գէս վարսամաց ,

Յարեւուն վառած
 Զհ հասարակաց,
 Եւ յեղջերս մահկաց
 Լուսին հեղաբնաց,
 Գեղայն գիշերաց,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ յամսլաղաց
 Գոռող կատարաց
 Ի լերանց բըրդաց,
 Կըշտից կոհակաց,
 Ժայռից խոժոռաց,
 Եւ յանսպտտաց
 Արձակ տարերաց,
 Խանձարրոց մըըրկաց
 Խորշից խորշակաց,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ յօդոց բարեաց,
 Ի հովոյ հովտաց,
 Ի թեւս անտառաց
 Հովանաւորաց,
 Յանդոց պարտտաց
 Ծածանուտ հասկաց,
 Ի սբղոյ մարդաց
 Ի խոտոց վայրեաց,
 Ի հոտոց դաշտաց
 Համասպրամ ծաղկաց
 Յերփն երփն երանդաց,
 Ի բոյրս անուշաց
 Շողեալ շուշանոց,
 Վառեալ վարդեկաց,

Մեղմ մանուշակաց,
 Փափուկ ելակաց,
 Հրագոյն բոսորաց
 Արեանց — աղբերաց,
 Ոսկի դընտակաց
 Կողերց պարտիզաց
 Ծոպ ծոպ ծածանած,
 Ի ծոց սաղարթաց
 Կարկիւ խընծորաց,
 Ճապուկ դիտակաց
 Հուլիցն օգաբնաց
 Եւ սստանըստաց,
 Տերեւեալ անակաց
 Բունից փարեղաց
 Ազատ պալատաց
 Զագուց դըրուէրեաց
 Պարուց թատերաց,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ յուղխ հեղեղաց
 Ի ձայնս սահանաց
 Յորդոր աղբերաց
 Կարկաջուն առուաց,
 Գետոց հեղաբնաց,
 Գունդ գունդ սահանաց
 Քարափաղ վտակաց
 Փրփրագէղ վիժմանց,
 Նըմանեալ գառանց
 Զիւնափայլ գեղմանց,
 Կամ բարդ բարդ դիլմանց,
 Ծըխոյ ծաւալմանց

Ի ծագքս լերանց՝
 Ի յայգքս ծաղկանց
 Աւուրցըն փայլմանց
 Նորահաս դարնանց,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ ի ծուփս ալեաց
 Ծայրից կոհակաց
 Անգուլ երերաց
 Լոյծ ասպարիղաց,
 Կապոյտ կուտակաց,
 Եւ յերթըս նաւաց
 Յանհետըս շաւղաց
 Համասփիւռ հովտաց
 Համանիւթ դաշտաց
 Յանապատըն թաց,
 Յանմուլար ընթաց
 Ընդ նիւս մրկանաց
 Ի թիւ սահագնաց,
 Սպիտակատարած
 Թեւոցն ի պարզուած
 Հողմովք դոյւ աւած,
 Եւ շուրջ շուրջ պատած
 Փրփրօք գիղամած.
 Կամ թեւք ամփոփած
 Եւ ոտս արձակած,
 Ի խաղ անուադարձ
 Տըւեալ գույթ աքեաց
 Պողովատաղդեաց,
 Շոգուով շարժելեաց
 Հըրով հըրելեաց

Մըխով մըղելեաց,
 Յեւեւէլ անկաց,
 Յանդուլ պատուուած
 Եւ յանդուլ կարուած
 Տրփեալ տարերաց.
 Եւ իբր ի սընկաց
 Ի ծայրից ծխանաց
 Ծուխըն ծառացած,
 Մերթ յամպըս բաղմած,
 Մերթ հանդոյն հերաց
 Հըսկահասակաց
 Վարսահոծ վըհկաց՝
 Հոյլ հոյլ հոպոսեաց
 Զուսովք ծըփելեաց,
 Հետ ընդ հետ հիւսուած,
 Գանդրագեղ կըռած
 Թըխաթոյր ծոպաց,
 Եւ օգածընաց
 Վիշապամանուած
 Նըմանեալ ուրուաց.
 Այսքանեաւ սարած
 Ի կերպ յաղթաղդեաց
 Նաւուռն նազանաց,
 Դիմեալ տարաքնաց
 Յերկիր հեռակաց,
 Յափուռն անմուաց,
 Իքընին իրաց
 Ի խոյզ վաճառաց,
 Ի համբաւ բարեաց,
 Ի տես սիրելեաց,

Օրհնեալ է Աստուած :
 Ու ի հիւս այերաց
 Թըռչուն տարերոց ,
 Յապշոյ օգայած
 Ի խուժբս ամպրոպաց ,
 Մերթ գալարողաց
 Եւ մերթ պարզողաց ,
 Ի Թուխըս դիմաց
 Երկնից եղերաց ,
 Ի խռան աղմրկաց
 Յամբոցըն հարուած ,
 Ի մանչիւն մըրըկաց
 Ի բուք փոթորկաց ,
 Յընդոսս որոտմանց
 Փոյթ փոյթ փայլականց ,
 Ի յանկարծաբանչ
 Շանթիս կայծականց
 Հրաձիգ խանձողաց ,
 Ի աեղ կարկրտաց
 Խոշտանդիչ դաշտաց ,
 Եւ յուխս անձրեւաց
 Հեղեղարուցաց ,
 Ի խուլըս վտակաց
 Ի շառաչս այեաց ,
 Ի շըձիւն խըձաց ,
 Ի կոփիւն վիմաց ,
 Ի կոծիւն մոյրեաց ,
 Ի վաբիւն եղանց ,
 Խուճապ գաղանաց ,
 Ի գանգիւն դոգած

Խոր արձաբանդաց
 Չորոց եւ հովտաց
 Յահեղից Թնդմանց ,
 Օրհնեալ է Աստուած :
 Եւ ի շընչողաց
 Բիւրուց կենդանեաց ,
 Ի ձայն խօսնակաց
 Հաւուց գիշերաց ,
 Եւ յերգ ծիծեւաց
 Յայգուն ի բացուած
 Վարդաձեմ գըրաց ,
 Ի հեղ աղուենեաց
 Վուլըս սիրարկուաց ,
 Ու ի մունչ ողբասաց
 Հանդարտ տատրակաց ,
 Ի կերպ կարասաց
 Փետրոց լուսողգեաց ,
 Ի պէսպէս ճամկաց
 Սօս սիրամարգաց .
 Ի հօսս ոչխարաց
 Յանգեայս պաճարաց ,
 Յերէոց վայրեաց
 Ու ի խուան ամէհեաց ,
 Յառիւծոց սիգաց
 Յանգեղց եւ յարծուեաց ,
 Եւ ի նըհանդաց
 Խորոց ու անձաւաց
 Զեւոց ճիւղաց
 Վիտից վիշտաց ,
 Օրհնեալ է Աստուած :

Եւ ի վեհէն այսց
 Մարդկային աղբաց,
 Ի սաղնդիւնցայ
 Տղայոց անմեղաց,
 Յաղածրի դիմաց
 Եւ հնացեալ ալեաց,
 Յառոյգ սպասնեաց,
 Գիրգ յօրիորդաց,
 Յամուրից զուգաց,
 Ի հարց եւ յորդեաց.
 Ի հեղ հայեցուած
 Աչացն ծաւեաց,
 Ի ճապուկ ծըղեաց
 Վայելուչ շարժուած,
 Ի ձիգըս ձեռաց
 Յարուեստ ճարտարաց,
 Ի թինդ եւ յընթաց
 Ժիր գարշապարաց,
 Ի շունչ կենսաղբեաց
 Եւ շարժ երկթերթեաց
 Շըրթանց վարդենեաց,
 Ի շըրժման լեղուաց
 Թարգմանից վըտաց
 Հաղորդիչ կամաց,
 Ի հանճարոյ սլաց
 Յերգս երգահանաց
 Բան բանաստեղծաց,
 Ի գով գուսանաց
 Եւ հնչման դործեաց
 Օրհնեալ է Աստուած :

Եւ յամէն դարձուած
 Աըրտից նըրբաղբած,
 Ի խընդից հարուած
 Եւ յաղգման ցաւած,
 Ի հեշտըս շնորհաց,
 Յանձուելըս վըշտաց,
 Յայտըս խընդամած
 Եւ յարտօսըր աչաց,
 Յոգւոց խոնարհաց
 Յաղթըս անանկաց
 Որբոց եւ այրեաց,
 Ի վըստահ հայցուած
 Որոց խնդրեն ըղհաց
 Ի Հօրէն գըթած,
 Հայցմամբ բախողաց
 Ժըտելով Տէր՝ բանց
 Ըղգրուես սպարդեաց,
 Եւ հեղահայեաց
 Ի կերպս ամթլեած
 Պատհառուկ դիմաց,
 Աբարբառ կամաց,
 Օրհնեալ է Աստուած :
 Յամէն դեպք կենաց,
 Ի ծնունդս համաղբեաց
 Ի մահ նըմանեաց,
 Մէջ յիշատակաց
 Կրկին հայրենեաց,
 Ի սնար դամբանաց
 Ու ի գահոյս յօրկաց,
 Ի հրաշըս բաղնաց

Արքայ տաճարաց
 Խորհրդոց մեծաց
 Երկնախառն իրաց,
 Ի նախն իմացուած
 Ու ի հուսկ ըզբացուած
 Այսբան հանդիսաց,
 Յեւաներն յաստեաց
 Եւ ի մուսա անտեաց,
 Յեզր ամանակաց
 Յանգուռոս յաւիտեանց,
 Հանուրց ի սիլոսուած
 Եւ ի կատարած,
 Յանձառն զանդուած
 Անմահից յօգուած,
 Աէր համատարած,
 Ի ըիւր բանակաց,
 Նստու զմայլելեաց,
 Որք ի հօղածնաց
 Եւ որք յաննիւթաց,
 Եւ ի գերազանց
 Հանուրցն էակաց
 Կուսէն կուսանաց
 Որ ծընաւ զԱստուած,
 Օրհնեալ է Աստուած:
 Եւ յեռահիւսուած — Միարունկարզուած
 Յիւրուրոյն անձանց — Անթափանց լեզուաց
 Անհասըն մըտաց, — Զոր ինք լակ դիտաց,
 Ինքն ինքեամբ բուած, — Օրհնեալ է Աստուած:

Տ Ե Ր Ո Ւ Ն Ի

ՅԱՆԿ

Նախերդան 5

ԽՕՄԲ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Տէր, եթէ դըրթունս իմ բանաս 9
 Առաջին ձայն սրտի մեղապարտի 44
 Ո՛ւր ես 45
 Վերադարձ առ Աստուած 46
 Առ Աստուած 20
 Առ Յիսուս 22
 Դարձեալ ընդ Յիսուսի 26
 — — 28
 — — 52
 Առ Յիսուս ի մատան 56
 Առ օթակիցն իմ Յիսուս 44
 Առ խաչեան Յիսուս 48
 Առ խաչն սուրբ 54
 Առ սուրբ սիրտն Յիսուսի 55
 Իզձք հոգւոյ 54
 Օրհնութիւն տիեզերական սիրոյն Աստուծոյ 58
 Աղերս ծերոյ 67
 Մաղթանք մահու 70
 Պատրաստութիւն յօրհան 75

| | |
|------------------------------------|-----|
| Աղօթք Մանասէի | 85 |
| Խեչակ սրտի | 89 |
| Միայն է խաչի հանդիստ | 90 |
| Երկու վաշտքն երկնախումբք | 91 |
| Երանութիւնք Քրիստոսի | 95 |
| Հողիս յօժար է | 95 |
| Մէ Լալ | 98 |
| Եղիցին կամքքո | 100 |
| Սիրեցից զքեզ տէր | 102 |
| Յորդորակ տիրանուէր անձին | 103 |
| Յուշք առժամեայք | 108 |
| Հողի եւ սիրտ համաձայնք | 110 |

ՏՆՕՐԻՆ Ա. ԿԱՆՔ

| | |
|---|-----|
| Ի Գիշերի ծննդեան Տեառն | 113 |
| Պարերգ հովուաց ի ծննդեան | 117 |
| Ի յայնութիւն Տեառն | 129 |
| Յաստղն արեւելից | 155 |
| Ի Յիսուս եւ ի մանկունս Բեթղէհմի | 154 |
| Ի Յիսուս սպասանի | 156 |
| Յայլակիրսութիւն Տեառն | 159 |
| Ի կազանդս մարտի | 141 |
| Ի յարութիւն Ղազարու | 143 |
| Յոր բարեբանութեան | 147 |
| Յոսնլուայն | 151 |
| Ի վերնատունն | 155 |
| Անձնանուէր ընթրիք Յիսուսի | 155 |
| Ի Գեթսեմանի | 158 |
| Մահ Ամահին | 167 |
| Հայեցին ի նա յոր խոցեցինն | 169 |
| Բախէին զկուրծս եւ դառնային | 175 |
| Ի տապան Յիսուսի | 175 |

| | |
|---|-----|
| Առ հրեշտակն որ նստէր ի վիմին | 179 |
| Յարեաւ. չէ աստ | 181 |
| Աւետիք յարութեան Քրիստոսի | . |
| Քրիստոս յարեաւ ի մեռելոց | 18 |
| Օրհնեղք սիրոյ յարութեան Յիսուսի | 188 |
| Յաղթերգ 'ի Յարութիւն Յիսուսի | 191 |
| Ի համբարձումն Տեառն | 195 |
| Առ Հողին սուրբ | 199 |
| Ի տօն մարմնոց եւ արեան Յիսուսի | 201 |

ԿՈՒՍԱԿԱՏՆ

| | |
|---|-----|
| Ողջ Լէր Թաղուհի | 207 |
| Յանարատ յղութիւն եւ ի ծնունդ կուսին | 209 |
| Յանուն Տերամօր | 215 |
| Յընծայումն կուսին | 217 |
| Աւետումն | 220 |
| Յարտատուս կուսին | 224 |
| Ի ցաւ Տերամօրն | 226 |
| Ի նինջ կուսին | 250 |
| Ի վերափոխումն | 256 |
| Պահպանիչ Որդեգրաց | 240 |

ՏՕՆ Ա. ԿԱՆՔ

| | |
|--------------------------------------|-----|
| Ի նահատակս Քրիստոսի | 247 |
| Ի նոյնս | 249 |
| Ի յիշատակի ամենայն սրբոց | 251 |
| Յառաքելապետան | 262 |
| Ի յիշատակի սրբոյն Աւրիսեայ | 264 |
| Հառաչքի հաղորդութիւն սրբոց | 271 |
| Զանգաւք եկեղեցւոյ | 277 |
| Օրհնեալ է Աստուած | 279 |


1. Die erste Gruppe
2. Die zweite Gruppe
3. Die dritte Gruppe
4. Die vierte Gruppe
5. Die fünfte Gruppe
6. Die sechste Gruppe
7. Die siebte Gruppe
8. Die achte Gruppe
9. Die neunte Gruppe
10. Die zehnte Gruppe

1848

1. Die erste Gruppe
2. Die zweite Gruppe
3. Die dritte Gruppe
4. Die vierte Gruppe
5. Die fünfte Gruppe
6. Die sechste Gruppe
7. Die siebte Gruppe
8. Die achte Gruppe
9. Die neunte Gruppe
10. Die zehnte Gruppe

1849

1. Die erste Gruppe
2. Die zweite Gruppe
3. Die dritte Gruppe
4. Die vierte Gruppe
5. Die fünfte Gruppe
6. Die sechste Gruppe
7. Die siebte Gruppe
8. Die achte Gruppe
9. Die neunte Gruppe
10. Die zehnte Gruppe



« Ազգային գրադարան



NL0242310

« Ազգային գրադարան



NL0242309

